Ընդ հովանեաւ պաշտպանութեան քո ապաւինիմք, Սուրբ Աստուածածին

Կաթողիկէ Հավատք

ԱՇՈՑՔԻ ՀԱՅ
ԿԱԹՈՂԻԿԷՆԵՐԻ
ՀՈԳԵՒՈՐ ԹԵՐԹԸ

Բ մարտ, 2022

Ի՞ՆՉ Է ՊԱՀՔԸ ԵՒ ԾՈՄԸ

Հոգևոր կրթություն Մեծ Պահոց,
թեմատիկ շարք՝ «Ի՞նչ է պահքը» խորհրդածություն 1



Հայերենում «պահք» գրաբարյան ձևով բառի հիմքում «պահել» բառն է, որ Հայկազյան բառարանում բացատրվում է, հոգևոր գործածությամբ, ժուժկալության կամ զսպվածության իմաստով, երբ մարդ ինքն իրեն ետ է պահում է որոշ գործողություններ կատարելուց: Իսկ «ծոմ» բառը եբրայական ծագում ունի, որ նույն բառարանում բացատրվում է որպես առավել խիստ պահեցողություն՝ սննդի իմաստով, երբ օրական սնունդ ընդունում են միայն մեկ անգամ, այն էլ՝ միայն հաց և ջուր: Սա անապատական հայրերից և վանքերից եկած սովորություն է, որի հիմքում, իհարկե, աստվածաշնչյան սրբերի օրինակներն են և, մանավանդ, Տեր Հիսուս Քրիստոսի անապատում փորձության պատկերը, երբ քառասուն օր ու գիշեր ոչինչ չկերավ և չխմեց և իր ծոմապահությամբ հաղթեց սատանայի երեք փորձությունները:

Սովորաբար, պահքը և ծոմը հասկանում են առավելապես սննդի տեսակներից հրաժարման իմաստով, որը սակայն թերի է: Պահեցողությունը, հրաժարումը պետք է հասկանալ և կիրառել ոչ միայն սննդատեսակներից, այլև՝ այնպիսի սովորություններից կամ գործողություններից, որոնք մարդուն մղում են դեպի մեղքը կամ ուղղակի մեղք են: Պահքի իմաստը նախևառաջ մեղքի արմատները մոլախոտերի նման մեզանից հեռացնելն է:

Այդ արմատները հաճախ շատ խորն են, դրանք երկու տեսակ են՝

1.մարմնական և 2.բարոյական կամ գիտակցական:

Մարմնական պահք

Մեղքի մարմնական արմատները թաքնված են մարմնական ցանկությունների մեջ՝ որկրամոլություն, ցանկասիրություն, հեշտասիրություն, տռփանք, կրքեր: Այս ցանկությունները կամ հակումները առավել սրվում են և մարդկային հոգին ճնշում են, երբ մարմնի կարիքները մշտապես բավարարում ենք առատորեն՝ առանց սահմանափակումների, անսանձ ձևով՝ ինքներս մեզ համար գտնելով տարբեր պատճառաբանություններ կամ պարզապես ըստ հեշտասիրության կամ պահի քմահաճույքի: Եվ որքան շատ ենք տեղի տալիս մարմնական ցանկություններին, այնքան մեծանում է ախորժակը, ցանկությունը ամեն կերպ բավարարելը դառնում է անհրաժեշտություն, որը կամաց-կամաց անհնարին է դառնում կառավարել, սանձել: Դա նման է անսանձ և կատաղած ձիու, որ սլանում է առաջ՝ ըստ իր ցանկության և ոչ թե հեծյալի: Որպեսզի սանձենք այդ ձիուն՝ այսինքն մեր մարմինը, և այն ուղղորդենք մեզ ցանկալի ուղղությամբ, պետք է թուլացնենք նրան, զրկենք այն զորությունից, որ մեզ տանում է իր ետևից, որպեսզի մարմինը կանգ առնի երբ մեզ պետք է, որպեսզի հոգին զորանա: Սբ. Բարսեղ Կեսարացին բացատրում է, որ երբ զորացնում ենք մարմինը, տկարանում է հոգին, իսկ երբ տակարացնենք մարմինը, այն ժամանակ կզորանա հոգին: Սբ, Բարսեղը հիշեցնում է Սբ.Պողոսի խոսքերն՝ ուղղված կորնթացիներին. «Եթե մեր այս արտաքին մարդը տկարանում է, մեր ներքին մարդը նորոգվում է օրըստօրե… Ահա թե ինչու հաճույքով եմ պարծենում իմ տկարություններով, որպեսզի իմ մեջ բնակվի Քրիստոսի զորությունը: Դրա համար էլ գոհ եմ ի սեր Քրիստոսի իմ կրած տկարությունների…նեղությունների համար, որովհետև երբ տկար եմ, այն ժամանակ եմ զորավոր», Բ Կորնթ. 4, 16; 12, 9-10:

Դեռևս հին ժամանակներից անապատականներն ու վանականները հրաժարվում էին այնպիսի կերակուրներից և ըմպելիքներից, որոնք ուժեղացնում են մարմնի ցանկությունները, մթագնում մտքի աշխատանքը, դարձնում ծույլ, աղոթքի մեջ ցրված, մղում են դեպի հանգիստը և քունը և այդպիսով արգելակում հոգևոր զարգացումը, սրբության ջանքերը և, իհարկե, թուլացնում մեղքերի համար սգալու, ապաշխարելու կամքը: Իսկ Քառասնորդացը մեղքերի մասին առավելաբար խորհելու, դրանց համար լացելու և ապաշխարություն կատարելու ժամանակ է: «Պահքն է առաջնորդել բոլոր սրբերին դեպի Աստծուն հաճելի կյանք», գրում է Սբ. Բարսեղը:

Աստվածաշնչում կարդում ենք պահքի և ծոմի պտուղների մասին. սրբերը կարևոր պահերից առաջ պահք էին պահում: Մովսեսը Սինա լեռան վրա Աստծո օրենքը ստանալուց առաջ ոչ միայն ինքը երեք օր ծոմ պահեց, այլև ժողովրդին պատվիրեց ինքնամաքրվել և կանանց չմոտենալ երեք օր: Ապա քառասուն օր լեռան վրա մնաց՝ Աստծո ներկայության մեջ: Քորեբ լեռան վրա քառասուն օր ծոմ պահեց նաև Եղիան և արժանացավ Աստծուն տեսնելու երանությանը, հարություն տվեց սարեփթացի կնոջ մեռած որդուն, իր աղոթքով Աստված երեք տարի և վեց ամսի երկինքը փակեց, որ անձրև չտեղա և ստիպեց ամբողջ ժողովրդին ծոմ պահել: Հովհաննես Մկրտիչն ապրում էր պահեցողությամբ՝ ուտում էր միայն մորեխ և վայրի մեղր: Եվ վերջապես մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, Հովհաննեսից մկրտվելուց հետո քառասուն օր ու գիշեր ծոմապահությամբ անցկացրեց անապատում՝ իր համար որպես սնունդ ունենալով միայն «ամեն խոսք, որ դուրս է գալիս Աստծո բերանից»՝ Մտթ. 4, 1-10, որով և ջախջախեց օձի գլուխը, երբ սա ուզում էր օգտվել նրա

մարմնական սովից և խաբել նրան: Նոր մարը՝ երկրորդ Ադամը չխաբվեց սատանայից, իսկ առաջին Ադամը չպահեց միակ պահքը՝ չուտել բարու և չարի գիտության ծառից և կերավ արգելված պտուղը: Սբ. Բարսեղն ասում է, որ սա առաջին պահքն էր՝ Էդենի պարտեզի այս միակ պահքը, որ եթե մեր նախածնողները՝ Ադամն ու Եվան պահեին, մենք հիմա ստիպված չէինք լինի պահք պահելու: Բայց նրանց գայթակղության պատճառը միայն արգելված պտղի արտաքին հմայքը չէր, այլ շատ ավելի խորն էր՝ բարոյական, որի մասին կխոսենք հաջորդ քարոզի մեջ: Թող նոր կինը՝ Մարիամը, սովորեցնի մեզ միշտ հասկանալ չարի խարդախությունները և զգուշանալ մեղքից. ամեն:

ԳԻՏԱԿՑԱԿԱՆ ԿԱՄ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՊԱՀՔ

Հոգևոր կրթություն Մեծ Պահոց,
թեմատիկ շարք՝ «Ի՞նչ է պահքը» խորհրդածություն 2

Նախորդ խորհրդածության մեջ խոսում էին մարմնական պահեցողության մասին, իսկ այսօր խոսելու ենք բարոյական կամ գիտակցական պահեցողության մասին: Ի սկզբանե, առաջին մարդկանց մեղքը Էդենի պարտեզում ըստ էության ոչ թե մարմնական պահեցողության, այլ ավելի գիտակցական պահքը խախտելու դեմ էր: Չարի և բարու գիտության ծառից չճաշակելը, ինչպես Սբ. Բարսեղն է բացատրում, առաջին պահքն էր և այդ պահքն ուղղված էր գիտակցությանը կամ մարդու բարոյական վարքին, մարմնական չէր, թեև ներկայացավ ակնահաճո պտղի տեսքով: Կինը և տղամարդը չարի խաբեությամբ չկարողացան սանձել ավելին իմանալու և ավելին կարողանալու իրենց ցանկությունը, լսեցին օձի խաբեությունը և դրա մեջ տեսան խոստումը և հնարավորությունը՝ լինելու Արարչի նման ամենակարող, լինելու աստվածներ: Մարդն իր աստվածանմանությունը, որը պետք է արտահայտվեր նախևառաջ Աստծո կամքի հետ լիակատար ներդաշնակությամբ և հնազանդությամբ, բանականության և ազատության պատասխանատու գործադրությամբ, փոխարինեց կեղծ աստվածանմանության ցանկությամբ՝ լինել ամենակարող, բայց՝ առանց միակ Աստծո հետ մտերմության, ո՛չ Աստծո կողմից շնորհված զորությամբ: Մարդն ուզեց ամենագետ և ամենակարող լինել ինքնուրույն, և այստեղ էլ խաբվեց սատանայից. մարդը չի կարող լինել ինքնուրույն՝ մարդը կամ Աստծո հետ է, կամ՝ սատանայի, որովհետև արարած է՝ սահմանափակ կարողություններով. «Ով ինձ հետ չէ, իմ դեմ է, ով ինձ հետ չի հավաքում, ցրում է», ասում է Հիսուս: Սատանան մարդուն խաբեց և շարունակում է խաբել, թե իբր մարդը կարող է կանգնել ինչ-որ չեզոք գետնի վրա և լինել կատարելապես ինքնուրույն: Մինչդեռ իրական ինքնուրույնությունը սկսվում է աստվածային կամքի հետ ներդաշնակ ապրելուց: Ինչքան էլ պարադոքսալ թվա, բայց մարդը լիարժեք կերպով ինքնուրույն է կամ ազատ՝ միայն Աստծուն գիտակցաբար հնազանդվելով և Աստծո հետ մտերմության մեջ: Ամեն տեսակ այլ ինքնուրույնություն միայն պատրանք է և թակարդ, որից սկսվում է ստրկությունը մեղքին և սատանային, ինչպես եղավ Ադամի պարագայում: Ադամն ու իր կինը չկարողացան սանձել Աստծո նկատմամբ նախանձը, իշխանասիրությունը, փառամոլությունը, հպարտությունը: Այս բոլոր կրքերը բռնկվեցին ընդամենը առաջին հայացքից պարզ թվացող մի հետաքրքրասիրության կայծից, որ գցեց սատանան:

Գիտակցական պահքի առաջին քայլը հենց սա՛ է՝ կարողանալ սանձել ավելորդ հետաքրքրասիրությունը՝ այն ամենի նկատմամբ, ինչն արգելված է Աստծո կողմից և դեմ է մարդկային խղճին՝ աստվածատուր բնական բարոյական օրենքին: Մարդկային միտքը, մանավանդ, ադամական մեղքից հետո առավել հետաքրքասեր է չարի նկատմամբ և հեշտությամբ է տարվում, ինքնազսպվելն առավել բարդ է, հետևաբար, գիտակցական պահքը մեծ դժվարությամբ է մեզ տրվում: Մարմնական պահեցողությունը գալիս է օգնելու, քանի որ մարմնական կրքերը զսպելով՝ զորացնում ենք մարդկային միտքը և սիրտը, զորանում են գիտակցության սանձերը, միտքը գայթակղություններից շեղելու մեխանիզմները: Բայց անուամենայնիվ, մարդը մնում է անպաշտպան, եթե չապավինի աստվածային գերբնական զորությանը. «Ես եմ որթատունկը, իսկ դուք ճյուղերը: Ով իմ մեջ է բնակվում, և ես՝ նրա մեջ, նա շատ պտուղ է տալիս, որովհետև առանց ինձ ոչինչ անել չեք կարող», Հվի. 15, 5: Բնակվե՛նք Տիրոջ մեջ, և Տերը կբնակվի մեր մեջ, լինե՛նք Տիրոջ փրկարար նավի մեջ, Տիրոջ հետ միասին, և այս աշխարհի փոթորիկների և հոգեկան խռովի մեջ նավախելի մոտ քնած Քրիստոս Տերը կարթնանա և կխաղաղեցնի փոթորիկը և կասի. «Իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ … ձեր

սրտերը թող չխռովվեն և չվախենան», Հվի. 14, 27: Տիրոջ հետ միասին՝ Նրա նավակում, որ Իր Սուրբ Եկեղեցին է, ամեն բան կխաղաղվի, փոթորկի ջրերն էլ, որ թափվում են այդ նավակի մեջ՝ ամեն մեղքն ու կեղտը, որ լցվում են նաև Եկեղեցին, Տիրոջ զորությամբ ոչինչ չեն կարողանա մեզ անել. «Ձեր գլխից մի մազ իսկ չի կորչի, և ձեր համբերությամբ պիտի շահեք ձեր հոգիները», Ղկ. 21, 18: Եթե Աստված մեր կողմն է, ո՞վ կլինի մեզ հակառակ, աղաղակում է սաղմոսերգուն: Եթե Քրիստոսին ընդունում ենք մեր սրտերի մեջ՝ Ամենասուրբ Հաղորդությամբ, մեզ ի՞նչ կարող է անել չարը, մենք այլևս զորավոր ենք Քրիստոսի՛ ներկայությամբ՝ մեր մեջ: Մնում է, Տիրոջ խոսքի համաձայն, լինել համբերատար:

Համբերատարությունը, թերևս մի առաքինություն է, որ կարող ենք առավել Աստծո օգնությամբ զարգացնել հենց պահեցողության ժամանակ: Այսօրվա առաքելական ընթերցվածում Սբ. Հակոբոս առաքյալը հորդորում է լինել համբերատար՝ մշակի նման, որ սպասում է իր բերքին, մինչև անձրև տեղա՝ Հկբ. 5, 7-8: Այդպես մեր հոգիների մեջ անձրևի նման տեղում է աստվածային շնորհը, և Քրիստոսի արևը հասունացնում է մեր սրբության պտուղները: Հակոբոսը կոչ է անում նմավել մարգարեներին, մանավանդ՝ Հոբ երանելուն, որի մասին էլ կուզեմ խոսել մի քանի խոսք և նրանով ավարտել այս խորհրդածությունը:

Հոբի գիրքն Աստվածաշնչի ամենախորհրդավոր գրքերից մեկն է, որ շատ բարդ է ընկալել: Այն խոսում է մի արդար մարդու տառապանքի մասին, որ ոչնչով չէր վաստակել այն դաժան հարվածները, որոնց ենթարկվեց սատանայի քմահաճույքով: Հոբն այնքան օրինակելի մի մարդ էր, որ նրան գովում է Տերը՝ սատանայի առջև՝ որպեսզի ամաչեցնի սրան: Սատանան նախանձելով՝ առաջարկում է Աստծուն՝ թույլ տալ իրեն՝ չարչարել Հոբին: Սատանան մտածում էր, որ Հոբը, կորցնելով ամեն ինչ և տառապելով, կընդդիմանա Տիրոջը և կհայհոյի: Աստված թույլատրեց սատանային չարչարել Հոբին, որովհետև գիտեր, որ այդ չարիքից Ինքը բարիք է հանելու. Հոբն իր արդարությամբ ամաչեցնելու է սատանային: Այդպես էլ եղավ: Հոբը զրկվեց ամեն ինչից՝ իր բոլոր զավակներից և հարստությունից, ծանր հիվանդացավ, անասելի տառապանքի բեռը ճնշում էր նրան: Նույնիսկ կինն իր դեմ դարձավ, երեք ընկերները դարձան գործիք՝ չարի ձեռքին՝ մեղադրելով Հոբին ծանր մեղքերի մեջ, որոնք, իբր պատճառ եղան այդպիսի դառն չարչարանքների: Հոբը, չնայած իր կատարյալ միայնությանը և աննկարագրելի տառապանքին, լքվածությունը, համբերեց ի սպառ, ըստ Տիրոջ խոսքի, երբեք չընդդիմացավ Աստծո դեմ՝ մեղադրելով անարդարության մեջ, երբեք չկորցրեց իր հավատքը, պահեց իր միտքը հստակ և լեզուն՝ զուսպ, ճշմարտապես գիտակցական մի պահք պահեց՝ բազմաթիվ գայթակղությունների և բողոքի առիթների դիմաց: Հոբն իր խոնարհությամբ կանգնեց Աստծո դատաստանի առջև և անվերապահորեն ընդունեց, որ ամեն բան Աստծուց է տրվում մարդուն, նաև՝ մարդուն տանջող բոլոր հարցերի պատասխանները: Վերջում Հոբն ասաց Տիրոջը. «Արդ, լսի՛ր ինձ, Տեր, թող ես էլ խոսեմ, հարցնեմ քեզ և սովորեցրու՛ ինձ: Սրանից առաջ ես ականջներովս էլ լսել քո մասին, բայց հիմա աչքերս տեսան քեզ: Այդ պատճառով արհամարհեցի անձս և մաշվեցի. ինքս ինձ հող ու մոխիր եմ համարում», Հոբ, 42, 4-6: Տառապանքը Հոբին ցույց տվեց իր փոքրությունը՝ Աստծո մեծության առջև, իր ամբողջ ունեցածի՝ Աստծուց կախված լինելը, իր հող ու մոխիր լինելը, ինչպես այս մասին հիշում ենք Պահքի սկզբում՝ Մոխրոց երկուշաբթին, երբ սկսում ենք ապաշխարության քառասնօրյա ընթացքը: Տառապանքը, կյանքում մեզ բաժին հասած դժվարությունները հոբի նման համբերությամբ և զսպվածությամբ տանելը մեզ մոտեցնում է ճշմարիտ ինքնաճանաչմանը և արժանացնում Աստծուն տեսնելուն. «Երանի՜ սրտով մաքուրներին, որովհետև նրանք Աստծուն պիտի տեսնեն», Մտթ. 5, 8, ասում է Տերը Լեռան քարոզում: Հոբը՝ որպես արդար տառապյալ, մի նախապատկեր է Հիսուս Արդարի մասին, որ տառապեց՝ առանց մեղքի լինելով և երբեք չընդվզեց Աստծո կամքի դեմ և ասաց. «Թող լինի ոչ թե ինչպես ես եմ կամենում, այլ ինչպես դու»: Հոբը վերջում արդարացավ և Աստված նրան բազմապատիկ անգամ վերադարձրեց իր ունեցածը՝ զավակներով հանդերձ և պատվիրեց աղոթել իր երեք ընկերների փրկության համար, և Հիսուս արդարացավ՝ իր Խաչով մահվանը հաղթելով, համբերեց ի սպառ և իր մահով փրկեց մեզ բոլորիս: «Համբերեցե՛ք և դուք, ամրացրե՛ք ձեր սրտերը, քանի որ Տիրոջ գալուստը մոտ է», Հկբ. 5, 8:

ՔՐԻՍՏՈՆՅԱՆ՝ ՄԻԱՄԻՏ՝ ԱՂԱՎՆՈՒ ՆՄԱՆ ԵՒ ԽՈՐԱԳԵՏ՝ ՕՁԻ ՊԵՍ

Հոգևոր կրթություն Մեծ Պահոց,
թեմատիկ շարք՝ «Ի՞նչ է պահքը» խորհրդածություն 3

Նախորդ անգամ խոսում էինք գիտակցության պահեցողության մասին եւ հիշեցինք Հոբ Երանելուն՝ այդ բազմավաստակ տառապյալին, որ խաղալիք դարձավ սատանայի ձեռքին, բայց ի վերջո ջախջախեց այդ խորամանկ օձի գլուխն իր անհողդողդ արդարամտությամբ: Հոբը մեզ համար մի տիպար է մեկի, ով տառապանքով եւ համբերատարությամբ շահեց սեփական հոգին, ըստ Տիրոջ խոսքի. «Ձեր համբերությամբ պիտի շահեք ձեր հոգիները», Ղկ. 21,19: Հոբը, մյուս մարգարեները, Տեր Հիսուս Քրիստոս Ի՛նքը եւ Իր բազում աշակերտները, որոնք Իր անվան համար ընդունեցին նահատակության պսակը եւ արյամբ վկայեցին Աստծո հանդեպ իրենց նվիրման մասին,

համբերատարությամբ կրեցին իրենց տառապանքը, քանի որ իրենց մեջ՝ որպես գանձ, մշտապես եւ անխախտ համոզմունքով պահում էին նույն միտքը՝ ՄԻԱՅՆ ԱՍՏՎԱԾ եւ ՄԻԱՅՆ ՀԱՆՈՒՆ ԱՍՏԾՈ.

սա նշանակում է հետեւյալը.

-միայն Աստված է մշտապես ճիշտ,

-միայն Աստծո ձեռքերում է մարդու ամբողջ երջանկությունը՝ անկախ այս պահին մարդուն բաժին հասած նեղություններից,

-միայն Աստված կարող է հանել մարդուն մահվան գբից եւ ստվերների աշխարհից, ինչպես աղոթում է սաղմոսերգուն,

-միայն Աստծուն կարելի է վստահել մաբողջությամբ,

-միայն Աստծուց կարելի է ստանալ բոլոր հարցերի պատասխանները,

-ինչ ուզում է լինի, երբե՛ք-երբե՛ք չմեղադրել Աստծուն՝ մեզ բաժին հասած փորձությունների, դժբախտությունների համար, քանի որ

-Աստված բացարձակ Բարին է եւ Ինքնին Սերը. «Աստված սեր է», Ա Հվի. 4, 10:

Միամտություն և գառան խոնարհություն՝ Աստծո առաջ. ահա՛ այսպես կարելի է բնորոշել նրան, ով ապրում է այս սկզբունքների համաձայն: Սա ճիշտ Քրիստոսի պատվիրանն է՝ աշակերտներին, երբ նրանց ուղարկում է վկայելու Իր մասին.

«Ահա՛, ես ձեզ ուղարկում եմ՝ որպես ոչխարներ՝ գայլերի մեջ, այսուհետ խորագետ եղե՛ք օձերի պես և միամիտ՝ աղավնիների նման», Մտթ. 10, 16:

Աստծուն հաճելի պահեցություն կատարելու համար, կարծում եմ, յուրաքանչյուր քրիստոնյա կարիքն ունի հենց ա՛յս սկզբունքների՝ խոնարհություն և միամտություն. խոնարհություն՝ ինքն իր հանդեպ ազնիվ հայացք գցելու և տեսնելու սեփական մեղքերը, սեփական փոքրությունը, թշվառությունն՝ առանց աստվածային օգնության և միամտություն՝ բառի հոգևոր իմաստով, որի մասին ուզում եմ առավել ծավալել մեր այս խորհրդածությունը:

«Միամիտ՝ աղավնիների նման». ասում է Տերը: «Հայկազեան» բառարանում Մտթ. 10, 16-ում օգտագործված «միամիտ» բառը բացատրվում է հետևյալ հոմանիշներով, որոնք համահունչ են հունարեն բնօրինակին և լատիներենին՝ անխառն, պարզ, անկեղծ մտքով կամ բարքով, պարզամիտ, անմեղ, աննենգ, անխարդախ, ողջամիտ (լատ.՝ sincerus, purus, simplex, integer): Կան նաև դարձյալ ավետարանական օգտագործմամբ՝ փոքր-ինչ այլ, բայց մեր խորհրդածության համար առավել օգտակար այլ իմաստներ՝ աներկմիտ, աներկբա, մտերիմ, հավատարիմ: Այս իմաստներից ո՞րը հատկապես ի նկատի ուներ մեր Տերը, այս հարցին Եկեղեցու սուրբ հայրերը տարբեր, բայց նման մեկնություններ են տալիս: Անկասկած, միամտությունը Տերն այստեղ օգտագործում է ոչ թե հեշտ խաբվելու, անփորձության, հիմարության իմաստով, որովհետև նախ ասում է՝ «խորագետ եղե՛ք օձերի պես...»: Ուրեմն, Տերն ուզում է, որ իր աշակերտները միաժամանակ լինեն և՛ խորագետ՝ տեսնելու համար չարի բոլոր որոգայթները, քողարկված խաբեությունները և՛ միաժամանակ աներկմիտ՝ մեկ և նույն մտքով, հավատարիմ, որ է՛ անկեղծ նվիրումը Տեր Հիսուս Քրիստոսին, սրբությունը և նմանությունը Քրիստոսին՝ ընդհուպ մինչև մահ, ճիշտ Հիսուսի նման, անշեղորեն գնալով նրա խաչի ճանապարհով՝ մշտապես և անփոփոխ կերպով ունենալով նույն միտքն ու կամքը, նույն սիրտը՝ ընծայաբերված, պատարագված Տիրոջը: Լինել մեկ մտքի հետևորդ և մարմնացում, մեկ մտքով ապրող, գառան նման անմռունչ հետևելով քաջ և միակ ճշմարիտ Հովվին՝ միշտ կարողանալով զանազանել Նրա քաղցր, ջերմ և հոգատար ձայնը՝ այս աշխարհի խառնակ թոհուբոհի և բազմատեսակ հրավերների մեջ, որոնց հետևում հաճախ կանգնած է սատանան:

Սա է ճշմարիտ պահքը՝ պահել միևնույն միտքը, և ոչ թե ուրիշ մտքերի ետևից գնալ, ինչպես պատմության ընթացքում գնացին շատ հերձվածողներ: Պահել միայն Քրիստոսի՛ միտքը, ըստ Սբ. Պողոսի խոսքի՝ «Խորհեցե՛ք այն, ինչ Հիսուս Քրիստոսի մեջ է...», Փիլ. 2, 5: Քրիստոնյան պետք է ինքն իրեն և աշխարհին նայի Քրիստոսի նման և Քրիստոսի հետ միասին՝ նույն մտքով, ինչպես մտածում է Հիսուս, և ոչ թե՝ ուրիշի՝ օտարի, այսինքն սատանայի մտքով, որ մտածում է միայն Աստծո ստեղծածն ավերելու մասին և, նախևառաջ, գողանալու նրանց սրտերն ու մտքերը, ովքեր ջանում են ամբողջովին իրենց կամքն ու միտքը նույնացնել Հիսուսի կամքի և մտքի հետ: Այսպիսիները ամենավտանգավորն են սատանայի համար:

Մեզ ամեն վայրկյան սպասում է հավատքի պատերազմը, որտեղ ունենք առաքելություն՝ պահել, հսկել, «մեր հավատքի վահանով և Աստծո խոսքի սուսերով» (Եփ. 6, 16-17) պաշտպանել մեր միամտությունը, մտքի պարզությունը, սրտի մաքրությունը, հոգու աղքատությունը, ըստ երանիների՝ Մտթ. 5, 1-12: Սա նշանակում է Հիսուսի նման ունենալ միայն մեկ միտք կամ նպատակ՝ սիրել ի սպառ և սիրելո՛վ բարձրանալ առ Աստված, Հիսուսի նման լինել պարզ ու ազնիվ՝ ինքներս մեզ հետ, մարդկանց հետ և Աստծո հետ:

Սերը պարզ է, բարությունը պարզ է, սրբությունը պարզ է, բայց չարի համար մնում է անհասկանալի, ինչպես և նրանց համար, ովքեր սիրում են իրենց ես-ը բարդացնել, ուռճացնել, լինել «աստվածների նման», ինչպես օձը խաբեց Եվային,

բայց քրիստոնյային միայն մեկ բան է հարկավոր, ըստ Տիրոջ խոսքի, որ ասաց Մարթային՝ նրա քրոջ Մարիամի մասին, որ նստել էր իր տերունական ոտքերի մոտ և ամեն ինչ մոռացած՝ լսում էր Տիրոջը, մինչ Մարթան զբաղված էր ամեն տեսակ կենցաղային գործերով. «Մարթա՛, Մարթա՛, դու շատ բաներով ես զբաղված և մտահոգվում ես, բայց մեկ կարևոր բան է պետք. Մարիամն ընտրել է լավագույն մասը, որը նրանից չի վերցվի», Ղկ. 10, 41-42:

Ա՛յս է մտքի և սրտի պահքը՝ միշտ բաց լինել Աստծո խոսքի և շնորհի առաջ՝ միամտությամբ և խորագիտությամբ.ամեն:



ՊԱՀԻ՛Ր ԼՌՈՒԹՅՈՒՆ, և ԼՌՈՒԹՅՈՒՆԸ ԿՊԱՀԻ ՔԵԶ

Հոգևոր կրթություն Մեծ Պահոց,
թեմատիկ շարք՝ «Ի՞նչ է պահքը» խորհրդածություն 4

Մարթայի քույր Մարիամը Բեթանիայի իրենց տան մեջ հյուրընկալեց Տիրոջը, նստեց նրա ոտքերի մետ և լռության պահելով՝ լսում էր Նրան: Նա ընտրել էր լավագույն մասը, որը նրանից չպիտի վերցվեր, ինչպես բացատրեց Հիսուս Մարթային: Այս դրվագով ավարտեցինք երեկվա մեր խորհրդածությունը: Այսօր առաջարկում եմ մտածել լռության մասին՝ որպես բարոյական և գիտակցական պահքի մի կարևոր ճանապարհի, որով անցել են բոլոր սրբերը:

Հիսուս ուղարկեց իր աշակերտներին աշխարհ՝ որպես միամիտ աղավնիների՝ պահելու մեկ միտք՝ ամեն ինչից առաջ՝ Աստված և ամեն ինչ՝ Աստծո համար: Այս մասին խորհեցինք նախորդ քարոզի մեջ: Այս միտքը՝ որպես մեր կյանքի իմաստ և նպատակ պահելու և ըստ այդմ մեր կյանքը կառուցելու համար հարկավոր է անընդհատ անդրադառնալ մեր «ներքին, հոգևոր մարդուն»՝ քննելու մեր հոգևոր վիճակը, մեր մեղքերն ու սխալները, մեր «ես»-ը, մեր հարաբերությունը Աստծո հետ: Այս ամենը պետք է անել հնարավորինս կատարյալ լռության մեջ: Այդ լռությունը պետք է կարողանանք հաստատել նախ մեր սրտերի մեջ. լռություն, որը պետք է մեզ առաջնորդի դեպի Քրիստոսի խաղաղությունը: Որպեսզի Քրիստոս մեզ պարգևի Իր աստվածային աներկրային, անանց խաղաղությունը պետք է մեր մեջ տեսնի սեփական «ես»-ի լռեցումը, Իրեն լսելու ցանկությունը:

Անապատական հայրերից մեկն ասում էր. «Ո՜վ լռություն՝ սանդուղք դեպի երկինք»:

Հիրավի, անապատական հայրերի, սրբերի համար ներքին լռությունը, ճգնարանը, խուցը հնարավորություն էր սրբության բարձունքներ մագլցելու, մտքով ու հոգով դեպի Երկինք թռչելու, աստվածային կյանքին հաղորդակցվելու նախաճաշակումն ունենալու:

Նույն հայրերից Մովսեսը, որ մի նախկին ավազակապետ էր, երբ խնդրեցին մի խոսք ասել, պատասխանեց. «Գնա՛ փակվիր քո խցում և խուցը քեզ կսովորեցնի ամեն ինչ»: Սրբերը վստահ էին, որ լռության մեջ է, որ Աստված շնորհում է հեզության, խոնարհության, իմաստության առաքինությունները.

«Ո՜վ լռություն՝ առաքինությունների մայր»:

Սրբերը սովորեցնում էին, որ կրոնավորի գործը պետք է լինի ամեն ժամ սեփական մեղքերի համար լացելը, իսկ դա կարելի է անել միայն լռության մեջ, դրա համար էլ ասում է. «Ո՜վ լռություն՝ ապաշխարություն ընդունող, ո՜վ լռություն՝ մեղանչածների հայելի, որ ցույց ես տալիս մարդկանց իրենց գործերը: Ո՜վ լռություն, արցունքների և հառաչանքների նպաստացուցիչ, նվաստության տաղավար, ո՜վ լռություն, հոգու փայլեցուցիչ»:

Զղջումը, արցունքները լվանում և փայլեցնում են մարդու հոգին և սիրտը, որովհետև Աստված շտապում է օգնության դեղը դնելու մեր բեկված սրտերի վրա, երբ ապավինում ենք նրան՝ սաղմոսերգուի պես. «Այս աղքատն աղոթեց Տիրոջը, և Տերը լսեց սրան, իր բոլոր նեղություններից փրկեց սրան»:

Լռությունն Աստծո առաջ՝ աղոթքի մեջ, օգնում է ինքդ քեզ նայել Հիսուսի աչքերով, մանավանդ, երբ խաչելության առջև ես և դիտում ես Մարդու Որդու տառապանքը, որ քեզ համար է անձնապես: Հիսուս լուռումունջ է թվում, բայց խոսում է Իր տառապանքի ծոցից, Նրա խոցված Սուրբ Սիրտը Խաչի կենտրոնից աղաղակում է. «Ես սիրու՛մ եմ քեզ: Ես իմ խաղաղությու՛ն եմ տալիս քեզ: Ոչ այնպես ինչպես այս աշխարն է տալիս»: Երբ գիտակցում ես, որ Հիսուս սիրում է քեզ իր աստվածային, գերմարդկային սիրով, ներքին արտասուքներդ զսպելու, ամաչելու կարքի այլևս չունես, որովհետև կա Մեկը, ով քեզ հասկանում է ամբողջությամբ: Երբ նայում ես ինքդ քեզ՝ քեզ համար տառապած Հիսուսի հետ միասին, զգում ես, որ այլևս միայնակ չես, լռության մեջ զգում ես Հիսուսի խաչից հորդող ջերմությունը, քնքշությունը, սերը, հարազատությունը, հույսը, որը երբեք չի ամաչեցնում, ինչպես գրում է Պողոսը:

Այսպես, լռության մեջ խոսում է Տերը՝ Իր խաչի բարձունքից, Սիրո բարձունքից, դեպի ուր ձգում է յուրաքանչյուրիս, ըստ իր խոսքի. «Երբ ես բարձրանամ երկրից, ամենքին դեպի ինձ կձգեմ», Հվի. 12, 32: Այսպես, լռությունը, որի մեջ ամփոփվում ես, հանկարծ աստվածային տնօրինությամբ դառնում է հոգու վեհացման, դեպի երկնային բարձրունքները վերացման հնարավորություն, հոգևոր թռիչքի հնարավորություն, երկրային կենցաղում չտեսնված խաղաղության հնարավորություն: Այսպես, լռությունը ծնում է հրեշտակային մի նուրբ երաժշտություն, մի չլսված օրհներգություն, որ պարուրում է հոգիդ և միտքդ, որոնք անկեղծ արտասուքով զուլալված և նրբացած՝ պատրաստ են վայելելու այդ երաժշտությունը: Հրեշտակներն իջնում են ուղիղ սրտիդ և մտքիդ խորքը՝ պարգևելով ապահովության, վստահության, հույսի և խաղաղության վերերկրային մի իրականություն, որ առավել է քան մի միտք կամ զգացում: Դա հանդիպում է Հիսուսի հետ, դա գաղափարային էքստատիկ վիճակ չէ, դա զգացմունք չէ, այլ՝ իրականություն: Այսպես՝ լռության մեջ, դառնում ես մի սրբված բայց անարժան սկիհ՝ մի գավաթ, որի մեջ Քրիստոսի լցնում է առատորեն իր Սուրբ Հոգին:

Լռության մեջ մնալը նշանակում է մնալ Աստծո ներկայության մեջ: Լռությունը օգնում է առավել լավ հասկանալ ինքդ քեզ, ճանաչել քեզ որպես Աստծո պատկեր կամ որպես հայելի, որի մեջ արտացոլվում է Աստծո պատկերը. արարած, որը ստեղծված է հավիտենության համար, բանականություն, որը ստեղծված է իր Արարչին ճանաչելու և օրհներգելու համար, ազատություն, որը ստեղծված է աստվածային ազատությամբ ապրելու և սիրելու համար:

Այս իրականությանը պետք է վերադառնալ հաճախ՝ ամեն օր կամ օրական մի քանի անգամ, որովհետև այդտեղ՝ լռության մեջ, մենք վերագտնում եւ պահում ենք հետևյալ անխախտ ճշմարտությունները.

-ես Աստծո զավակ եմ, ես ստեղծված եմ Աստծո հետ միասին ապրելու համար,

-Հիսուս մեզ վերադարձնում է որդիության իրավունքն իր Խաչով և Հոգով, որով բացականչում ենք «Աբբա՛, Հա՛յր»:

Հիսուս ևս հաճախ բարձրանում էր մի բարձր տեղ և առանձին՝ լռության մեջ, աղոթում Հորը: Այդպես Նա ջախջախեց օձի գլուխը:

Ուրեմն, աղոթական լռություն պահելով՝ մենք պահում ենք մեր ճշմարիտ ինքնությունը և վերաբնակեցնում այն Քրիստոսի մեջ և նրա միջոցով՝ հավիտենական Է-ի մեջ:

Ի վերջո, ի՞նչ ենք պահում. մեր անվերջակետ երջանկության իրավունքը:

ԴՐԱԽՏԻՑ ԴԵՊԻ ԱՆԱՊԱՏ ԵՒ ՀԱԿԱՌԱԿԸ. ԱԴԱՄԻ ԱՐՏԱՔՍՈՒՄԸ

Բ կիրակի Մեծ Պահոց

Մեծ Պահքի երկրորդ կիրակին կոչվում է «Արտաքսումն Ադամայ ի դրախտէն», այսինքն՝ մարդու արտաքսումը դրախտից, որ տեղի ունեցավ մեր նախածնողների՝ Ադամի եւ Եվայի մեղքի պատճառով, որն էր անհնազանդությունը Աստծո կամքին: Եկե՛ք մտածենք այս պատմության շուրջ, որ կարդում ենք Ծննդոց գրքի 3-րդ գլխում:

Աստված դրախտի պարտեզում տնկեց երկու ծառ, մեկը կենաց ծառն էր, այսինքն կյանք տվող ծառը՝ որպես կյանքի աղբյուր, ինքնին կյանքի՝ հավիտենական կյանքի աղբյուր, որովհետեւ այդ ժամանակ դեռեւս մեղքի հետեւանքով մահը աշխարհ չէր մտել: Կենաց ծառը մարդուն միշտ հիշեցնում էր Աստծո հետ միասին հավիտենական կյանք ունենալու երանության մասին: Պարտեզում Աստված տնկեց նաեւ բարու եւ չարի գիտության ծառը: Սա ոչ թե մարդուն գայթակղելու կամ փորձելու համար էր, որովհետեւ Աստված մարդուն չի փորձում (Յակ. 1, 13), այլ մարդու ազատության միակ սահմանափակումը կամ մարդու ազատության միակ հնարավոր կորուստը, մի սահման, որը հատելը կնշանակեր կորցնել այն ամբողջ երջանկությունը, որի մեջ ապրում էր մարդ արարածը: Իսկ այդ երջանկությունը հիմնված էր երեք կարեւոր սկզբունքների վրա: Առաջինը Աստծո կամքի հետ մարդու կամքի լիակատար ներդաշնակությունն էր: Դա նշանակում էր նաեւ մարդու լիակատար ներդաշնակությունն ինքն իր հետ, մերձավորի հետ եւ ամբողջ արարչագործության հետ: Այդ ներդաշնակությունը հիմնված էր աստվածային կամքի առաջ մարդու անվերապահ եւ գիտակից հնազանդության վրա, որ երկրորդ սկզբունքն է: Հենց այս հնազանդության մեջ էր մարդը լիարժեք ազատ, այսինքն՝ մարդը իր ազատությունը լիովին կարող է ապրել եւ վայելել՝ միայն ու միայն Աստծուն հնազանդվելով: Ազատությունն էլ երրորդ առանցքային սկզբունքն էր: Դրախտում մարդ արարածն իր ազատությունը չէր օգտագործում նաեւ չար գործերի համար, ինչպես եղավ մեղսագործությունից հետո, այլ այդ ազատությունը իր ամբողջ անսահմանափակությամբ եւ անասելի ներուժով (քանի որ մարդը մասնակից էր աստվածային ազատության մեջ), օգտագործվում էր միայն ու միայն բարին գործելու համար, Աստծուն, մերձավորին ու արարչագործությունը առավել շատ սիրելու համար, երկրին տեր կանգնելու եւ պահպանելու համար, մշակելու եւ երկրի բարիքներով Աստծուն գոհություն մատուցելու համար: Եվ այս ամենի պատճառը այն էր, որ մարդը չգիտեր, թե ինչ է չարը:

Աստված պատվիրել էր չուտել չարի եւ բարու գիտության ծառից՝ զգուշացնելով, որ դա կարող է հանգեցնել մահվան. «Բարու եւ չարի գիտության ծառից մի՛ կերեք, որովհետեւ այն օրը, երբ դրանից ուտէք, մահկանացու կը դառնաք», Ծննդ. 2, 17: Այսինքն, չարի մասին գիտությունն արդեն իսկ նշանակում էր մեռնել, կորցնել այդ ամենը, ինչ մարդն ուներ դրախտում: Մարդ արարածը թեեւ ստեղծված էր Աստծո պատկերով եւ նմանությամբ՝ այսինքն բանական էր ու ազատ եւ ուներ հավիտենական կյանքի փափագը, բայց թույլ էր եւ ենթակա՝ չարով գայթակղվելու, կարող էր խաբվել սատանայից, ինչպես եւ եղավ: Աստված մարդուն ուզում էր պաշտպանել չարից, բայց եւ ուզում էր, որ մարդը պատասխանատվությամբ մոտենա իր ազատությանը, որը շնորհված էր իրեն որպես մի նվեր:

Երբ սատանան օձի տեսքով մոտեցավ կնոջը, իր հարցով առիթ տվեց կնոջը մտածելու Աստծո պատվիրանի մասին, Աստծո խոսքերին քննադատաբար մոտենալու առիթ տվեց: Կինը սկսեց մտածել եւ ասաց Աստծո խոսքերը, թե երբ այդ ծառից ուտեն, կմեռնեն: Սատանան ասաց. «Չէք մահանա, որովհետեւ Աստուած գիտեր, որ այն օրը, երբ դրանից ուտէք, կը բացուեն ձեր աչքերը, եւ դուք կը լինեք աստուածների նման՝ կիմանաք բարին ու չարը», Ծննդ. 3, 5: «Կը լինէք աստուածների նման», սա՛ է այն բանալի խոսքը, որով հասկանում ենք, թե ինչո՛վ գայթակղվեցին առաջին կինը եւ տղամարդը, այսինքն՝ լինել աստվածներ կամ Աստծո նման, նշանակում է լինել սեփական կյանքի տերը, լինել արարիչ, լինել հեղինակ սեփական ինքնության եւ նույնիսկ տիեզերքի, ունենալ անսահմանափակ իշխանություն, զորություն, լինել ամենակարող, այլեւս կախում չունենալ ոչ ոքից. այսպես էր առաջին կինը պատկերացնում աստվածների պես լինելը, այսինքն միայն ինքնիշխանությունն ու ազատությունը՝ առանց սիրո եւ խոնարհության, առանց անձնվիրության, առանց հոգատարության, առանց պատասխանատվության:

Ցավոք, այսպես է մարդկությունը, մեծ մասամբ, ընկալել իշխանությունը պատմության ընթացքում եւ այսօր: Այսինքն այսօր էլ Աստծո պատվիրանները արհամարհելը ենթադրում է ունենալ այդպիսի իշխանություն, բայց առանց սիրո: Այսօր էլ մարդ արարածը թեեւ սիրում է կոչվել քրիստոնյա, բայց չի սիրում հնազանդվել Աստծուն, այլ գերադասում է իր սեփական օրենքներն ու կյանքի սկզբունքները, որոնք հաճախ թելադրվում են այն նույն հնագույն օձի կողմից՝ ամենագեղեցիկ եւ ակնահաճո ձեւերով, նույնիսկ շատ ավելի գեղեցիկ, քան դրախտի արգելված ծառի պտուղն էր, որ գերեց Եվային: Եվան իր որոշումը կամ անկումը կիսեց Ադամի հետ, Ադամը վստահեց Եվային, նրանց միջեւ առաջ եկավ մի նոր միություն, որն արդեն այն նույն միությունը չէր, որը հիմնված Աստծո կամքի հանդեպ հնազանդության վրա: Այսինքն, մարդկային ընտանիքի այն առաջնային ձեւը, որտեղ տղամարդու եւ կնոջ միությունը հիմնված էր Աստծո եւ ամբողջ արարչագործության հետ իրենց միության կամ, ավելի ճիշտ կլինի ասել, հաղորդության, վրա, այլեւս կորսված էր: Մարդկային առաջին ընտանիքը նախընտրեց ի՛ր միությունը՝ անկախ Աստծուց եւ արարչագործությունից, նախընտրեց ոչ թե իր միության մեջ արտացոլել Աստծո եւ արարչագործության միությունը, որը մարդկային ամուսնական զույգի առաջնային առաքելությունն է, այլ կառուցել սեփական միությունը՝ հիմնվելով իր գիտելիքների վրա: Իսկ այսպիսի միությունը, որը հիմնված է բացառապես մարդկային պատկերացումների վրա, չի կարող լիարժեք, ինքնանվեր սիրո եւ նոր կյանքի օրրան լինել, վաղ թե ուժ կազմաքանդվում է կամ այլափոխվում պարզապես համակեցության, ինչը մարդկությունը տեսել է, եւ այսօր առավել մեծ ինտենսիվությամբ եւ ողբերգականությամբ ենք տեսնում. «ընտանիք» հասկացության ընկալումն ինքնին այլափոխված է, որովհետեւ մարդը վերջնականորեն վճռել է լինել ինքն իր տերը, ինքն իրեն աստված է հռչակում:

Միմյանց հետ, Աստծո եւ բնության հետ անարատ ներդաշնակության կորստյան հետեւանքը եղավ այն, որ Ադամն ու Եվան ձեռք բերեցին մի կեղեքող «նվեր»՝ ամոթը.

«Երկուսի աչքերն էլ բացուեցին, եւ նրանք հասկացան, որ մերկ են» (Ծննդ. 3, 7):

Նրանք մերկացել էին իրենց շնորհներից, իրենց երջանկությունից, հավիտենական կյանքից, Աստծո ներկայությունից եւ իրենք մարմիններն հանկարծ սկսեցին ընկալել որպես Աստծուց եւ ընդհանուր ներդաշնակությունից զատ մի երեւույթ՝ իրենց այլեւս անկառավարելի ցանկություններով, որոնց համար ամաչում էին: Այսպիսով, նրանք իրենց երջանկությունը փոխարինեցին ամոթի մշտական զգացմամբ, հոգեւոր եւ բարոյական մերկությամբ, սատանայի եւ իրենց սեփական «ես»-ի հարձակումների առաջ բացարձակ անպաշտպանությամբ: Նրանք դարձան խոցելի եւ օգնության մշտական կարիքի մեջ, հոգեւոր աղքատության մեջ, որը հետագայում իրենց սերունդները ջանում էին լցնել ոչ թե Աստծո ներկայությամբ, այլ դեպի մեղք տանող ցանկություններով, նյութական հարստությամբ, առավել մեծ իշխանասիրությամբ եւ փառամոլությամբ, որոնց վերջում, սակայն, մարդկությանը, սպասում էր դարձյալ նույն մերկությունը:

Մարդը սկսեց թաքնվել Աստծուց՝ իր մերկության պատճառով. «Տէր Աստուած կանչեց Ադամին ու ասաց. «Ու՞ր ես»: Ադամը պատասխանեց. «Լսեցի քո ձայնն այստեղ՝ դրախտում, եւ ամաչեցի, որովհետեւ մերկ էի եւ թաքնուեցի»», Ծննդ. 3, 9-10:

Մարդկության ամբողջ պատմության ընթացքում Աստված միշտ Ի՛նքն է փնտրում մարդուն եւ տալիս է այդ նույն հարցը. «Ու՞ր ես»: Իսկ մենք հաճախ թաքնվում ենք Աստծուց՝ Ադամի նման, փախչում ենք հեռու եւ թաքնվում մեր առօրյա գործերի, մեղքերի, եսասիրության, անտարբերության «հարմարավետ» ծառերի ետեւում, որոնք, սակայն, չեն կարող մեզ թաքցնել Աստծո ամենատես աչքից եւ Աստծո ամենագութ, զոհաբերվող եւ ամեն ինչ ներող սիրուց:

Աստված Ադամին ու Եվային արտաքսեց դրախտից, բայց երբեք չլքեց նրանց մենակ, այլ միշտ հոգ տարավ իր հայրական սիրով, նաեւ խստությամբ՝ մինչեւ ժամանակների լրումը, երբ Իր Միածին Որդուն ուղարկեց, որպեսզի մարդուն վերադարձնի կորուսյալ դրախտը, Աստծո սիրասուն գիրկը, որպեսզի մարդն այլեւս չամաչի ինքն իրենից, իր մարմնից, այլ իր կյանքը, իր մարմինը դարձնի միջոց՝ ոչ թե ինքնահաստատման, ինքնամեկուսացման, ինքնափառաբանման համար, այլ միայն ու միայն՝ Աստծուն փառաբանելու համար, որպեսզի մարդս Քրիստոսի միջոցով վերականգնի իր նախնական անմեղությունն ու ներդաշնակությունը ինքն իր հետ, իր արարչի, իր ընկերոջ եւ բոլոր արարածների հետ: Ներդաշնակությունը կորավ մարդու մեղքով, մարդու շնորհի՛վ էլ պետք է վերականգնվի:

Ամբողջ տիեզե՛րքն է սպասում մեզանից յուրաքանչյուրի ապաշխարությանը, անկեղծ զղջմանը, առ Աստված անձնվեր սիրուն եւ հավատքի զորացմանը: Մեզնից յուրաքանչյուրն այսօր եւ հիմա մեծ առաքելություն ունի անելու՝ ամբողջ տիեզերքը դարձյալ Աստծո առաջ հնազանդության մեջ դնելու տերունական առաքելության մեջ, որ առաջ է տանում մեր Տեր Հիսուս Քրիստոսը:

Իմ եւ քո, բոլորի այդ առաքելությունը սկսվում է Աստծո կամքի առաջ լիակատար հնազանդությունից, ինքներս մեզ խոնարհեցնելուց, «ես»-ի մեկուսացվածությունից ազատագրվելուց եւ Աստծո, մերձավորի, արարչագործության առջեւ բացվելուց: Յուրաքանչյուրս պետք է հասկանանք, որ արգելված պտուղը չէ՛ մեր կյանքի սնունդը, այլ՝ «Աստծո ամեն խոսք, որ դուրս է գալիս Աստծո բերանից»: Երբ աշակերտները Հիսուսին հարցրեցին, թե արդյոք ինչ որ բան կերել է, Հիսուս պատասխանեց. «Իմ կերակուրը այն է, որ կատարեմ կամքը նրա, ով ինձ ուղարկել է», Յվի. 4, 34: Այդ կերակուրը մեզ համար ոչ այլ ինչ է՝ քան Աստծո մարմնացյալ Խոսքը՝ Սուրբ Հաղորդությունը: Միայն սա՛ պետք է լինի մեզ համար գրավիչ եւ գեղեցիկ կերակուրը եւ ոչ թե արգելված պտուղները, որոնք սատանայից են:

Բոլորս այսօր ճշմարիտ ապաշխարության եւ պահեցողության համար կարիքն ունենք նոր կնոջ՝ Սուրբ Կույս Մարիամի օգնությանը, որ ջախջախում է օձի գլուխը, որ մարդկությանը եւ տիեզեքի համար նոր մարդու ճշմարիտ օրինակ է: Նա Եվայի հակապատկերն է իր սրբությամբ եւ հնազանդությամբ:

Սուրբ Կու՛յս, աղոթի՛ր մեր սրբության եւ հնազանդության համար այսօր եւ միշտ. ամեն:

Ի՞ՆՉ Է ՄԵՂՔԸ

Հոգևոր կրթություն, Բ շաբաթ, թեմատիկ շարք՝ «Մեղքը», խորհրդածություն 1

Մեծ Պահքի այս երկրորդ շաբաթը մենք սկսեցինք առաջին մեղսագործության մասին խորհրդածությունից, որը պատճառ եղավ Ադամի արտաքսմանը՝ Էդենի պարտեզից: Այս փաստը, որի մասին պատմում է Ծննդոց գրքի 3-րդ գլուխը, բեկումնային դարձավ ամբողջ մարդկության համար: Մեղքը, որ գործեցին առաջին մարդիկ, վնասեց մարդկային բնությունը՝ հոգին և մարմինը՝ մարդուն ամբողջությամբ. Արարչի պատկերը մարդու մեջ մնաց անջնջելի, բայց մարդը կորցրեց Արարչի հետ իր նմանությունը՝ սրբությունը, անապականությունը, մարմնի լիարժեք տիրապետումը բանականության կողմից, աստվածային կամքի հետ լիակատար ներդաշնակությունը: Այս բոլոր գանձերը, որոնք մարդն ուներ որպես նվեր՝ Աստծո կողմից, կորան, մարդը հայտվեց աքսորյալի կարգավիճակում, Էդենի պարտեզին փոխարինեց Աստծո կողմից մարդու մեղսագործության պատճառով այլևս անիծված երկիրը, որտեղ մարդն իր երեսի քրտինքով պետք է մշակեր հողը, որն աճեցնում էր փուշ ու տատասկ, կինը ցավերով պետք է ունենար իր զավակներին: Առաջին մարդիկ իրենց վնասված, մեղքի հետևանքով թուլացած, աստվածատուր արժանապատվությունը վիրավորված մարդկային բնությունը որպես ծանր ժառանգություն փոխանցեցին իրենց սերունդներին: Սա է պատճառը, որ յուրաքանչյուր մարդ արարած, որ լույս աշխարհ է գալիս, ծնվում է՝ ժառանգած ադամական կամ նախնական մեղքը, ծնվում է վնասված, մահկանացու մարդկային բնությամբ՝ ենթակա ամեն տեսակ հիվանդությունների և մահվան: Ավելին, մարդկային թուլացած կամքի, գիտակցության անզորության, ազատության սխալ ընկալման և կիրառության պատճառով, մեղքը սկսեց տարածվել ամենատարբեր դրսևորումներով՝ Կայենի եղբայրասպանությունից և անհատական մեղքից վերածվելով հասարակական մեղքի՝ մեծամասշտաբ պատմական հետևանքներ ունենալով և կանխորոշելով մարդկության ճակատագիրը, զարգացման ընթացքը, կամ, ավելի ճիշտ

կլինի ասել, բարոյական լճացումն ու հետընթացը, որն ահռելի ծավալներ ստացավ նաև քրիստոնեական դարաշրջաններում՝ քրիստոնեության ընդունած ժողովուրդների կյանքում, տեխնոլոգիաների զարգացման, նորանոր հայտնագործությունների, սոցիալական հարաբերությունների, կապի միջոցների առավել հարստացմանը զուգահեռ: Վերջիններիս զարգացումը մեծ թափով առաջ է ընթանում՝ առանց մարդկության բարոյական կամ հոգևոր նույնպիսի արագ զարգացման, կամ հաճախ՝ վնասելով մարդու բարոյական նկարագրին, երբ մարդն օգտագործում է նոր տեխնոլոգիաները՝ մեղքն առավել լայն հնարավորություններով տարածելու և գործադրելու նպատակով: Ողբերգականորեն, մարդկային երևակայությունը շատ ավելի մեծ խանդավառությամբ է գործում հենց մեղքի տարածման դաշտում: Մարդու հետաքրքրասիրությունը մեղքով և դրա ամբողջ այլանդակությամբ գերազանցում է մարդու հետաքրքրասիրությանը հոգևորով և սրբությամբ: Սա հիշեցնում է հռոմեական կրկեսներում հավաքված ամբոխին, որին կայսրերը կարողանում էին կառավարել գլադիատորների և գազանների մարտերի և պարտադիր սպանությունների տեսարաններով և ասում էին. «Ի՞նչ է ուզում ամբոխը. հաց և տեսարաններ»: Մարդուն հաճախ թվում է, թե միայն ի՛նքն է իր կյանքի, իր հնարավորությունների միակ ճարտարապետը և ստեղծված է ամենակարող լինելու համար: Հին օձը մինչև հիմա շարունակում է մարդուն խաբել: Առաջին կնոջ հետաքրքրասիրությունը արգելված պտղով մինչև հիմա կենսունակ է մարդու մեջ: Մարդը դաս չի քաղել առաջին մեղսագործության աստվածաշնչյան պատմությունից. գուցե, այն պատճառով, պարզապես մի առասպել է համարում այդ պատմությունը: Մինչդեռ Ծննդոց 3-րդ գլուխը տալիս է աշխարհում մեղքի և չարի գոյության մեր բոլոր հարցերի պատասխանները: Գուցե, մենք ակնկալում ենք այսօրվա լեզվով մի պատասխան, բայց դրանից չի փոխվում այն իրականությունը, որ այսօր էլ սատանան կարողանում է մեզ խաբել՝ օգտվելով մարդու միամտությունից և եսասիրության, փառասիրության պատրանքից, որոնք բոլոր տեսակի մեղքերի սկիզբն են: «Կլինեք աստվածների նման», ասաց չարը և մինչև այսօր շարունակում է այդպես շշնջալ և՛ ընտանիքներում, և՛ դպրոցներում, և՛ մարդկային հարաբերությունների ավելի լայն համատեքստում, և՛ նույնիսկ աղոթողի ու հավատացյալի ականջին:

Առաջին մեղսագործության պատմությունը մեզ հստակ բացատրում է, որ մեղքը մարդու գիտակից անհնազանդությունն է Աստծո խոսքին: Մեղքը գիտակցաբար դեմ գնալն է աստվածային կամքին: Մեղքը նշանակում է ասել ոչ՝ Աստծո հետ մտերմությանը, ասել ոչ՝ Աստծո հայրական սիրուն, ասել ոչ՝ Աստծո հետ մտերմությանը, բարեկամությանը, ասել ոչ՝ Աստծո կողմից մեզ մեկնված ամենազոր ձեռքին, որ մեզ ուզում է տանել դեպի երջանկություն: Մեղքն, այսպիսով, նշանակում է առանց հասկանալու ասել ո՛չ՝ հավիտենական կյանքին: Մեղքը մարդու կողմից միայն սեփական կամքով կամ ուրիշների թելադրանքով առաջնորդվելն է: Եվ մեղքը սկսվում է այն մտածումից, թե այսպես ինձ ավելի հարմար է, հաճելի է, այսպես ե՛ս եմ մտածում, սա ի՛մ իրավունքն է, այսպես դրսևորվում է ի՛մ եսը, իմ ճաշակը, իմ ազատությունը, այսպես անելով՝ ես ապրում եմ որպես անհատականություն, որ տարբերվում է ուրիշներից, այսպես ես առանձնանում եմ մոխրագույն բազմությունից, և այլն … Մեղքի արդարացումները, թերևս, ավելի շատ են, քան մեղքի տեսակները: Մեղքն ազատության, ուժի, ինքնուրույնության, իմաստության, իշխանության, երջանկության պատրանք է ստեղծում, բայց իրականում դրանք չարին գերության ձևեր են, դա մի «ազատություն» է, որն առաջարկում է չա՛րն աշխարհին և այդպիսով դառնում «այս աշխարհի իշխանը», ինչպես Տերն է անվանում:

Եթե մեղքի պատճառը անհնազանդությունն է Աստծո կամքին, ինչպես մի չարաճճի երեխա չի հանազանդվում իր ծնողի հորդորներին, ապա անհնազանդության պատճառը շատ ավելի խորն է՝ նախանձը: Նախանձն է, որ սատանային դարձրեց Երկնքից վտարված դև, որ նախքան Աստծո դեմ ապստամբելը մի հրեշտակ էր: Սատանան նախանձեց Աստծո ամենակալ զորությանը, որը սակայն կատարյալ սիրո և բարության արտահայտություն է: Նախանձն է, որ սատանային մղում է կործանելու Աստծո արարչագործության գլուխգործոցը՝ մարդուն: Եվ նախանձն է, որ մարդուն դրդեց ճաշակել արգելված պտուղը: Ինչու՞ միայն Աստված գիտի չարն ու բարին, ինչու՞ միայն Աստված է ամենակարող: Սատանան իր նախանձը վերագրեց Աստծուն, թե իբր Աստված նախանձում է մարդուն և չի կամենում մարդու հզորությունը, և այդ նույն նախանձը սերմանեց մարդու սրտում: Նախանձը միշտ փնտրում է սեփական շահը և ինքն իրեն ուղղում այդ նույն հարցը՝ ինչու՞ ոչ ես: Այսինքն, մարդն ինքն իրեն վերագրում է գրեթե ամեն ինչի իրավունքը, ընդհուպ մինչև կյանք ստեղծելու, կյանք խլելու իրավունքը: Նախանձն ու հպարտությունն այս իմաստով նույնն են և ծնում են մյուս բոլոր մեղքերը: Այդ զգացումները մերկացրին մարդուն իր հոգևոր և բարոյական առաքինություններից, որովհետև առանձնության, ուժի ձգտումը մարդուն վտարեց Աստծո հետ հաղորդությունից, միությունից.մարդը մերժեց Աստծո կամքը՝ հաստատելու համար իր սեփական կամքը: Իսկ աստվածային կամքին հնազանդվելը մարդու համար միակ հնարավոր և լիակատար ազատությունն է, երջանկության միակ երաշխիքը, զորության միակ աղբյուրը, որից զրկվելով՝ մարդն ինքն իր համար դարձավ անկառավարելի, անհասկանալի:

Մարդկային ամբողջ պատմությունը մարդու ճշմարիտ ինքնության, կյանքի իմաստի փնտրտուք է: Ոչ մի փիլիսոփայական տեսություն, ոչ մի ոչ քրիստոնեական կրոնական համակարգ չի կարողացել մարդուն հստակ բացատրել, թե ով է ինքը և ինչի համար է ապրում, եթե ոչ միայն քրիստոնեությունը, միայն Քրիստոս՝ իր նվիրյալների սուրբ ընտանիքի՝ Սուրբ Եկեղեցու միջոցով, որին չարիքն ու մեղքը չեն կարող հաղթահարել ըստ Տիրոջ խոսքի՝ Մտթ. 16, 18: Սա նշանակում է, որ սատանան մեղքի միջոցով, մարդուն Քրիստոսից հեռացնելու միջոցով ջանում է մարդուն գցել հուսահատության, աբսուրդի, անտարբերության, ապատիայի թմբիրների մեջ, որպեսզի մարդն անգամ

չհասկանա, որ ինքն ապրում է մեղքի գերության մեջ: Մեղքը դարձնել հաճելի և ներկայացնել այլ անուններով.ահա՛ սատանայի մեծագույն նվաճումը: Սրանից մի շատ էական հետևություն կարող ենք անել՝ այն, որ մեղքի ամբողջ խորությունը և էությունը երբեք չենք կարողանա հասկանալ, եթե ոչ՝ միայն Տեր Հիսուս Քրիստոսի Անձի, կյանքի, խաչի և մանավանդ Հարության լույսի ներքո, ինչպես մեզ սովորեցնում է Սուրբ Եկեղեցին: Այս մասին կխոսենք հաջորդ անգամ:

Խնդրենք Աստվածամորը, որ մեզ առաջնորդի դեպի մեղքի ճշմարիտ ընկալում, որպեսզի կարողանանք միշտ և կտրուկ մերժել մեղքի ամեն տեսակ դրսևորում.ամեն:

ԴԺՈԽՔԻ ԴՌՆԵՐԸ ՉՊԻՏԻ ԿԱՐՈՂԱՆԱՆ ՀԱՂԹԵԼ ԵԿԵՂԵՑՈՒՆ

Հոգևոր կրթություն, Բ շաբաթ,
թեմատիկ շարք՝ «Ի՞նչ է մեղքը», խորհրդածություն 2

Կաթողիկէ Եկեղեցու վարդապետությունը մեզ սովորեցնում է, որ մեղքի իրականությունը լավ ըմբռնելու համար հարկավոր է մեղքին նայել Տեր Հիսուս Քրիստոսի Հարության լույսի ներքո: Այսինքն, հարկ է միշտ մտքում ունենալ մեղքից ազատագրման անհրաժեշտությունը և իրական հնարավորությունը, որպեսզի հասկանանք, որ մեղքը վերջակետ չէ, մեղքը հաղթահարելի է, մեղքն՝ իր ամբողջ սարսափելի ուղբերգականությամբ հանդերձ միայն ժամանակավոր երևույթ է: Այս գիտակցությունը մեզ հնարավորություն է տալիս մեղքի մասին մտածել՝ առանց հուսահատության, հոռետեսության, առանց փակուղի մտնելու, որովհետև մեղքի իրականությունը մարդու առջև փակում է բոլոր դռները, ճշմարիտ երջանկության ճանապարհը և հնարավորությունը: Մեղքն՝ իր բոլոր տարատեսակներով, ճյուղավորումներով, ժամանակակից տեխնոլոգիական, նորարարական հանդերձանքով մարդուն միշտ ներկայանում է գրավիչ տեսքով՝ ինչպես արգելված պտուղը՝ Դրախտում: Սա սատանայի ծրագիրն է: Բայց երբ մարդը ճաշակում է մեղքի պտուղը, այն սկսում է այրել ներսը, ապականել «ներքին մարդուն»՝ (Բ Կրնթ. 4, 16) քայլ առ քայլ տանելով դեպի մահ: Հիշե՛նք Տիրոջ խոսքերը. «Որքա՜ն ընդարձակ է այն դուռը և լայն՝ այն ճանապարհը, որը տանում է դեպի կորուստ, և շատ են նրանք, ովքեր մտնում են դրանով», Մտթ. 7, 13: Մեղքի դուռը միշտ լայնորեն բացված է մարդու առաջ և իր վերևում միշտ ունի շողշողուն տառերով գրված մի հրավեր՝ գովազդային վահանակների նման, որոնք ամեն տեսակ մեղավոր արարք կարող են մատուցել ամենագեղեցիկ տեսքով, և շատերն են ընկնում այս խաբեության թակարդը: Բայց դեպի կորուստ տանող այս դուռը լավ պատկերացնելու համար, թերևս, մեզ օգնի ֆրանսիացի քանդակագործ Օգյուստ Ռոդենի «Դժոխքի դարպասները» (Les portes de l'Enfer, 1880-1917) քանդակախումբը, որի կերպարները ներկայացնում են Դանթեի «Աստվածային կատակերգության» Դժոխքի մեղավոր տառապյալներին: «Այստեղ մտնողը թող մոռանա ամեն հույս». գրված էր այդ դռան վրա: Հիսուս, երբ Պետրոս առաքյալին հռչակեց Եկեղեցու վեմ՝ նրա հավատքի խոստովանության համար, ասաց նրան. «Քո վրա պիտի շինեմ իմ Եկեղեցին, և դժոխքի դռները չպիտի կարողանան հաղթահարել այն», Մտթ. 16, 18: Դժոխքի դռները, որ խոստանում են պատրանքներ, բայց կուլ են տալիս ամեն ինչ, չպիտի կարողանան կուլ տալ Քրիստոսի Սուրբ Եկեղեցին, որ հաստատված է ճշմարիտ Վեմի վրա, որ մարդկանցից արհամարհված անկյունաքարն է՝ Հիսուս Քրիստոս, և կենդանի վեմերի վրա, որոնք Քրիստոսին՝ որպես Կենդանի Աստծո Որդի դավանող աշակերտներն են՝ Իր Սուրբ Ընտանիքը՝ Եկեղեցին, որին Տերը սրբացնում է իր սրբությամբ, որպեսզի մաքրի ավազանի մաքրությամբ, որպեսզի ոչ մի աղտեղություն և արատ չունենա, ինչպես բացատրում է Սբ. Պողոսը եփեսացիներին (Եփ. 5, 27):

Ուրեմն, մեղքի ճշմարիտ գնահատականը կարելի է տալ միայն այն դեպքում, եթե կանգնած ես հավատքի վեմի վրա, որ Ինքը Քրիստոսն է, որովհետև Քրիստոսի շնորհով, իր Եկեղեցում ապրելով մեր հավատքի կյանքը, Նրանից և սրբերից սովորում ենք մեղքի իրականությանը նայել Քրիստոսի՛ աչքերով: Իսկ Տերը նայում է անարատ սրբության դիտանկյունից, փրկության հնարավորության և լիակատար ազատության դիտանկյունից, ամբողջովին պաշտպանված աստվածային սրբությամբ և լույսով, որ աննվաճելի է խավարի համար (Հվի. 1, 5), Տիրոջ, որ անսուզելի է ծովի տարերքի համար, անպարտելի է չարի հարձակումների առաջ և որ հարություն առավ նույն մարդկային մարմնով, ինչպիսին մերն է: Ուստի մենք էլ մեր մկրտությունից սկսած ունենք հստակ մի առաքելություն՝ մեղքին նայել մեր Տիրոջ դիտանկյունից

և հստակորեն զանազանել մաքուրն անմաքուրից, ճշմարիտը՝ կեղծիքից, մեղքի իրականությանը նայելու հույսի լույսի ներքո, հաղթանակի խոստումով, որ մեզ տվել է Տերն ինքը՝ ասելով. «Այս աշխարհում նեղություն պիտի կրեք, բայց քաջալերվեցե՛ք, որովհետև ես հաղթեցի աշխարհին» (Հվի. 16, 33):
Հիսուսի նման մեղքին նայելով՝ մենք կկարողանանք նաև առաջ տանել Նրա սուրբ առաքելությունը, որ պատերազմ է անմաքուր ուժերի դեմ:
Հիսուսի առաքելությունն ի սկզբանե մարդուն և աշխարհը պղծությունից, չարից, դևերից մաքրելն է: Այդպես է Հիսուս բուժում անկյալ մարդ արարածին: Հիվանդությունը բուժելու համար, Հիսուս բուժում է հիվանդության արմատը, որ մեղքն է. «Ի՞նչն է ավելի հեշտ՝ ասել քո մեղքերը քեզ ներվա՞ծ են, թե վեր կաց և քայլի՛ր» (Մտթ. 9, 5), այսպես ասաց Տերը և ոտքի կանգնեցրեց այն անդամալույծին, որին Իր մոտ էին բերել տանիքը քանդելով: Իսկ Բեթհեզդայի ավազանի մոտ ընկած և անշարժացած անդամալույծին ասաց. «Ահավասիկ, առողջացար, այլևս մի մեղանչիր, որ ավելի չար բան չպատահի քեզ» (Հվի. 5, 14): Հիսուս կապում էր դևերին, վտարում նրանց դիվահարներից և բուժում դևերի գերիներին: Իսկ դևերը բնակվում են այնտեղ, ուր թագավորում է մեղքը:

Այսօրվա ավետարանական հատվածում կարդում ենք. «Հիսուս շրջում էր քաղաքներով և գյուղերով... քարոզում Արքայության ավետարանը և բժշկում ժողովրդի բոլոր ցավերն ու հիվանդությունները: Տեսնելով ժողովրդի բազմությունը՝ Հիսուս գթաց նրանց, որովհետև հոգնած ու լքված էին, ինչպես հովիվ չունեցող ոչխարներ» (Մտթ. 9, 35-36): Այս տողերը շատ հուզիչ են, որովհետև ներկայացնում են մարդկության՝ մեղքերից գերված, հոգնաբեկ թշվառությունը՝ Տիրոջ աչքերով, որ գալիս է մեզ մոտ՝ որպես մտահոգ, սրտացավ, ինքնազոհաբերվող քաջ Հովիվ, որպեսզի ազատի մեզ մեղքի գերությունից, որպեսզի կործանի դժոխքի դռները, որպեսզի մեզ առաջարկի դեպի կյանք տանող դուռը, որ Ինքն է. «Ես եմ դուռը, եթե մեկն իմ միջով մտնի, կփրկվի, մտնի ու կելնի և ճարակելու բան կգտնի» (Հվի. 10, 9): Հովհաննես Մկրտիչը, որ մարդկանց ապաշխարության քարոզ էր անում, Հիսուսին տեսնելով՝ բացականչում է. «Ահա՛ Գառն Աստծո, որ իր վրա է վերցնում աշխարհի մեղքը» (Հվի. 1, 29): «Աշխարհի մեղքը» մեղքի ամբողջ ֆոնն է, մարդկային հասարակության մեղավոր կենցաղը՝ անհատական մեղքի պատմություններով հանդերձ, որ եկավ վերացնելու Տերը: Հիսուս եկավ բուժելու մեր վնասված մարդկային բնության արմատները՝ սրբելու և նորացնելու մարդկային բնությունը, վերադարձնելու յուրաքանչյուրիս մարդկային բնությունից գողացված արժանապատվությունը. «Դրա համար իսկ Տերն ինձ օծեց և ուղարկեց աղքատներին ավետարանելու, սրտով բեկյալներին բուժելու, գերիներին ազատություն քարոզելու և կույրերին՝ տեսողություն, կեղեքվածներին ազատ արձակելու...» (Ղկ. 4, 18-19): Գերիներին և կեղեքվածներին ազատություն՝ այս է Տիրոջ մարդասիրական առաքելությունը՝ մաքրելով աշխարհը մեղքից և իր վրա վերցնելով այդ մեղքի ամբողջ բեռը, ամբողջ անեծքը, ըստ Պողոսի բառերի, աշխարհի ամբողջ ատելությունը, քանի որ վկայում էր աշխարհի մեղքի մասին (Հվի. 7, 7):

Չարը բորբոքում է մարդկանց ատելությունը Քրիստոսի և Իր Եկեղեցու հանդեպ, բայց չարը սարսափում է Տիրոջ սրբությունից, որովհետև գիտի, որ իր պարտությունն անխուսափելի է և ժամանակի հարց է միայն: Երբ Գերգեսայում Տերը մոտեցավ դևերի լեգէոնով բռնված հիվանդին, դևերը սարսափահար խոստովանեցին. «Ի՞նչ կա մեր և քո միջև, Հիսուս, Որդի Աստծո, եկար, որ մեզ ժամանակից շուտ տանջե՞ս» (Մտթ. 8, 29): Ի՞նչ կա մեր և քո միջև. սրբությունը ոչ մի եզր չունի պղծության և անիրավության հետ, լույսը ոչ մի կապ չունի խավարի հետ: Այս հակադրության մեջ է թաքնված չարի պարտության բանալին: Այս հակադրության մեջ է թաքնված մեղքի հաղթահարման հույսը, որովհետև չի կարող լինել որևէ հաշտություն՝ չարի և բարու միջև, որևէ միջին դիրք. մարդ կամ Աստծո հետ է, կամ սատանայի: Այս հակադրության մեջ է լավագույն կերպով հասկացվում մեղքի սնանկությունը, իրական դեմքը, որ քրիստոնյայի համար չի կարող երբեք սքողված լինել և միշտ ճանաչելի է: «Ով ինձ հետ չի հավաքում, ցրում է», ասում է Տերը: Ուրեմն, ինչ որ Աստծո Խոսքին դեմ է, կամ համաձայն չէ, չարից է, մեղք է և պատրանք: Մեղքը ճանաչելու լավագույն կերպն, ուրեմն սրբության մեջ ապրելն է, սրբի աչքերով նայելն է: Թերևս սա է պատճառը, որ առաջին դարի քրիստոնյաներին Պողոսն իր նամակներում կոչում է «սրբեր», այսինքն՝ սրբության հետևորդներ, սրբության կոչվածներ, որովհետև միայն այս գիտակցությամբ կարելի է տեսնել մեղքն իր ողջ սարսափելի տարողությամբ և խուսափել դժոխքի դռներից: Պողոսը կորնթացիներին գրում է. «Ի՞նչ համաձայնություն կա

Քրիստոսի և Բելիարի միջև, կամ ի՞նչ առնչություն կարող է լինել հավատացյալի և անհավատի միջև, կամ ի՞նչ նմանություն Աստծո տաճարի և մեհյանների միջև: Արդարև կենդանի Աստծո տաճար եք դուք... Հետևաբար...Տերն ասում է. «Մի՛ դիպեք պիղծ բաներին, և ես կընդունեմ ձեզ» (Բ Կրնթ.6, 15-17): Ուրեմն, Սբ.Պողոսի բառերով ասած, եկե՛ք մաքրենք ինքներս մեզ հոգու և մարմնի ամեն պղծությունից և կատարյալ դարձնենք սրբությունը՝ Աստծու երկյուղով. ամեն:

ԻՆՉՊԵ՞Ս ԶԱՏՈՐՈՇԵԼ ՄԵՂՔԵՐԸ

Հոգևոր կրթություն, Բ շաբաթ,
թեմատիկ շարք՝ «Ի՞նչ է մեղքը», խորհրդածություն 3

Նախորդ խորհրդածության ժամանակ ձեր ուշադրությունը հրավիրեցի մի կարևոր սկզբունքի վրա. առ այն, որ մեղքի ամբողջ տարողությունը և էությունը հասկանալու համար մենք պետք է կանգնենք սրբության Վեմի վրա, որ Քրիստոսն է, և մեղքին նայենք Իր և Իր Սուրբ Եկեղեցու դիտանկյունից: Սրբության հետ հստակ և կտրուկ հակադրությունն է, որ առավել ցայտուն է դարձնում մեղքի պիղծ որակը՝ անկախ նրանից՝ ծանր է մեղքը, թե թեթև:

Ամենապարզ ձևակերպմամբ, մեղքը մի որևէ գիտակցված ցանկություն է կամ արարք, որը դեմ է Աստծո կամքին, մարդու խղճի ձայնին և մարդու բնական իրավունքներին: Մեղքի արմատը անհնազանդությունն է աստվածային կամքին, հետևաբար, մեղքը մարդու կողմից գիտակցված մերժումն է՝ ապրելու Աստծո նախախնամության, ծրագրի համաձայն: Սատանան միշտ ջանում է մարդուն խաբել, բայց որոշում կայացնողը մարդն է, որ կոչված է իր աստվածատուր ազատությունը ապրել պատասխանատվությամբ: Հետևաբար, անկախ նրանից, թե ինչ է մեզ առաջարկում սատանան, որոշման պատասխանատվությունը՝ հետևանքներով հանդերձ, մնում է մարդու ուսերին: Աստված հարգում է մարդու ազատությունը, հետևաբար, երբեք մարդու փոխարեն որոշումներ չի կայացնում, բայց Իր խոսքով և հայտնությամբ, Եկեղեցու միջոցով մարդուն ընձեռում է բոլոր միջոցները, նաև իր գերբնական զորությունը՝ շնորհները, որպեսի մարդը միշտ ճիշտ որոշումներ կայացնի: Ուրեմն, մեղքն այն է, երբ մարդը, լիովին և հստակորեն իմանալով այդ միջոցների մասին, լսելով Աստծո՝ իրեն ուղղված Խոսքը, նույնիսկ հաճախակի ընթերցելով Սուրբ Գիրքը, գիտակցաբար մերժում է ապրել Աստծո խոսքի համաձայն, կամ մարմական կրքերի, ագահության և այլ բազում պատճառներով, որոնք ամբողջովին չէ, որ կախված են իրենից, այնուամենայնիվ, դարձյալ գիտակցաբար կամենում կամ գործում է բաներ, որոնք դեմ են Աստծո խոսքին, պատվիրաններին: Իհարկե, երբ կրքերը, շահը, եսասիրությունը մթագնում են մարդու բանականությունը, սթափ դատողություններ ակնկալելը շատ դժվար է, բայց այնուամենայնիվ, որոշումները մնում են գիտակցված: Մարդը սիրում է հաճախ ինքն իր համար արդարացումներ գտնել, որպեսզի մեղք գործի, կամ կարծում է, որ կարելի է մեղք գործել, ապա գնալ խոստովանության, չէ՞ որ Աստված միշտ ողորմած է և կների: Այսպիսի վարքագիծն անընդունելի է և անիմաստ է դարձնում հետագա խոստովանությունը: Չի կարելի չարաշահել Աստծո ողորմածությունն ու անվերապահ սերը՝ հանուն մեղք գործելու ցանկության: Սա նշանակում է նաև սեփական հեշտասիրության համար պարզապես շահագործել Քրիստոսի Խաչի զոհաբերությունը, որի վաստակի՛ շնորհիվ է միայն, որ մեր մեղքերը ներվում են: Տեսնու՞մ եք, որքան շատ են սատանայի թակարդները, նա նույնիսկ օգտագործում է Աստծո ողորմածությունը և Քրիստոսի Խաչելությունը՝ մարդուն մեղքի մեջ ներքաշելու համար:

Երբ Աստծո պատվիրանների դեմ մի քայլ ենք անում, գուցե առանց գիտակցելու, գործարքի մեջ ենք մտնում սատանայի հետ, որովհետև անհնազանդությունն Աստծո կամքին՝ նշանակում է հնազանդություն սատանայի առաջարկներին, ապա նաև՝ գերություն նրա կամքին կամ դիվահարություն:

Եկե՛ք նախ հասկանանք մեղքի առաջին ձևակերպումը՝ ցանկություններ կամ արարքներ, որոնք դեմ են Աստծո կամքին:

Աստծո կամքը կամ խոսքը հասկանալու և պատկերացնելու համար, թե ինչը կարող է մեղք լինել, նախևառաջ պետք է մեր աչքի առաջ ունենանք Աստծո կողմից Մովսեսին տրված Տասնաբանյա պատվիրանները (Ելք, 20), որոնք կարելի է խմբավորել երկու հիմնական ուղղություններով.

-առաջին երեք պատվիրանները, որոնք կարգավորում են մարդու հարաբերությունները՝ Աստծո հետ.

1.Ես եմ քո Տեր Աստվածը, ինձանից բացի այլ Աստվածներ չպաշտես,

2.Աստծո անունը զուր տեղը չտաս,
3.Տիրոջ օրը սուրբ պահիր,
-մյուս յոթ պատվիրանները, որոնք կարգավորում են այլ մարդկանց կամ մերձավորի հետ մարդու հարաբերությունները՝
4.պատվի՛ր քո հորն ու մորը,
5.մի սպանիր,
6.մի՛ շնացիր,
7.մի՛ գողացիր,
8.սուտ մի վկայիր,
9.մի՛ ցանկացիր քո մերձավորի կնոջը,
10.մի՛ ցանկացիր քո մերձավորի ունեցած որևէ բանի:

Տասնաբանյա պատվիրանները Աստծո օրենքի հիմքն են, որ կոչված էին կարգավորելու իսրայելացիների ամբողջ հոգևոր և բարոյական կյանքը, ինչպես նաև մեր՝ քրիստոնյաներիս կյանքը: Մենք առանձին-առանձին կուսումնասիրենք այս պատվիրանները, ինչը տրամաբորեն կօգնի հստակ զատորոշել բացահայտ և ծածուկ մեղքերը: Տեր Հիսուս Քրիստոս, երբ իրեն հարցրեցին, թե որն է ամենամեծ պատվիրանը, պատասխանեց. «Ամենամեծ պատվիրանն այս է. պետք է սիրես քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով և քո ամբողջ մտքով: Այս է ամենամեծ և գլխավոր պատվիրանը: Երկրորդը նման է սրան. «Պիտի սիրես քո ընկերոջը՝ ինչպես ինքդ քեզ», Մտթ. 22, 37: Առաջին՝ գլխավոր պատվիրանը, արտահայտված կամ մեկնաբանված է Տասնաբանյայի առաջին երեք պատվիրաններով, իսկ երկրորդը՝ մնացած յոթ պատվիրաններով: Այս պատվիրաններին Տեր Հիսուս Քրիստոս ավելացրեց Իր հայտնի լեռան քարոզը, որն ընդգրկում է Մատթեոսի ավետարանի 5-7-րդ գլուխները, որոնք, իր խոսքերով լրացնում են Օրենքը, և ապա տվեց ևս մեկը՝ նոր պատվիրանը. «Սիրեցե՛ք միմյանց ինչպես ես ձեզ սիրեցի» (Հվի. 13, 34), որն Ինքը մեկնաբանեց Իր կյանքով և խաչի զոհաբերությամբ:

Առաջին պատվիրանը. Ես եմ քո Տեր Աստվածը

Առաջին պատվիրանում Աստված ասում է.
«Ես եմ քո Տեր Աստվածը, որ քեզ հանեցի եգիպտակացիների երկրից՝ ստրկության տնից: Ուրիշ Աստվածներ չունենաս...կուռքեր չպատրաստես, չպաշտես և չծառայես դրանց», Ելք, 20, 2, Երկր. Օր. 5, 6: Հիսուս անապատում սատանային պատասխանելիս՝ այս պատվիրանն այլ կերպ ձևակերպեց. «Գրված է. «Քո Տեր Աստծուն պաշտիր և միայն նրան ծառայիր», Մտթ. 4, 10:
Աստված մարդուն հայտնեց Իր Աստվածային զորությունը, արարչագործ հեղինակությունը, հավիտենականությունը և ամենակարողությունը՝ Իր ընտրյալ ժողովրդին ազատագրելով եգիպտական սրտկությունից և շնորհելով նոր կյանքի հնարավորություն: Եվ Աստված կամեցավ, որ իսրայելացիները սա մեկընդմիշտ հիշեն՝ Աստծո հետ կնված ուխտով, որպեսզի ընդունեն Աստծուն՝ որպես Տեր, պաշտեն և հավատարիմ մնան իրենց Աստծուն: Սա, իհարկե, վերաբերում է յուրաքանչյուր մարդ արարածի, քանի որ Աստված Ինքն Իրեն հայտնում է իր բոլոր զավակներին, որ ստեղծված են Իր պատկերով:
Առաջին պատվիրանի վրա են հիմնված հավատքի, հույսի և սիրո «աստվածաբանական» կոչված առաքինությունները: Հավատքը և վստահությունն առ Աստված մարդու հոգևոր կյանքի վեմն է, որից սկսվում է Աստծո ճանաչումը և սերը: Աստծուն՝ որպես մեր կյանքի Տեր չճանաչելը, Նրա գոյության հանդեպ թերահավատությունը, կասկածը բոլոր բարոյական արատների պատճառն է, ըստ Սբ. Պողոսի (Հռմ. 1, 18-32): Ուրեմն, առաջին պատվիրանը մեզ կոչ է անում ամենայն զգուշությամբ պահպանել ու ամրացնել մեր հավատքն ու վստահությունը Տիրոջ հանդեպ: Այլապես, կարող են ծնվել.
-գիտակցված կասկածը, որ արհամարհում կամ մերժում է Աստծո հայտնած կամ Եկեղեցու առաջարկած որոշ ճշմարտություններ՝ գերադասելով սեփական կարծիքը,
-ակամա կասկածը, երբ մարդ տատանվում է հավատքի մեջ՝ դժվարանալով հասկանալ կամ ընդունել որոշ ճշմարտություններ,
-անհավատությունը, որ գիտակցված ի սպառ մերժումն է ընդունելու Աստծո կողմից հայտնված բոլոր ճշմարտությունների, իսկ մասնակի մերժումը Սուրբ Գրքի տողերի քմահաճ մեկնաբանությունները հանգեցնում են աղանդների կամ հերձվածների,
-հավատուրացությունը, որ լիակատար մերժումն է քրիստոնեական հավատքի,
-սխիզմը կամ պառակտումը, որը հրաժարումն է ընդունելու Պետրոս առաքյալի հաջորդի՝ Հռոմի Քահանայապետի ավագ հոգևոր իշխանությունը՝ շնորհված Քրիստոսի կողմից, անջատումը Կաթողիկէ, այսինքն՝ Ընդհանրական Սուրբ Եկեղեցու հետ հաղորդությունից կամ միությունից, որն արտահայտվում է հրաժարումով՝ Կաթողիկէ Եկեղեցում Սբ. Հաղորդություն ընդունելուց:

Քրիստոնյան չի կարող միայն սեփական ուժերով հասնել փրկության, այլ ունի այն երբեք չխաբող հույսը, որ իրեն կանչող Աստված կտա բոլոր հարկ եղած շնորհները՝ փրկության հասնելու համար: Հետևաբար, առաջին պատվիրանի դեմ է ուղղված և մեղք է նաև.

-հուսահատությունը, երբ մարդ այլևս հույս չունի, որ Աստված իրեն կօգնի կամ կների իր մեղքերը, կամ որ աստվածային արդարությունը կհաստատվի: Այյպիսի մեղքի մեջ ընկավ Հուդան՝ զղջալուց հետո, և ապա դիմեց ավելի ծանր մեղքի՝ ինքնասպանության,

-ինքնավստահությունը, երբ մարդը մտածում է, որ ինքը կարիք չունի Աստծո օգնության և կարող է ինքնուրույն փրկվել, կամ երբ մեկը վստահ է, որ Աստված իրեն կտա ամեն ինչ՝ առանց մեղքերի խոտովանության և այլ վաստակների:

Հավատքով մարդը ճանաչում է Աստծո անսահման սերն ու հոգատարությունն իր հանդեպ, որը նույնիսկ գերազանցում է Աստծո արդարադատությանը: Պետք է ամեն վայրկան մեր աչքի առաջ ունենանք այն ամենն, ինչ Տերն արել և անում է մեզ համար՝ ներելով մեր մեղքերը: Ուրեմն, հակառակ դեպքում ծնվում են Աստծո հանդեպ երախտամոռությունը, անտարբերությունը: Մարգարեների գլխավոր ջանադրությունը ժողովրդին այս մասին հասկացնելն էր, իսկ նրանց լսելու փոխարեն հալածում էին, քարկոծում, սպանում: Հովհաննես ավետարանիչը Հայտնության գրքում զգուշացնում է գաղջության մեղքի մասին, երբ մարդ ոչ տաք է, ոչ սառը՝ Աստծո հանդեպ սիրո մեջ: Հոգևոր տրտմությունը կամ ծուլությունը, որ խանգարում է մարդուն առաջադիմել Աստծո հանդեպ սիրո մեջ: Ատելությունն Աստծո հանդեպ մարդկային հպարտության, ապստամբության, անձնական կարծիքի մեջ կարծրացածության հետևանք է և տեղ չի թողնում Աստծուն սիրելու համար՝ վերածվելով ևս մեկ ծանր մեղքի:

ԻՆՉՊԵ՞Ս ԶԱՏՈՐՈՇԵԼ ՄԵՂՔԵՐԸ,

Տասնաբանյա պատվիրանները. շարունակություն

Հոգևոր կրթություն, Բ շաբաթ,
թեմատիկ շարք՝ «Ի՞նչ է մեղքը», խորհրդածություն 4

Այսօր շարունակելու ենք խորհրդածել Տասնաբանյա պատվիրանների մասին, ի մասնավորի, Առաջին պատվիրանի, որն է. «Ես եմ քո Տեր Աստվածը»:

Երեկ խոսում էինք աստվածաբանական երեք առաքինությունների մասին՝ հավատի, հույսի և սիրո, դեմ գործված մեղքերի մասին: Այս երեք հիմնարար առաքինությունները հիմք են ստեղծում բարոյական առաքինությունների գործադրման համար, որոնցից շեղումը ևս մեղքեր է ծնում:

Հավատքից ծնվում է Աստծուն երկրպագելու գործողությունը, որն առաջին պատվիրանի գործնական ապրումն է: Երկրպագել Աստծուն՝ նշանակում է ճանաչել Աստծուն՝ որպես միակ Տեր և Արարիչ, խոնարհեցնել սեփական անձը: Երկրպագությունը քրիստոնյաներս կատարում ենք և անհատական և ծիսական աղոթքների միջոցով՝ առանձին կամ մյուս հավատացյալների հետ միասին, նաև կոչված ենք կատարելու որոշ զոհաբերություններ՝ ոչ թե կենդանական, այլ հոգևոր՝ ինքներս մեզ նվիրաբերելով Տիրոջը, և ապաշխարության տառապանքներ կրելով, ըստ սաղմոսի խոսքի. «Աստծո պատարագը խոնարհ հոգին է», Սղմ. 50, 19: Մեր պաշտամունքային կյանքը և զոհաբերությունները լիարժեք կլինեն, եթե այն միացնենք Քրիստոսի Սուրբ Զոհաբերությանը, որ կատարեց խաչի վրա և շարունակում է կատարել Սբ. Պատարագի ժամանակ: Ուրեմն, պաշտամունքային կյանքին չմասնակցելը խախտում է առաջին պատվիրանը, ուստի մեղք է:

Աստծո հանդեպ հարգանքի և պաշտամունքի ձևեր են նաև խոստումը և ուխտը: Սովորաբար, քրիստոնյան Աստծուն խոստումներ է տալիս Մկրտության, Խոստովանության, Պսակադրության և Քահանայական ձեռնադրության խորհրդակատարությունների ժամանակ, որոնք պարտավորվում է պահել, հակառակ դեպքում մեղսագործում է ընդդեմ առաջին պատվիրանի: Խոստման առավել պարտավորեցնող ձև է ուխտը, այսինքն՝ մի պայմանադրություն Աստծո հետ՝ նվիրվելու վանական կյանքին, մնալու կուսակրոն, ողջախոհ, խստորեն պահել ավետարանական պատվիրանները, աղքատությունը, հնազանդությունը: Ուխտերը կարող են լինել ժամանակավոր կամ մշտնջենական: Դրանց խախտումը վիրավորանք է Աստծո նկատմամբ, ուստի և՝ մեղք: Իսրայելացիների հետ Աստված Ինքը հավատարմության ուխտեր կնքեց, որոնք նրանք դրժեցին՝ ուրանալով Տիրոջը և պաշտելով այլ աստվածների: Տերը նրանց հետ և մեզ հետ կնքեց նոր ուխտ՝ Իր Որդու Արյամբ, որը մենք բոլորս՝ Մկրտության վայրկյանից ստանձնում ենք պահել մինչև մահ: Այդ ուխտը ենթադրում է պաշտել միակ Աստծուն՝ Քրիստոսի նմանությամբ, նմանվել Քրիստոսին և լինել սուրբ: Յուրաքանչյուր մեղսագործություն նշանակում է նաև այս ուխտի դրժումը կամ արհամարհումը. մենք

պարտական ենք Քրիստոսի Արյանը: «Այս է նոր ուխտի իմ արյունը, որ հեղվում է ձեր և շատերի մեղքերի թողության համար». ասում է Հիսուս ավետարանում և այսպես աղոթում ենք Սբ. Պատարագի ժամանակ՝ գինին սրբագործելիս: Ուրեմն, Սբ. Պատարագին չմասնակցելը ևս մեղք է:

Առաջին պատվիրանը մարդուն արգելում է պաշտել այլ աստվածների, կուռքերի և ծառայել նրանց: Այս պատվիրանը միայն հին ժամանակներին չի վերաբերում և կամ միայն իսրայելացիներին շրջապատող հեթանոսական ազգերին, որոնք պաշտում էին բազում աստվածների և ձեռակերտ կուռքերի: Այսօր, գուցե ձեռակերտ կուռքեր չկան, արձանիկներ չեն պաշտում, բայց կան մերօրյա հեթանոսներ, նաև՝ հայ հասարակության մեջ, ովքեր ջանում են վերածնել հեթանոսական աստվածությունների պաշտամունքը և ուրանում են քրիստոնեությունը: Կան նաև սատանայապաշտներ: Կռապաշտություն է նաև, երբ փողը, իշխանությունը, հաճույքը, նախահայրերը, պապերը, ցեղը, ազգը դառնում են պաշտամունքի առարկա, իսկ Աստված մղվում է երկրորդ պլան կամ կարևորվում է այնքանով, որքանով, որ օգտակար է, ասենք, ցեղին, ազգին կամ այլ մարդկային խմբի բարեկեցությանը: Սա նշանակում է արարածներին վեր դասել Արարչից, ինչն, իհարկե, ծանր մեղք է և մարդկային սնապարծություն, եսամոլություն: Իսկ ամենատարածված կռապաշտությունը սեփական «ես»-ի պաշտամունքն է, կամ մարդու անձի պաշտամունքը, ինչին քաջածանոթ է մանավանդ, նախկին սովետական տարածքի հասարակությունը: Թերևս, լավ կլինի, որ հաճախակի ազնվորեն քննենք ինքներս մեզ՝ հասկանալու համար, թե արդյոք մեր «ես»-ը մեզ համար ավելի կարևոր, գրեթե պաշտելի չէ, առավել քան Աստված: Մարդ, որ իր սեփական կարծիքը ամեն բանից առավել է կարևորում, սովորական մի կռապաշտ է և ոչ թե իմաստուն: «Իմաստության սկիզբն Աստծո հանդեպ երկյուղն է», Առ. 1, 7:

Շատ երիտասարդներ նաև սիրում են կրել ինչ-ինչ քարեր, ապարանջաններ, աչքահուլունքներ, որոնց վերագրում են գերբնական պահպանիչ կամ ճակատագրական ազդեցություններ, որը դարձյալ կռապաշտության մի ձև է և շատ տարաշված: Սրանք ոչ մի կապ չունեն աստվածայինի հետ և չարից են մեզ մատուցվում՝ թուլացնելու համար մեր ամբողջական վստահությունը Աստծուն:

Առաջին պատվիրանի դեմ է գուշակությունը, որն Աստծո հանդեպ վստահության պակասի կամ բացակայության մասին է վկայում: Աստված ապագայի մասին կանխասացության շնորհներ է տալիս մարգարաներին և սրբերին, բայց ոչ՝ ամեն մարդու, որ գուշակի համբավ է ստեղծում իր համար: Սխալ է, երբ քրիստոնյան Աստծուն ապավինելու փոխարեն հետաքրքրված է իր ապագայով և դիմում է անձանց, որոնք սատանայի կամակատարներ են: Հարկավոր է կտրականապես մերժել երազահանությունը, հորոսկոպները, աստղագուշակությունը, խիրոմանտիան, պայծառատեսության տարատեսակ ձևերը, մոգությունը, որի միջոցով մարդիկ գործարքի մեջ են մտնում դիվական ուժերի հետ, այսպես կոչված միջնորդների կամ մեդիումների միջոցով, որոնք փորձում են մարդու հետաքրքրությունը կլանել օկկուլտային ուժերի միջոցով և գերել նրանց, կամ մոգական հնարքներով վնասել մարդկանց, ազդել հոգեբանության վրա: Սրանք բոլորը սատանայի հնարանքներն են, որոնցով սա միշտ ուզում է գրգռել մարդու սին հետաքրքրասիրությունը և մատուցել արգելված կործանարար պտուղներ:

Աստծո հանդեպ թերահավատության արտահայտություն է Աստծուն փորձելը: Երբ սատանան ուզում էր դրդել Հիսուսին փորձել Աստծուն և ինքն իրեն վայր նետել աշտարակից, Հիսուս նրան պատասխանեց. «Գրված է՝ քո Տեր Աստծուն պիտի չփորձես», Մտթ. 4, 1-10:

Ծանր մեղք է սրբապղծությունը, երբ անհարգալից կամ արգահատելի վերաբերմունք է ցուցաբերվում սրբերի, սրբապատկերների, եկեղեցիների, սրբավայրերի հանդեպ, առավել ևս՝ Սուրբ Հաղորդության հանդեպ: Այս առումով ոչ պատշաճ պահվածքը, զրույցները, բամբասանքը եկեղեցում, Սուրբ Սեղանի առջև, Սբ. Հաղորդությունը ճաշակելիս, սրբապղծության արտահայտություններ են՝ թեթև կամ ծանր: Դրանք նշանակում են Աստծո հանդեպ երկյուղածության, պատկառանքի պակաս կամ ի սպառ բացակայություն:

Մեկ այլ ծանր մեղք է սիմոնականությունը, որը գալիս է Սիմոն մոգի պատմությունից (Գրծք. 8, 9-24), որ ուզում էր փողով առաքյալներից գնել աստվածային շնորհը: Այս մեղքն է գործում ամեն ոք, ով ուզում է փողով գնել հոգևոր բարիքներ, պահանջել խորհրդակատարություններ, կամ գործում են քահանաներ, ովքեր դրամ են պահանջում՝ աղոթելու համար. Կաթողիկէ Եկեղեցու կանոնագիրքն արգելում է հոգևորականներին աղոթքների համար հավատացյալներից պահանջել գումարներ իսկ, չսօպտանալու դեպքում, հրաժարվել աղոթել պատշաճ ձևով: Բայց, պետք է հստակեցնել, որ հավատացյալներն ունեն հոգևոր պարտականություն՝ ապահովելու եկեղեցիների և հոգևորականների ապրուստն ու կարիքները՝ կամավոր նվիրատվություններով, որոնց չափը կարող է սահմանվել եկեղեցական իշխանությամբ (ՔԿԵ, 2122):

Երկրորդ պատվիրանը. «Աստծո անունը զուր տեղը չտաս»

Աստծո անունը սուրբ է, հետևաբար, հարկ է ամենայն երկյուղածությամբ և զգուշությամբ վերաբերվել և արտաբերել միայն տեղին և պատշաճ պայմաններում և նպատակներով: Ավելին, հարկ է պաշտել և երկրպագել Աստծո անունը՝ այսինքն ինքնին «Աստված», «Տեր», «Է», «Յահվէ», «Հիսուս Քրիստոս» բառերը, նաև հարգանքով արտաբերել Սուրբ Կույս Մարիամի և բոլոր սրբերի անունները, հրեշտակների անունները: Աստծո անունը չենք կարող օգտագործել այլ

կերպ, քան միայն փառաբանելով և գովերգելով, աղոթքներով և շարականներով: Սա նշանակում է՝ չի կարելի Աստծո անունն արտաբերել՝ մեղադրելով Նրան, չարախոսելով, ատելությամբ, կատակների մեջ, Աստծո հետ կապ չունեցող զրույցներում, անեծքների մեջ, մոգության և գուշակությունների մեջ: Հատուկ զգուշությամբ պետք է օգտագործել Աստծո և սրբությունների անունները համացանցում, սոցիալական ցանցերում, որտեղ սրբությունը հաճախ արհամարվում է, պղծվում, իջեցվում կենցաղային և գռեհիկ զրույցների, վիրավորանքների մակարդակին: Ցավալի է, որ գործված ծանր մեղքն այս պարագայում չի էլ նկատվում:

Շատ կարևոր է մանրակրկիտ ձևով նախ մտքերի, ապա և բառերի մեջ հստակ զատորոշել Աստծուն, Եկեղեցուն և սրբություններին վերաբերող ճշմարտությունները կենցաղային իրողություններից, որոնք կարող են պղծել կամ արժեզրկել այդ սրբությունները: «Սրբի հետ սուրբ պիտի լինես», գրված է Սուրբ Գրքում: Բայց հաճախ է պատահում, որ սրբության անուն լսելիս՝ մարդիկ զգաստանում են, բայց հաջորդ րոպեին, կամ եկեղեցուց դուրս գալուց հետո շարունակում պղծել իրենց լեզուն և միտքը: Սրբության զատորոշումը պետք է լինի՝ Աստծո և Նրա սրբությունների հանդեպ սիրո և նվիրման, սրբազան պատկառանքի արդյունք, ոչ թե պարզապես սրբություններին մեր կյանքից անջատելու և ինքնահոսի մատնված մեր կյանքը շարունակելու ցանկության արտահայտություն: Որովհետև այդ պարագայում, մեր կյանքն ինքնի՛ն դառնում է հայհոյանք, սրբապղծություն, որովհետև մե՛նք ենք կոչված լինելու սրբության կրող կենդանի անոթներ, «կենդանի հոգևոր վեմեր՝ Աստծո տաճարում», ինչպես գրում է Պետրոս առաքյալը: Հետևաբար զգույշ լինենք, որ ոչ մի կերպ թե՛ կյանքով, թե՛ խոսքով չարատավորենք Աստծու սրբությունները և մեր սրբության կոչումը: Հիշենք Հիսուսի խիստ արմատական այս խոսքը. «Ասում եմ ձեզ, ամեն մեղք ու հայհոյանք կներվեն մարդկանց, բայց Հոգու դեմ հայհոյանքը չի ներվի: Ով Մարդու Որդու դեմ խոսք ասի, նրան կներվի, բայց ով Սուրբ Հոգու դեմ ասի, նրան չի ներվի ո՛չ այս աշխարհում, ո՛չ էլ՝ հանդերձյալում...», Մտթ. 12, 31-32:

ԻՆՉՊԵ՞Ս ԶԱՏՈՐՈՇԵԼ ՄԵՂՔԵՐԸ,

Տասնաբանյա պատվիրանները. 3-րդը և 4-րդը

Հոգևոր կրթություն, Բ շաբաթ,
թեմատիկ շարք՝ «Ի՞նչ է մեղքը», խորհրդածություն 5

Երեկ առիթն ունեցանք միասին խորհրդածելու Տասնաբանյայի երկրորդ պատվիրանի մասին: Եկե՛ք հիմա մեր մտավոր հայացքներն ուղղենք երրորդ պատվիրանին, որ ամբողջացնում է Աստծուն ուղղված լիակատար սիրո վերաբերյալ առաջին երեք պատվիրանները:

Երրորդ պատվիրանը. «Սուրբ պահի՛ր Տիրոջ օրը»

Բառացիորեն Ելքի գրքում կարդում ենք. «Հիշի՛ր շաբաթ օրը, որպեսզի սրբացնես այն: Վեց օր աշխատի՛ր և այդ օրերին արա քո բոլոր գործերը, իսկ յոթերորդ օրը Աստծունն է, քո Տիրոջը: Այդ օրը ոչ մի գործ չանես», Ելք. 20, 8-10: Աստված կամեցավ, որ ինչպես Ինքը հանգստացավ վեց օր աշխարհն արարելուց հետո, այնպես էլ մարդը հանգստանա յոթներորդ օրը. «Դրա համար Աստված օրհնեց շաբաթ օրը և սրբացրեց այն», Ելք. 20, 11: Այդ օրը նաև հրեաները պետք է հիշեին, թե ինչպես Աստված իրենց փրկեց Եգիպտոսի գերությունից և հանեց նրանց այդտեղից, այսինքն պետք է հիշեին առաջին Պասեքը՝ Զատիկը: Շաբաթը նաև Աստծո հետ հավատարմության ուխտի նշանն էր: Ուրեմն, շաբաթը ոչ միայն հանգստի, այլև՝ Աստծուն օրհնելու, փառաբանելու, Նրա մեծագործությունները հիշելու, նաև սեփական կյանքը վերլուծելու, սխալները սրբագրելու, միմյանց ներելու, եղբայրասիրության գործեր կատարելու հնարավորություն էր, ինչը որ հրեաներին ջանում էր բացատրել Հիսուս՝ շաբաթ օրով բուժումներ կատարելով: Քրիստոնյաներիս համար յոթերորդ օրվա իմաստը շարունակեց և վերահիմաստավորեց կիրակին, որ Տիրոջ հարության օրին է, նոր սկիզբ և նոր արարչագործություն, որը սկսվեց Քրիստոսի հարությամբ և իր լրումին է հասնելու Նրա երկրորդ գալստյան ժամանակ: Քրիստոնյաներիս համար կիրակին դարձավ Տիրոջ օրը՝ բառի բուն իմաստով՝ κυριακός, կիւրիակէ, հունարեն բառից, իսկ լատիներեն՝ dies dominica, որ ևս նշանակում է Տիրոջ օր: Կիրակի օրը՝ որպես Տիրոջ օր ապրել՝ նշանակում է, որ քրիստոնյան ևս պետք է այդ օրը հրաժարվի լի օրերին կատարվող աշխատանքից օրը նվիրի աղոթքին՝ Աստվածաշնչի, հոգևոր գրականության ընթերցմանը, բարեգործությանը՝ աղքատների, հիվանդների հանդեպ, մարմնական և հոգեկան հանգստին, ընտանիքին: Թույլատրելի է միայն ընտանեկան պարտականությունների՝ անհետաձգելի գործերի կատարումը, նաև բարեգործության հետ առնչվող աշխատանքը: Կիրակի օրվա առանցքը, որ նաև քրիստոնեական կյանքի հիմքն ու գագաթնակետն է, մնում է Սուրբ Պատարագը, որին գիտակցաբար չմասնակցելը ծանր մեղք է: Ըստ

կանոնագրքի, ներելի է միայն հիվանդության և մանկահասակ երեխաների մասին հոգ տանելու անհրաժեշտությամբ պայմանավորված բացակայությունը Սուրբ Պատարագից:

Ցավալի է, որ, մանավանդ, Հայաստանում շաբաթը և կիրակին ապրում են հիմնականում միայն մարմնական ու հոգեկան հանգստի, ժամանցի, խնջույքների մեջ՝ նույնիսկ չմտածելով գոնե մեկ ժամ Աստծուն նվիրելու, Պատարագին մասնակցելու մասին: Նշանակում է՝ մարդն իրականում արհամարհում կամ պղծում է Աստծո սրբացրած օրը, Քրիստոսի հարության, մեղքի և մահվան հանդեպ հաղթանակի փրկարար փաստը, որից իրականում կախված է մարդու ճշմարիտ երջանկությունը: Աստված մեզ հրավիրում է Իր հետ միասին անկացնել մեկ օր կամ գոնե մեկ ժամ՝ ի նշան մեր երախտագիտության, բայց մենք զլանում ենք գնալ Իր մոտ, Քրիստոս մեզ համար պատարագվում է Սուրբ Սեղանին, հաճախ մեզանից մի քանի մետ հեռավորության վրա գտնվող եկեղեցում, իսկ շատերին դա բնավ չի հետաքրքրում: Այստե՛ղ է այս մեղքի ծանրությունը. մարդը չի ուզում կիսել Աստծո արարման և հարության ուրախությունը, չի մասնակցում սիրո տոնակատարությանը, որը գալիք հավերժական ուրախության նախաճաշակումն է: Մարդն արհամարհում է այն գալիք փառքը և երանությունը, որ Աստված պատրաստել է նրա համար: Իրականում սա նույն Ադամի երախտամոռության ծանր մեղքն է, որի պատճառով նա վտարվեց Էդենի պարտեզից: Իսկ անհատապես տանը կատարված աղոթքը չի կարող փոխարինել եկեղեցում հավատացյալների միասնական մասնակցությամբ մատուցվող Սուրբ Պատարագին, որովհետև պատարագողն ու պատարգավողն Ինքը Քրիստոսն է՝ մեզ համար զոհաբերվող Միջնորդը և Փրկիչը, որը ոչ թե մեր տանն է, այլ՝ Սուրբ Սեղանի վրա, որտեղից գալիս է բնակվելու մեր սրտերում՝ ճաշակվելով որպես Կյանքի Հաց:

Հիմա անցնե՛նք մյուս պատվիրաններին, որոնք առավել հստակ բացատրում են Քրիստոսի կողմից կարևորված երկրորդ պատվիրանը. «Պիտի սիրես քո մերձավորին քո անձի պես», Մրկ. 12, 29-31:

Չորրորդ պատվիրանը. «Պատվի՛ր քո հորն ու մորը»

«Պատվի՛ր քո հորն ու քո մորը, որպեսզի ... երկրի վրա երկար լինեն քո կյանքի օրերը, որոնք քո Տեր Աստվածը տալիս է քեզ», Ելք. 20, 12: Ծնողներին հարգելու և սիրելու մասին այս պատվիրանը որպես իր աղբյուր ունի աստվածային հայրությունը. Աստված կամենում է, որ մարդ արարածը մանկական հասակից հարգանքով մոտենա թե՛ իր Երկնավոր Հորը՝ Արարչին, թե՛ իր կենսաբանական ծնողներին: Մայրության պատիվը քրիստոնյաներիս համար առավել բարձր հոգևոր աստիճանի հասավ Տիրամոր կերպարով և Եկեղեցում, որ բոլոր մկրտվածների Մայրն է: Ծնողի նկատմամբ հարգանքի և սիրո իմաստը երախտագիտությունն է առ այն, որ նրանք իրենց սիրով, կյանքի նվիրաբերումով լույս աշխարհ են բերել իրենց զավակներին, քրտնաջան աշխատանքով, զոհողություններով դաստիարակել և կրթություն են տվել նրանց: Սրանից բխում է անհրաժեշտությունը լիակատար հնազանդության՝ ծնողների կամքին՝ մինչև չափահաս դառնալը. «Մանուկնե՛ր, հնազանդվե՛ք ձեր ծնողներին ամեն ինչում, քանի որ դա հաճելի է Տիրոջը», Կող. 3, 20: Չափահասության շեմից այն կողմ սակայն, թեև հնազանդությունն արդեն պարտադիր չէ, բայց մնում է հարգանքի, հոգատարության, նյութական, բարոյական, աղոթական աջակցության և սիրո կարիքը: «Ամբողջ սրտով հարգի՛ր քո հորը և մի՛ մոռացիր մորդ երկունքի ցավերը: Հիշի՛ր, որ դու ծնված ես նրանցից և ի՞նչ կարող ես դու հատուցել նրանց այն ամենի դիմաց, որ նրանք քեզ տվել են», Սիր. 7, 29-30: Իսկ Առակաց գրքում կարդում ենք. «Որդյա՛կ, պահպանի՛ր հորդ պատվիրանները և մի՛ մերժիր մորդ խրատը ... Երբ գնաս, դրանք քեզ կառաջնորդեն, երբ պառկես քնելու, քեզ կպահպանեն, երբ արթնանաս, կզրուցեն քեզ հետ», Առ. 13, 1: Հետևաբար, մանուկների համար ծնողներին չհնազանդվելը, ստելը մեղք է, իսկ երբ դառնում է սովորություն, վնասում է զավակի բարոյական զարգացմանը, իսկ չափահաս տարիքում ծնողներին արհամարհելը, վիրավորելը մարդուն կարող է արժանացնել արդար աստվածային հատուցմանը և բազում սխալներ գործելուն:

Չորրորդ պատվիրանը վերաբերում է նաև աստվածահաճո ծնողավարմանը և ընտանեկան հարաբերություններին ընդհանրապես: Երեխաների համար առաջնային դպրոցը սեփական ընտանիքն է, նախ՝ ծնողները: Հայրն ու մայրն են երեխաներին սովորեցնելու ոչ միայն տառեր, թվեր, այլև՝ հոգևոր և բարոյական գիտելիքներ, աղոթք, ընդ որում նաև՝ Տասնաբանյա պատվիրանները, իսկ չորրորդ պատվիրանի ուսուցման լավագույն ձևը սեփական օրինակն է, այսինքն՝ ծնողները նախ իրե՛նք պետք է մեծ սեր ու հոգատարություն, նաև, որ շատ կարևոր է, հարգանք ցուցաբերեն իրենց զավակների անհատականության հանդեպ: Ծնողը պետք է ամենայն համբերատարությամբ ժամանակ տրամադրի իր զավակների դաստիարակությանը, դասապատրաստմանը, նրանց հետ խաղին, նրանց հետ զրուցելուն, որպեսզի օգնի ընկերոջ նման և առաջնորդի անձնազոհ ծնողի նման: Այս ամենի կատարյալ օրինակները մեզ տվել են Հայր Աստված և Տեր Հիսուս Քրիստոս, որ միշտ մեզ հետ է Իր Սուրբ Հոգու ուղեկցությամբ և մխիթարությամբ:

Որդիական հարգանքը և ծնողական հարգանքը պայմանավորում են հարաբերությունները նաև ընտանիքի մյուս անդամների՝ քույրերի, եղբայրների, տատիկների և պապիկների, ազգականների հետ, քանի որ ծնողին հարգելը նշանակում է նաև հարգել ու սիրել արյունակցական կապով մեզ հետ կապված մյուս հարազատներին: «Գոտեպնդեցե՛ք միմյանց սիրով, խոնարհությամբ, հեզությամբ և համբերատարությամբ», Եփ. 4, 2: Այսպես ընտանիքում սկսում է կառուցվել այն բարոյական ֆոնը, որի հիման վրա պետք է կառուցվի հոգևոր ընտանիքի՝ Եկեղեցու տաճարը: Ամեն ընտանիք պետք է դառնա հոգևոր վեմ, տնային եկեղեցի՝ քրիստոնեական արժեքների ուսուցմամբ, փոխօգնությամբ, միասնական աղոթքով և միասին Սբ. Պատարագին մասնակցելով: Ուրեմն, տեսե՛ք՝ որքա՞ն կարևոր է չորրորդ

պատվիրանին հետևելը, որովհետև միմյանց հարգելով և սիրելով՝ թե փոքրը և թե մեծը սովորում են հարգել և սիրել Երկնավոր Հորը և Սուրբ Եկեղեցին: Երեխան հայրիկից պետք է սովորի պաշտել Երկնավոր Հորը և իր պապերին, և մորից պետք է սովորի Կույս Մարիամի առաքինությունները, որ նշանակում է լինել «աղախին Տեառն», Քրիստոսին հավատարիմ քրիստոնյա:

Ի վերջո, չորրորդ պատվիրանի վրա է հիմնված սերը հայրենիքի հանդեպ, սերը հայրենավանդ մշակույթի, լեզվի, արժեքավոր ավանդությունների, ծեսի հանդեպ. Աստծուն սիրողը չի կարող չսիրել հայրենիքը և այն լավագույնը, որ հայրենիքը, այսինքն՝ իր հայրերը տվել են իրեն: Ա՛յդ է պատճառը, որ Կաթողիկէ՝ Ընդհանրական Եկեղեցին, հատուկ կանոններով հանձնարարում է պահպանել ու հարստացնել ազգային ինքնությունը, դիմագիծը, հայրենիքը՝ այս բոլորն առավել իմաստավորելով և սրբացնելով մարդկային մեկ ընդհանոր հոգևոր և սուրբ ընտանիքի ծոցում, որ է Քրիստոսի Ընդհանրական և Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ բոլորիս հոգևոր տապանը հայրենի, որ լողում է դեպի Երկնային տունը, որտեղ Հայրը տեղ է պատրաստել բոլորիս համար, ըստ Քրիստոսի խոսքի. ամեն:

ԻՆՉՊԵ՞Ս ԶԱՏՈՐՈՇԵԼ ՄԵՂՔԵՐԸ. ՄԻ՛ ՍՊԱՆԻՐ

Տասնաբանյա պատվիրանները. 5-րդը
Մեծ Պահոց հոգևոր կրթություն, թեմատիկ շարք՝
«Ի՞նչ է մեղքը», խորհրդածություն 6

Հինգերորդ պատվիրանը. Մի՛ սպանիր

Աստվածաշունչը մեզ սովորեցնում է, որ կյանքը սուրբ է, այսինքն՝ անձեռնմխելի, այս անցողիկ, ապականացու իրականությունից զատման ենթակա, մարդկային իշխանությանը և քմահաճույքին անենթակա մի աստվածային պարգև, որի աղբյուրը միայն Աստված է: Կաթողիկէ Եկեղեցին ունի մի հրաշալի փաստաթուղթ, որ կոչվում է «Կյանքի պարգևը»՝ Donum Vitae, հրապարակված 1987թ., և որը պատասխան է տալիս ժամանակակից շատ խնդրահարույց հարցերին, մանավանդ, որդեծնության հարցերի մասին: Այդ փատսաթղթում գրված է. «Մարդկային կյանքը սուրբ է, քանի որ ի սկզբանե իր մեջ կրում է Աստծո արարչական գործը և իր միակ նպատակով ընդմիշտ մնում է Արարչի հետ յուրահատուկ հարաբերության մեջ: Միայն Աստվա՛ծ է կյանքի տերը՝ սկզբից մինչև վերջ. ոչ ոք ոչ մի դեպքում չի կարող յուրացնել իրավունքը՝ ուղղակիորեն ոչնչացնելու անմեղ մարդուն», Donum Vitae, Ներածություն, 5:

Ադամի և Եվայի անհնազանդության, հպարտության մեղքի հետևանքն ավելի ծանր ձևով արտահայտվեց նրանց սերունդների մեջ: Առաջին եղբայրասպանության դրվագը արդար Աբելի սպանությունն է Կայենի կողմից, որի արմատներում դարձյալ նախանձն ու հպարտությունն էր: Կայենին ուղղված կշտամբանքի աստվածային խոսքերում ակնհայտ է դառնում ամբողջ սարսափելիությունը գործված արարքի. «Այդ ի՞նչ արեցիր: Քո եղբոր արյան կանչն աղաղակում է ինձ երկրից: Եվ արդ, անիծյալ ես դու այդ հողի պատճառով, որ բացեց իր բերանը՝ ընդունելու համար քո ձեռքով թափված եղբորդ արյունը», Ծննդ. 4, 10-11: Մարդկային հպարտությունը կուրացնում է մարդու բարոյական և հոգևոր տեսողությունը՝ մարդուն դարձնելով եսակենտրոն և անմտահոգ՝ մերձավորի կյանքի նկատմամբ: Երբ Աստված Կայենին հարցրեց. «Ու՞ր է քո եղբայր Աբելը», Կայենը անհոգաբար պատասխանեց Աստծուն. «Միթե՞ ես իմ եղբոր պահակն եմ», Ծննդ. 4, 9: Աստծո կամքն է, որ յուրաքանչյուր մարդ պատասխանատվություն կրի իր եղբոր կյանքի և բարօրության համար, ուստի պատահական չէ, որ Աստված այդ հարցը տվեց Կայենին, չէ՞ որ Ինքը գիտեր, թե ինչ էր արել Կայենը: Սպանության մեղքը, ատելությունը միմյանց հանդեպ սկսվում է հենց այս սկզբունքի խախտումից, քանի որ Աստված նախ Ինքն է կրում պատասխանատվություն և մտահոգ է իր յուրաքանչյուր զավակի համար, Իր ստեղծած ամեն մի փոքրագույն արարածի համար, ըստ Տիրոջ խոսքերի, թե նույնիսկ երկու դահեկանով վաճառվող ճնճղուկները գետնին չեն ընկնում առանց Աստծո գիտության և թե «Ձեր գլխի բոլոր մազերն իսկ հաշվված են»: Դժվար թե կարողանանք պատկերացնել մեր երկնավոր Հոր անսահման ցավը՝ նախ ադամական մեղքի և ապա դրա անդառնալի հետևանքների համար. «Այդ ի՞նչ արեցիր», հարցի մեջ նկատելի է այդ ամբողջ ցավի և վշտի տարողության անչափելիությունը: Սա նաև փաստ է Աստծո հայրական անսահման սիրո՝ ի տես այն տխուր փաստի, թե ինչպես իր զավակներն Իր աչքի առաջ ապականում են իր ստեղծագործության գլուխգործոցը՝ մարդու արժանապատվությունն ու սուրբ կոչումը: Կարևոր մեկ փաստ ևս, Աստված չի ուզում սպանության վրեժը լուծել ևս մեկ սպանությամբ և դրա համար Կայենի խոսքերին, թե «ով պատահի ինձ, կսպանի», Աստված պատասխանում է. «Ո՛չ, ով քեզ սպանի, յոթնապատիկ վրեժի կարժանանա», Ծննդ. 4, 15: Սա նշանակում է, որ Հայր Աստված կամենում է կտրել,

դադարեցնել սպանությունների շղթան, անիրավության հանգույցը քանդել և ունենալ նոր մարդկություն, բայց տեսնելով, որ մեղքն ավելի է տարածվում, ջրհեղեղով ջնջում է մարդկությանը՝ մարդու առջև նոր հեռանկար բացելով: Սա էլ չարդարացրեց Աստծո սպասումները և Աստված ոչ թե մարդկությունը ջնջեց, այլ Իր Միածին Որդու արյամբ լվաց մարդկությունը: Տեսե՛ք Արարչի սիրո չափը: Առաջին արդար պատժին փոխարինեց Աստծո ինքնազոհ սերը, որ «ծածկում է բազում մեղքեր», Ա Պտ., 4, 8:

Աստվածային սիրո այս վեհությունն ու Աստծո Որդու անձնազոհությունն է մեզ օգնում հասկանալ, թե ինչպիսի՜ արժեք ունի Աստծո համար մարդկային կյանքը, մարդու արժանապատվությունը, որը հիմնված է աստվածանմանության վրա: Բայդ Աստված մարդուն Իր նման ստեղծելով՝ մարդուն սիրում է հենց իր՝ մարդու՛ համար՝ որպես ինքնին արժեք, որ իր մեջ կոչված է կատարելապես արտացոլելու բացարձակ բարին, սերը, գեղեցիկը և հավիտենական կյանքը: Ընդ որում, յուրաքանչյուր մարդ արարած սա անում է և կոչված է կատարելապես անելու ուրույն ձևով, քանի որ յուրաքանչյուր մարդ աստվածային յուրահատուկ, անզուգական, անկրկնելի մի ստեղծագործություն է՝ կոչված կատարելության՝ միայն իրեն հատուկ ճանապարհով: Մարդկության մեծամասնությունը դեռևս չի բացահայտել իր ուրույն եզակիությունը և իր մեջ աստվածային բարձրագույն արժեքների բացահայտման, զարգացման ամբողջ կարողությունը, որ Աստված ներդրել է յուրաքանչյուր մարդու սրտում և գենետիկ ծրագրում: Մարդն ապրում է իր հոգևոր-բարոյական կարողությունների միայն չնչին մասի մակերեսային գիտակցությամբ և արժևորմամբ: Տիրոջ Սուրբ Եկեղեցու նպատակն է՝ մարդու համար ստեղծել բոլոր հնարավորությունները՝ աստվածատուր այդ կարողությունները բացահայտելու և զարգացնելու համար, որովհետև դա է նշանակում լավագույն ձևով պաշտպանել մարդու կյանքի իրավունքը: Ուրեմն, մարդուն սպանել՝ նշանակում է ոտնձգություն կատարել Աստծո պատկերի, բարության, սիրո և գեղեցիկի մի ուրույն ստեղծագործության նկատմամբ, Աստծո զավակի նկատմամբ, որ կրում է իր Հոր՝ Աստծո պատկերը:

Կյանքի պաշտպանությունը իրավունք է անձի համար և պարտականություն է՝ ուրիշների համար, հետևաբար ինքնապաշտպանության կամ ուրիշների կողմից մեկի կյանքի պաշտպանության համար կատարված հարկադիր բռնությունը կամ սպանությունը մեղք չի համարվում, քանի որ ի սկզբանե սպանելու դիտավորություն չկա, այլ՝ պաշտպանության: Այս սկզբունքի վրա է հիմնված ազգային ինքնապաշտպանական մարտերի, պատերազմում հայրենիքը պաշտպանելու արդարացումը և այս գործում նահատակությունը. այս է պատճառը, որ Հայ Եկեղեցում Վարդանանք և Ղևոնդյանք սուրբ են հռչակված:

Եկեղեցին կյանքի իրավունքը պաշտպանում է ոչ թե երեխայի ծննդից, այլ ավելի առաջ՝ մոր արգանդում ձվաբջջի բեղմնավորումից՝ զիգոտի առաջացումից սկսած մինչև մարդու խոր ծերություն՝ բնական մահը: Առայժմ միջազգային բարոյական և իրավական պրակտիկայում միայն Կաթողիկէ Եկեղեցին է, որ կետ առ կետ մշակել է նախածննդյան շրջանում երեխայի կյանքի իրավունքի պաշտպանության դրույթներ , որոնք արտահայտում են Եկեղեցու ուսմունքը, ինչպես նաև համահունչ են Երեխայի իրավունքների պաշտպանության հռչակագրին (1959թ.) և կոնվենցիային (1989թ.), որտեղ սակայն այդ մասին ընդամենը մեկ կետ կա: Իսկ քաղաքացիական օրենքներում նախածննդյան շրջանում երեխայի իրավունքների պաշտպանության մասին կամ ընդհանրապես դրույթներ չկան, կամ կան միայն մասամբ պաշտպանող դրույթներ: Ավելին, պետությունների մեծամասնությունը թույլատրում է հղիության արհեստական ընդհատումը՝ աբորտը, նաև՝ ըստ մոր ցանկության: Կան երկրներ, որտեղ կաթողիկէ հավատքից մղված ջանում են օրենսդրական արգելքներ սահմանել աբորտների նկատմամբ, բայց որոշ կազմակերպություններ պայքարում են այսպես կոչված «աբորտի իրավունքի» օրինականացման համար: Մինչդեռ սա նշանակում է պարզապես մանկասպանության իրավունք, ինչը մարդասպանության ծանրագույն մի ձև է՝ անկախ մոր արգանդում ձևավորման փուլից, այսինքն մարդկային էմբրիոնի տարիքից: Էմբրիոնը իր կյանքի առաջին վայրկյանից Աստծո եզակի մի ստեղծագործություն է՝ պարգև և արդեն իսկ անհատականություն, թեև ֆիզիկապես և հոգեպես դեռևս սաղմնային փուլում. «Քեզ դեռ որովայնում չստեղծած՝ ընտրեցի քեզ, դեռ արգանդից դուրս չեկած՝ սրբացրի քեզ», ասում է Տերը՝ Երեմիա մարգարեին, Երմ. 1, 5: Ցավով պետք է ասել, որ աբորտը այնքան սովորական բան է դարձել մանավանդ սովետական և հետսովետական հասարակությունների մեջ, որ շատերի համար սպանություն չի համարվում, այլ վաղուց ի վեր անցանկալի հղիության կանխման միջոց է դիտարկվում, ինչը ծանր մեղք է: Հարկավոր է անդրադառնալ այս մեղքին, գիտակցել, ցավ ապրել ու զղջալ արածի համար և չփնտրել տարբեր արդարացումներ՝ Աստծո առաջ մաքուր երևալու համար: Ոչ մի սոցիալական վիճակ չի կարող արդարացնել սպանության մեղքը:

Կյանքի իրավունքի պաշտպանությունը կամ «Մի՛ սպանիր» պատվիրանը մերժում է նաև ինքնասպանությունը և էվթանազիան: Մարդն իրավունք չունի խլելու նաև իր սեփական կյանքը: Կյանքի շնորհման և խլելու իրավունքը պատկանում է բացառապես Արարչին, որ սակայն երբեք չի ուզում իր ստեղծած որևէ արարածից խլել կյանքը, քանի որ համակ սեր է. «Աստված սեր է», Ա Հվի. 4, 8: Եկեղեցին ևս կոչված է սիրով փայփայելու և պաշտպանելու մարդկային կյանքը: Սա ենթադրում է ոչ միայն սպանության արգելքը, այլև՝ այնպիսի վերաբերմունքը, որը կարող է մարդուն հասցնել բարոյական կամ հոգեբանական անկման, և որ ավելի սարսափելի է, մահվան: Այդ է պատճառը, որ Տերն առավել վսեմ մեկնություն է տալիս «Մի սպանիր» պատվիրանին՝ ասելով. «Լսել ե՞ք, թե ինչ ասվեց նախնիներին. «Մի՛ սպանիր»…բայց ես ձեզ ասում եմ, ով անտեղի բարկանա իր եղբոր վրա, դատաստանի կենթարկվի, և ով իր եղբորն

ասի հիմար, ենթակա կլինի ատյանի…», Մտթ. 5, 21-22: Ավելին Տերը պատվիրում է ընդհանրապես վրեժխնդիր չլինել և չարին հատուցել միայն բարությամբ, աղոթքով և օրհնությամբ: Միայն այսպես կարելի է կանխել չարի տարածումը և հաղթել մահվանը, ճիշտ ինչպես Տերը հաղթեց իր Զոհաբերությամբ: Ուրեմն, սրանից սովորում ենք, որ սպանելը սկսվում է վիրավորանքից, ատելությունից: Մեկ բառն անգամ կարող է սպանել կամ առնվազն քանդել, տրտմեցնել, ինչ-որ բան մեռցնել մարդկային հարաբերություններում, երեխայի ապագայի մեջ, ընտանեկան սիրո կյանքում, սպանել հույսը: Տերը մեզ պատվիրում է ամեն ինչ բուժել հենց արմատից: Տերը բուժում էր ոչ միայն չարիքի արմատը՝ մեղքը, այլև հաղթում էր ամենածանր հետևանքը՝ մահը՝ հարություն տալով մեռելներին. «Ես եկա որպեսզի կյանք ունենան և առատորեն ունենան», Հվի. 10, 10:

Եվ վերջապես, եթե ուզում ենք չսպանել, որպես Քրիստոսի աշակերտներ, պետք է աշխատենք խաղաղություն հաստատելու ուղղությամբ: «Երանի՜ խաղաղարարներին, որովհետև նրանք Աստծո որդիներ պիտի կոչվեն», Մտթ, 5: Քրիստոս մեզ տալիս է Իր խաղաղությունը, որն այս աշխարհից չէ, մշտնջենական է, միայն այդ խաղաղությամբ է, որ կարող ենք արմատախիլ անել մեր սրտերից ատելությունը, թշնամանքը, վերջ տալ պատերազմներին: Այդ խաղաղությունն է, որ բխում է Քրիստոսի խաչից, որով մեզ բոլորիս հաշտեցնում է Հայր Աստծո հետ:

ԳԻՏԵ՞Ք, ՈՐ ՄԵՂՔԸ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՈՒՍՏ Է, ԻՍԿ ՁՂՋՈՒՄԸ՝ ԴՐԱ ՎԵՐԱԳՏՆՈՒՄԸ

Մեծ Պահքի երրորդ կիրակին կոչւում է «Անառակի կիրակի»: Եկեղեցին մեզ այսօր հրաւիրում է խորհրդածելու Ղուկասի աւետարանում պատմուող յայտնի առակի մասին, որը մեզ առատ նիւթ է տալիս անդրադառնալու մեր մեղաւոր ընթացքին եւ Աստուծոյ անհուն ողորմութեանը, ստիպում է մեզ վերանայել մեր յարաբերութիւնը՝ թէ՛ Աստուծոյ եւ թէ՛ մերձաւորի հանդէպ: Կրտսէր որդին խնդրում է հօրը իրեն տալ ունեցուածքի իր բաժինը, եւ Հայրը բաժանում է իր որդիներին իր ունեցուածքը. գրաբար տէքստում գրուած է. «բաժանեաց նոցա զկեանսն» (բաժանեց նրանց կեանքը), Ղկ.,15,12, հունարէնը ունի bion, որ նշանակում է կեանք: Այս մարդն իր զաւակներին բաշխեց իր կեանքը, իր վաստակը: Քանի որ այս պատմութիւնը Յիսուս պատմեց, որպէսզի հնարաւորութիւն տա մտածելու Աստծոյ եւ մեղաւոր մարդու յարաբերութիւնների մասին, պատմութեան մէջ հօր կողմից իր կեանքը բաշխելը մեզ հուշում է, որ Աստուած եւս առաւելապէս, որպէս Հայր, մեզնից իւրաքանչիւրին բաժանում է Ի՛ր կեանքը, որ յաւիտենական կեանքն է: Իւրաքանչիւր մարդ իր մօր արգանդում Աստծուց է ստանում իր կեանքը՝ որպէս նուէր եւ ապա ընդունում յաւիտենական կեանքն ունենալու իրաւունքը մկրտութեան սուրբ խորհրդի միջոցով: Աստուած մարդուն իր կեանքը շնորհելով, առատաձեռնորեն տալիս է նաեւ Իր աստուածային ներկայութիւնը, Իր պատկերն ու նմանութիւնը, Իր շնորհները, տաղանդները, իւրահատուկ մարդկային բնաւորութիւնը, կեանքի ուղեգիծը, որը մենք համարում ենք գենետիկ ժառանգութիւն: Բայց Աստուած իւրաքանչիւր մարդ արարածի տալով իր շնորհների եւ պարգեւների մի մեծ հարստութիւն՝ կամենում է, որպէսզի մենք պատասխանատուութեամբ եւ երախտագիտութեամբ օգտագործենք եւ բազմապատկենք դրանք: Սուրբ Պողոսը կորնթացիներին հորդորում է «զգոյշ լինել, որ չլինի թէ ի զուր ընդունած լինեն Աստծոյ շնորհը» (Բ Կրնթ., 6, 1-2):

Առակի կրտսէր որդին ի զուր վատնեց իր հօր կողմից իրեն շնորհուած կեանքը կամ Աստծոյ շնորհները, ապրեց հորից հեռու, փողի վերածեց ամէն ինչ, ապրեց անառակ կեանքով՝ բացարձակապէս չգնահատելով Աստծո կողմից իրեն շնորհուածի արժէքը: Նա հասել էր իր անկման վերջնակէտին, հատակին. նոյնիսկ խոզերն աւելի՛ պէտք էին մարդկանց, քան ինքը. «ցանկանում էր իր որովայնը լցնել եղջերենու պտղով, որ խոզերն էին ուտում, եւ ոչ ոք նրան չէր տալիս», 15,16: Այս անառակ որդու նման այսօր մարդկութեան մի ճնշող զանգուած ապրում է Աստծուց հեռու, աւելորդ շռայլութեան, անառակութեան մեջ՝ իրենց աստուածատուր պարգեւները մսխելով՝ միայն աւելի շատ փող ունենալու եւ

հաճոյքներին տրուելու համար: Բայց քանի՞սն են առակի կրտսէր որդու նման անդրադառնում, որ իրենք նոյնիսկ խոզերի՛ց էլ վատ վիճակում են գտնվում:

Իր թշվառ վիճակին անդրադառնալիս՝ անառակ որդին հիշում է այն երանելի վիճակը, ինչից ինքն իրեն զրկեց՝ իր անմտութեան, հեշտասիրութեան պատճառով: Հիշեց, որ կա մի տեղ, ուր ինքը կարող է սիրված, գնահատուած լինել, որտեղ իրեն սպասող կա, որովհետեւ ծնողը միշտ սպասում է իր զաւակին: Նա հիշեց, որ իր հոր ագարակում վարձկանն՝ե՛րն անգամ առատ հաց ունեն, իսկ ինքը սովամահ կորչում է: Ինքը, որ զաւակ է եւ ժառանգ, զրկուած է այդ հացից: Այսպէս, այն քրիստոնեաներն, ովքեր շարունակում են ապրել մեղքի ճահճում, զրկուած են Տիրոջ զօրացուցիչ ներկայութիւնից, որ մեզ տրւում է սուրբ խորհուրդների եւ առաւելապէս Սբ. Պատարագի ժամանակ՝ Տիրոջ Մարմնի եւ Արեան միջոցով: Իսկ նրանք, ովքեր գիտակցում են Տիրոջ ներկայութեան մեջ, Քրիստոսի Խորհրդաւոր Մարմնի մեջ՝ Եկեղեցում, լինելու կարեւորութիւնը, առատ Հաց ունեն, Հացը, որը կեանք է պարգեւում աշխարհին (Յվի., 6):

Իր վիճակի գիտակցութիւնը առակի կրտսեր որդուն տարաւ խորագոյն զղջման. նա հասկացաւ, որ միակ երջանկութիւնը ոչ թէ աշխարհի հաճոյքներն են, այլ՝ հօր մօտ ապրելը.

«Վեր կենամ, գնամ իմ հօր մոտ եւ ասեմ նրան. Հա՛յր, մեղանչեցի երկնքի եւ քո առաջ: Այլեւս արժանի չեմ քո որդին կոչուելու, ինձ դարձրու՛ քո վարձկաններից մէկը»:

Գրաբար տեքստում «վեր կենալ» արտայայտութեան փոխարէն գրուած է՝ «յարուցեալ գնացից»:

«Յարուցեալ» բառը քրիստոնեաներիս համար աւելի խոր իմաստ ունի, քան «վեր կենալը»՝ աշխարհաբար թարգմանութեան մէջ: Դա անկեալ վիճակից ազատագրուե՛լն է, հաղթե՛լն է սեփական թուլութեանը, հաղթելն է մեղքի գերութեանը, մահուանը, վերածնունդ է, նոր կեանք սկսելն է: Այս նոյն բառն է օգտագործւում մահուան հանդէպ Տիրոջ հաղթանակի համար՝ յարեաւ ի մեռելոց:

Եւ երբ որդին «յարուցեալ» գնում է հօր մօտ, հայրը նրան տեսնում է՝ մինչ շատ հեռու էր: Հայրը սպասում էր իր որդու վերադարձին՝ նա՛խքան, որ որդին որոշում առաւ վերադառնալու: Այդպէս էլ Հայր Աստուած մշտապէս սպասում է իր հեռացած որդիների վերադարձին՝ անկախ նրանից՝ մենք որոշում ենք վերադառնալ իր գիրկը թէ ոչ: Եւ Ղուկասն ասում է. «տեսաւ նրան Հայրը եւ գթաց, փաթաթուեց եւ համբուրաց նրան»: Որքա՛ն մեծ սէր ունի այս հայրը իր զաւակի հանդէպ, որը, սակայն, վատնեց իր ամբողջ ժառանգութիւնը, իր կեանքը, որ ստացաւ Հօրից: Այս Հայրը մեզ որոշ պատկերացում է տալիս Աստծոյ կերպարի մասին, բայց Աստուած շա՛տ աւելի ողորմած Հայր է: Նա շատ աւելի՛ է ուրախանում իր կորուսեալ որդիների վերադարձի համար, քան այս հայրը, որ հրամայեց պարարտ եզը մորթել, փոխել նրա նախկին պատմուճանը, տալ մատանի եւ կօշիկներ, այսինքն՝ վերադարձնել նրա կորսուած արժանապատուութիւնը: Մարդ, Տիրոջ մօտ վերադառնալով՝ վերականգնում է իր մարդկային արժանապատուութիւնը, իր ազատութիւնը, իր ճշմարիտ տեղը Աստծոյ առաջ եւ մերձաւորի մօտ, արարչագործութեան մէջ, վերագտնում է իր ներքին ներդաշնակութիւնը ինքն իր հետ եւ Աստծո հետ, արարչագործութեան հետ:

Երկրորդ կարեւոր կէտը, որ պէտք է անդրադառնանք՝ աւագ որդու դիրքորոշումն է եւ Հօր սէրը նաեւ նրա նկատմամբ: Աւագ որդին նախանձեց այն վերաբերմունքի համար, որ հայրը ցուցաբերեց իր եղբօր հանդէպ, որ հեռացել էր իր հայրական տնից, մինչդեռ ինքը քանի տարի էր ծառայում էր հօրը եւ երբեք, ասաց, պատուիրանները զանց չառաւ, իսկ հայրը մի ուլ իսկ չտուեց նրան: Ուշադրութիւն դարձնենք, որ գրուած է, թէ հայրը, դուրս գալով՝ աղաչում էր նրան: Մարդկայնօրէն եթէ մտածենք, հայրը չպէտք է սկսեր աղաչել որդուն, որ նախանձում էր եղբօրը, այլ պէտք է մնար իր հայրական դիրքում: Բայց սա Աստծո՛յ կերպարն է, որ երբէք չի դադարում տարբեր միջոցներով համոզել իւրաքանչիւրիս դարձի գալու: Աստծոյ համար մեզ հետ հարաբերութիւններում իւրաքանչիւրիս փրկութիւնը ամենակարեւո՛րն է. Աստուած մարդուն այնքան սիրեց, նոյնիսկ նրա մեղաւոր վիճակում, որ չխնայեց իր Որդուն անգամ, ուրեմն՝ Ինքն Իրեն երբէ՛ք չի խնայի՝ մեզ փրկելու համար: Հայրն ասաց իր աւագ որդուն. «Դու միշտ ինձ հետ ես, եւ ամեն ինչ որ իմն է, քոնն է, այլ դու պէտք է ուրախանայիր եւ ցնծայիր, որովհետեւ քո այս եղբայրը մեռած էր եւ կենդանացաւ, կորած էր եւ գտնուեց»:

Հետեւաբար, մենք էլ, եթէ մեզ համարում ենք Քրիստոսի աշակերտները, պարտաւոր ենք Հօր նման ուրախանալ, երբ տեսնում ենք, որ մեր կորուսեալ եղբայրներից, քոյրերից մէկը վերադառնում է Հօր մօտ: Երբ տեսնում ենք, որ մեղաւոր մէկը, դարձի գալով, եւ Սբ. Պատարագին մասնակցելով հաղորդւում է Տիրոջ Մարմնին եւ Արեանը, կամ արժանանում է նոյն պատուին, ինչ մենք ինքներս, որ տարիներ շարունակ եկեղեցում ենք եղել եւ ջանացել հաւատարիմ մնալ: Չպէտք է արգելք լինենք զղջացող որեւէ մէկին, այլ հարկ է, որ աջակցենք, ուրախանանք, յիշելով, որ Աստուա՛ծ է ուրախանում նրա համար:

Եթե սիրում ենք Աստծուն, պէտք է պատրաստ լինենք կիսելու Նրա ուրախութիւնը, երբ տեսնում ենք, որ Աստծո կորուսեալ զաւակներից մէկը վերադառնում է Հօր գիրկը՝ անկախ նրանից, թէ ինչ է արել այդ անձը նախկինում: Աստծո գիրկը միշտ բաց է իր բոլոր զաւակների համար, որովհետեւ Տէրն իր արեւը ծագեցնում է եւ բարիների եւ չարերի վրայ: Իւրաքանչիւր մարդ արարած Աստծոյ մի անկրկնելի ստեղծագործութիւն է, Աստծո պատկերի մի անկրկնելի դրոշմ, արտացոլում: Հետեւաբար, երբ մարդ անկեղծ զղջմամբ ջանք է գործադրում ինքն իր մէջ յստակեցնելու Աստծո պատկերը եւ նմանութիւնը, աւելի շատ սիրելու եւ ճանաչելու Աստծուն, ապա միայն պէտք է ուրախանալ եւ ցնծալ դրա համար եւ ոչ թէ նախանձել ու արգելք ստեղծել: Եթէ Աստուած հնարաւորութիւն է տալիս իւրաքանչիւրին, մենք էլ պէտք

է ջանանք լինել Աստծո նման մեծահոգի, առատաձեռն, սիրենք եւ ողջունենք եւ ոչ թէ լինենք միայն հանդուրժող: Աւելին, մեր առաքելութիւնն է ջանադրաբար աշխատել, որ կարողանանք գոնէ մէկ մեղաւորի դարձի բերել, եւ երբ դա մեզ յաջողուի, կը կարողանանք ծածկել մեղքերի մի ամբողջ բազմութիւն, ինչպէս գրում է Յակոբոս առաքեալը (Յկբ. 5, 20):
Ի վերջո, յիշե՛նք որ մեր հանդէպ Աստծո ողորմածութիւնը կախուած է նրանից, թէ արդեօ՞ք մենք պատրաստ ենք լինել ողորմած ուրիշների հանդէպ. «Երանի՛ ողորմածներին, որովհետեւ նրանք ողորմութիւն կը գտնեն» Մտթ. 5, 7: Ամեն:

ՁՂՋՈՒՄԸ

Հոգևոր կրթություն Մեծ Պահոց, Գ շաբաթ, թեմատիկ շարք՝ «Ապաշխարություն», խորհրդածություն 1

Նախորդ երկու շաբաթներին մեր հոգևոր կրթության ընթացքում մեր ուշադրությունը կենտրոնացրել էինք պահքի և մեղքի թեմաներին: Այս երրորդ շաբաթվա ընթացքում խորհրդածելու ենք ապաշխարության մասին, որը տրամաբանորեն շարունակում է նախորդ թեմաները: Երբ հոգևոր լույսով քննության ենք առնում, թե ինչ բան է մեղքը և սկսում ենք մեկ առ մեկ տեսնել սեփական մեղքերն ու զանցանքներն Աստծո և մերձավորի առջև, նույն հոգևոր լույսը, որ Աստծո շնորհն է, մեզ հրավիրում է անկեղծորեն զղջալ: Ուրեմն, եկեք նախ տեսնենք, թե ինչ է զղջումը:
Զղջումը ենթադրում է նախևառաջ անկեղծորեն ցավ զգալ կատարած քայլերի կամ ցանկության համար՝ ոչ թե զգացական մի վիճակ միայն, այլ՝ գիտակցված սխալի հետևանքով հոգեկան ցավ՝ կառավարելի գիտակցության կողմից, լուրջ և հավասարակշռված վերլուծությունների արդյունք: Բայց կարևոր է, որ այդ գիտակցությունը ուղեկցվի հոգեկան ցավի և տրտմության զգացումով, այլապես խոր զղջման մասին խոսելը դժվար կլինի. սխալի մակերեսային ընդունումը կամ փոխզիջումային տարբերակով սխալ լինելու հետ համաձայնելը ճշմարիտ և անկեղծ զղջում չէ, իսկ Աստված ընդունում է միայն անկեղծ զղջումը, քանի որ Ինքն անկեղծության աղբյուրն է և գերագույն Ճշմարտությունը: Քանի՛ անգամներ Հիսուս մերկացնում է փարիսեցիների և օրենսգետների կեղծավորությունը՝ նրանց նմանեցնելով սպիտակեցրած գերեզմանների, որոնք դրսից մաքուր ու հարդարված են երևում, բայց ներսից լի են ամեն տեսակ աղտեղություններով: Մարդը սիրում է արտաքնապես մաքուր և սուրբ երևալ, բայց Աստծո համար կարևորը սրտի՛ մաքրությունն է կամ սրտի դարձը, իսկ սիրտը մաքրում է ցավը, կամ ինչպես սուրբ հայրներն էին ասում՝ հոգեկան վիշտը՝ (animi cruciatus) գործած մեղքերի համար: Իրական ցավ է պատճառում մեղքի ամբողջական էության գիտակցությունը, մեղքի ողջ տարողությունը և հետևանքները հստակ տեսնելը և հասկանալը, ինչի համար անհրաժեշտ է սեփական մեղքերի մասին մտածել սրբության դիտանկյունից, ինչպես խոսում էինք այս մասին մեր նախորդ խորհրդածությունների ընթացքում: Այսինքն, հարկավոր է լինել Քրիստոսի հետ միասին, ջանալ հասկանալ Քրիստոսի սուրբ կյանքը, Եկեղեցու էությունը, լինել Եկեղեցում, կիսել հավատացյալների սրբության ձգտումները, միասնական աղոթքները, մասնակցել, ի վերջո, Սուրբ Պատարագին, լսել ընթերցվող Ավետարանի յուրաքանչյուր բառը՝ համակ ուշադրությամբ, հասկանալ, որ դրանք վերաբերում են յուրաքանչյուրիս սեփական անձին, հենց ինձ, և ընդհանուր խոսքեր չեն, որպեսզի միշտ տեսնենք մեր մեղքերը և ցավ ապրենք դրանց համար: Անկեղծորեն զղջալու և ցավ զգալու համար անհրաժեշտ է ջանալ հասկանալ Հիսուսի՛ ցավը, որ կրեց մե՛ր մեղքերի պատճառով, ի՛մ մեղքերի պատճառով, որպես ի՛մ մեղքերի անխուսափելի հետևանք: Այս փաստը մենք կարող ենք լավագույն ձևով ըմբռնել, մասամբ վերապրել, զգալ մեր մաշկի վրա՝ Սուրբ Պատարագի ժամանակ, որ ներկայացնում է այդ Ցավը՝ Զոհը, որ «Պատարագ» բառի իմաստն է: Իսկ այս պահոց օրերին մենք հրավիրված ենք լրջորեն մտածելու և վերապրելու Քրիստոսի Խաչի ճանապարհը՝ հանգրվան առ հանգրվան, նաև ջերմեռանդական կայանների աղոթաշարքի օգնությամբ, որը լավագույն մի օգնություն է հասկանալու յուրաքանչյուրիս համար Քրիստոսի կրած տառապանքի և ցավի խորհուրդը: Ամենացավալին այն է, որ Քրիստոս Արդա՛րը և Անմե՛ղը տառապեց և շարունակում է տառապել մեր մեղքերի պատճառով: Իսկ անարդար տառապանքը է՛լ ավելի է սրում ցավի զգացումը, եթե գիտեմ, որ նաև ե՛ս եմ մեղավորը՝ այդ անարդարության համար: Քրիստոսի տառապանքի իմաստը հասկանալով՝ չենք կարող չլացել մեր մեղքերի համար, ինչպես Հիսուս պատվիրում է Իր համար լացող կանանց: Նա, ով ուզում է Վերոնիկայի նման իր սրտում կրել տառապյալ Հիսուսի պատկերը, չի կարող չազդվել այդ ցավալի պատկերից և չլացել սեփական մեղքերի սարսափելի պատկերներից: Նա, ով Մարիամի նման լռելյայն հեկեկալով կանգնում է Հիսուսի խաչի տակ, երգում «Կայր առ խաչին», չի կարող նրա մայրական ցավը չզգալ սեփական սրտում: Ուրեմն, զղջալու համար հարկավոր է Հիսուսի և Մարիամի հետ միասի՛ն ապրել մեր մեղքերի հետևանքները և բռնել դարձի ճանապարհը:
Աստված այնպես է ծրագրել ամեն ինչ, որ մարդը միշտ տեսնի իր սխալների հետևանքները և հատուցումը՝ հենց մարդու՛ ուղղման և դարձի գալու համար: Յուրաքանչյուր ակամա տառապանք առիթ է՝ կամավոր տառապանքի ճանապարհ սկսելու համար, այսինքն՝ ապաշխարության համար, որի մեկնարկը պետք է տա անկեղծ զղջումը:
Սակայն, մեղքի համար ցավ չի կարող զգալ նա, ով ապրում է եկեղեցուց դուրս, ոչ Քրիստոսի հետ մտերիմ կյանքով, այլ՝ չարի հետ ակամա մտերմության մեջ, անտարբերության, հոգևոր քնի մեջ, որից նրան կարող է արթացնել մեղքի պատճառով վրա հասնող ակամա ցավը: Շատ հաճախ այդ ցավը չի կարողանում դառնալ գիտակցված զղջման ցավ, որովհետև մարդը հեռու է Եկեղեցուց և Քրիստոսից, և միայն Քրիստո՛ս կարող է օգնել ակամա ցավը դարձնել

գիտակցված ցավ և զղջում, իմաստավորված տառապանք, որից անպայմանորեն բարիք է ծնվելու, և քանի որ ցավի մեջ գտնվողն այս պարագայում Քրիստոսից և Եկեղեցուց հեռու է, դարձյալ դևի ազդեցությամբ ընկնում է հուսահատության անդունդը, որից դուրս գալը ահավոր բարդ է, քանի որ մարդը միայնակ է իր հոգևոր կյանքում՝ թողնված դևերի բացարձակ քմահաճույքին և հայեցողությանը: Այսպիսի վիճակը տանում է դեպի կործանում. Հուդուն Հիսուսին մատնելուց հետո զղջաց, ետ տվեց երեսուն արծաթը, բայց չկարողացավ դուրս գալ հուսահատության անդունդից, քանի որ չկարողացավ այլևս ետ դառնալ դեպի Քրիստոս, չկարողացավ Հիսուսի հետ միասի՛ն հաղթահարել իր զղջման ցավը, չկարողացավ Տիրոջ բուժիչ լույսով առողջանալ հոգեպես. գուցե, եթե Հիսուսին արդեն ձերբակալած չլինեին, Հուդան կարողանար կամ եթե Պետրոսի նման, որ ևս երեք անգամ ուրացավ Հիսուսին, կարողանար հանդիպել Հիսուսի ամեն ինչ ներող հայացքին. «Տերը դարձավ և նայեց նրան: Եվ դուրս ելնելով՝ Պետրոսը դառնորեն լաց եղավ», Ղկ. 22, 61:

Ցավի, վշտի, զղջման արտասուքները հորդեցնողն իրականում Աստծո շնորհն է՝ այն աստվածային սիրո զորությունը, քնքշանքը, ամեն ինչ հասկանալու մշտական պատրաստակամությունը, մարդասիրությունը, որ Պետրոսը գտավ իրեն նայող Հիսուսի հայացքի մեջ, Քահանայապետի տան բակում վառված խարույկի մոտ: Հուդան չկարողացավ վայելել այդ երանելի հայացքը: Նրա նման շատերին է կարողանում կործանել սատանան, քանի որ ժամանակին մերժել են այդ հայացքը, որ Տիրոջ դարձի գալու և սիրո հրավերն է: Այդ հայացքը յուրաքանչյուր քրիստոնյա կարող է զգալ իր վրա՝ նայելով Խաչի վրա իր թևերը մեզ համար տարածած Հիսուսին, Սուրբ Սեղանի վրա մեզ համար ամեն օր պատարագվող Հիսուսի Մարմնին և Արյանը, որոնցով Տերն իր հայացքը հառում է ուղիղ մեր սրտին, մեր կյանքի տարբեր, միայն մեզ բաժին ընկած պայմաններում, ինչպես Պետրոսին՝ խարույկի մոտ:

Ուրեմն, մեղանչած մարդուն զղջացող սիրտ տվողը Աստված է: Զղջումը աստվածային շնորհի գործն է. Աստված իր զորությամբ դիպչում է մարդկային սրտին: Երեմիան բացականչում է. «Տեր, դարձի բե՛ր մեզ, և մենք դարձի կգանք», Երմ. 5, 21: Իսկ Հիսուս իրեն չհասկացող հրեաներին ասում է. «Ոչ ոք չի կարող գալ դեպի ինձ, եթե նրան չձգի Հայրը, որ ինձ ուղարկեց», Հվի. 6,44: Խաչյալ Հիսուսի՝ մեղքերի տեգով խոցված Սուրբ Սրտից առատորեն հորդած սիրո շնորհը զղջման հրավեր և հնարավորություն է ամբողջ աշխարհի համար, ովքեր սա գիտակցում են, մոտենում են շնորհի այդ աղբյուրին և ըմպում են կենարար, անսպառ ջուրը, որպեսզի երբեք չծարավեն, ինչպես Տերն ասում է սամարացի կնոջը՝ Հակոբի ջրհորի մոտ: Այդ կենարար ջուրը ստիպում է մարդկային խոցված սրտին առատ արտասուք հոսեցնել, որը բուժիչ է: Զղջացող մարդը զգում է, թե ինչպես է իր ներքին ցավից վերածնվում նոր մարդն իր մեջ, ինչպես է ինքը մեռնում մեղքի համար, ինչպես է արտասուքը պարարտ հող նախապատրաստում՝ Աստծո Խոսքի սերմերի ծլարձակման համար: Սբ. Ամբրոզիուսն ասում էր, որ եկեղեցում երկու տեսակի դարձ կա՝ ջուրը և արտասուքը՝ Մկրտության ջուրը և զղջման արտասուքը»: Մկրտությունը մարդու առաջին դարձի հնարավորությունն է, իսկ զղջումը՝ երկրորդ և ավելի դարձի: Տերտողիանոսն ասում էր, որ զղջումը և ապաշխարությունը նման են «երկրորդ փրկարար տախտակի՝ նրա համար, ով ենթարկվել է նավաբեկության, այսինքն՝ մեղքի պատճառով զրկվել է աստվածային շնորհից»:

Ծանր մեղքի հետևանքով մարդը զրկվում է Աստծո սրբարար շնորհից, որ ստանում է Մկրտության միջոցով, զրկում է իր «սպիտակափայլ պատմուճանից»: Բայց Աստված միշտ մարդուն տալիս է երկրորդ հնարավորությունը, որպեսզի վերադառնա շնորհի վիճակի մեջ՝ կամ նորից մտնի եկեղեցու նավը՝ փրկության նավահանգիտ հասնելու համար: Այդ փրկարար հնարավորությունները կամ զղջման շնորհը կարող է ներկայանալ մեղավորի համար ուրիշների աղոթքների միջոցով, սեփական մեղքի ծանր հետևանքներից ծնված ցավի միջոցով, երբ մարդն իր հայացքը ուղում է հառել նորից Աստծուն, Ավետարան լսելու միջոցով կամ այլ նշանների, որոնք միայն Աստված գիտի, թե ինչպես է տնօրինում: Քանի որ Նավապետը՝ Քրիստոս, միշտ ուշադիր է նավաբեկյալների նկատմամբ, որպեսզի գտնի և վերադարձնի դեպի փրկության նավը՝ Սուրբ Եկեղեցին: Երբ զղջումը մարդկային հոգում հասունանում է, արտասուքը դուրս է հորդում, գալիս է մեղքերը խոստովանելու պահը: Խոստովանության կամ հաշտության խորհրդի մասին կխոսենք հաջորդ անգամ, սիրելիներ: Եկե՛ք անկողոնորեն աղոթենք մեղավորների դարձի համար. ամեն:

Ի՞ՆՉ Է ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ և ԻՆՉՊԵ՞Ս ԽՈՍՏՈՎԱՆԵԼ

Հոգևոր կրթություն Մեծ Պահոց, Գ շաբաթ,
թեմատիկ շարք՝ «Ապաշխարություն».
խորհրդածություն 2

Մեր նախորդ խորհրդածությունը զղջման մասին էր՝ գործված մեղքերի պատճառով այն ցավի և հոգևոր տրտմության մասին, որ ամոքում են մարդկային հոգին: Անկեղծ զղջման ցավը, առատ արտասուքը, որ հորդում է

մարդու սրտից, հոգին հասունացնում են մեղքերի խոստովանության և Ապաշխարության կամ Հաշտության խորհրդի ընդունման համար:

Ի՞նչ է Ապաշխարության կամ Հաշտության խորհուրդը: Այն Եկեղեցու յոթ խորհուրդներից մեկն է, որ Տերն մեր Հիսուս Քրիստոս սահմանել է արդեն մկրտվածների համար՝ որպես բուժիչ կամ վերակենդանացնող խորհուրդ: Մկրտության ժամանակ մարդը Աստծո սրբարար շնորհով սրբվում է ոչ միայն ադամական մեղքից, որ ժառանգում է իր ծնե, այլև արդեն գործած ամեն տեսակ մեղքերից: Մկրտությամբ մեղքերը ջնջվում են, բայց մարդկային վնասված բնության մեղսագործելու հակումը կամ, ինչպես ասում են հայրերը, կիրքը, մնում է՝ մարդկային թուլություններով և չարի կողմից խոցելիությամբ հանդերձ: Հետևաբար, չնայած, աստվածային շնորհի մեջ ապրելուն, մարդը Մկրտությունից հետո ևս շարունակում է մեղքեր գործել՝ թե՛ ծանր, թե՛ թեթև կամ առօրեական: Ծանր մեղքը մարդուն զրկում է աստվածային սրբարար շնորհի ներկայությունից և արժանի դարձնում հավերժական դատապարտության, իսկ առօրեական մեղքերը վիրավորում են Աստծուն և մերձավորին, թուլացնում սերը: Քանի որ մեր Տերն իր անձնվեր սիրով հոգ է տանում իր սուրբ ընտանիքի՝ Եկեղեցու յուրաքանչյուր եղբոր և քրոջ սրբության մասին, մեզ շնորհեց հնարավորություն՝ մաքրվելու մկրտությունից հետո գործած մեղքերից և ամեն անգամ վերականգնվելու աստվածային շնորհի վիճակի մեջ, նորից հագնելու մկրտության սպիտակափայլ պատմուճանը: Տերը մեզ միշտ տալիս է երկրորդ հնարավորությունը՝ փրկվելու և ափ հասնելու. հիշե՛նք Տերտողիանոսի խոսքերը՝ նախորդ խորհրդածությունից:

Այս խորհուրդը կոչվում է ոչ միայն «Ապաշխարության», այլև՝ «Հաշտության», քանի որ Աստված իր գերբնական շնորհով մարդու մեղքերը ներում է և հաշտեցնում Իր հետ և Իր սուրբ Եկեղեցու հետ, քանի որ մեղքերը գործվում են Աստծո դեմ և մերձավորի դեմ: Ավելին, ապաշխարության խորհրդով մարդ հաշտվում է նաև ինքն իր հետ: Այս հաշտությունն է պատճառը, որ խոստովանելուց հետո մեծ խաղաղություն է տիրում մարդկային հոգում, կարծես, մի մեծ բեռ ընկավ, որովհետև մարդուն դարձյալ իր հայրական գիրկն է առնում Տերը. «անառակ» Որդին վերադառնում է հայրական տուն:

Ապաշխարության խորհրդով աստվածային շնորհը կամ գերբնական բովանդակությունը մարդուն փոխանցվում է երկու արտաքին ձևերի միջոցով՝ մեղքերի բարձրաձայն խոստովանության և քահանայի կողմից արտաբերվող մեղքերի արձակման աղոթքի միջոցով:

Ինչպե՞ս խոստովանել

Աստծուն ընդունելի խոստովանություն կատարելու համար, ամենակարևորը անկեղծ զղջումն ու ցավն է, որի մասին արդեն խոսել ենք: Անկեղծ զղջումը պետք է ինքնաբուխ արտասուքի նման արտահայտվի մեղքերի բարձրաձայն և նույնքան անկեղծ ու անթաքույց խոստովանությամբ՝ խոստովանահոր առաջ, որ ներկայացնում է Աստծուն և Սուրբ Եկեղեցին, ում առջև գործված են մեղքերը: Խոստովանությանը պետք է նախապես պատրաստվել քահանայի կամ կրոնի ուսուցչի առաջնորդությամբ, եթե առաջին անգամ է, իսկ եթե կա փորձառություն, հարկավոր է միշտ ամփոփվել աղոթքով և կատարել խղճի քննություն, ապրել այն ցավը, որի մասին խոսում էինք, և հետո միայն գնալ խոստովանության: Երբ մոտենում ենք քահանային, լավ կլինի, որ խոստովանությունից առաջ ասենք այն նույն խոսքերը, որ անառակ որդին ասաց իր հորը՝ դարձի գալով. «Մեղանչեցի՜ Երկնքի և քո առջև, Հայր Սուրբ (կամ Տեր Հայր)»: Այս խոսքերը առավել խոնարհեցնում են մարդկային հոգին, մանավանդ, երբ քահանան սիրով և մեղմորեն սկսում է լսել մեղքերի խոստովանությունը: Պետք է հիշել, մեղքերը խոստովանում ենք Աստծո՛ առաջ, ուրեմն չի կարելի թաքցնել Աստծուց որևէ ծանր մեղք, որքան էլ այն ամոթալի լինի, այլապես կնմանվենք Ադամին, որ մեղսագործելուց հետո ուզում էր Աստծուց թաքնվել ծառի ետևում, որովհետև ամաչում էր: Բայց միթե՞ հնարավոր է թաքնվել Աստծու ամենատես աչքից, որ գիտի ամեն ինչ և, որ այս պարագայում ամենակարևորն է, հասկանում ու ներում է ամեն ինչ, եթե տեսնում է անկեղծ զղջումն ու ցավը մարդկային սրտում: Ավելին, Իր վրա՛ է կրում մեր մեղքերի ամբողջ բեռը, ինչքան էլ դա ծանր լինի, Իր կյանքն է տալիս՝ իր յուրաքանչյուր մոլորյալ ոչխարին փարախ վերադարձնելու համար: Սա խոսում է Տիրոջ անմիջականության, բոլորի համար մշտապես բաց և ներող Սրտի մասին, որ լսում է մեզ, երբ խոստովանում ենք մեր մեղքերը: Իրականում հենց այս փաստն է, որ յուրաքանչյուր քրիստոնյայի պետք է ձգի դեպի խոստովանության խորհուրդը, այս լիակատար վստահությունը Աստծո հանդեպ: Մեղքերը լսողը նախևառաջ Աստված Ինքն է՝ քահանայի միջոցով: Այս գիտակցությունը միաժամանակ և՛ զգաստության, երկյուղածության պատճառ է, և՛ լիակատար վստահության՝ գիտենալով, որ իրեն լսողը ամենաանդավաճան Անձն է՝ Հայրը, որ մեզ լսում է որպես իր զավակի. միթե՞ սիրող հայրը կարող է խայտառակել իր զավակին՝ լսելով նրա գաղտնիքները: Այս գիտակցությունը մեզ օգնում է խոստովանել նույնիսկ ամենաանձնական զանցանքները, որոնք գուցե ինքներս մեզ էլ խուսափում ենք խոստովանել: Այս ամոքիչ հրաշալի խորհրդի մեջ, մեղքերը խոստովանելով՝ մարդ մոտենում է իր ճշմարիտ ինքնությանը, որ Աստծո ծրագրի պատկերն է: Կարելի է ասել նույնիսկ, որ մեղքերը խոստովանելիս՝ մարդն աստվածային գերբնական զորության կամ շնորհի օգնությամբ ազատագրում է իր այդ աստվածանման ինքնությունը ամեն տեսակ կաղապարներից, կեղևից և գտնում իր ճշմարիտ մարդկային միջուկը՝ հոգևոր, սուրբ ողնուծուծը. «Կենդանի է Աստծո Խոսքը, ազդու և ավելի հատու, քան ամեն մի երկսայրի սուր, և կտրում անցնում է մինչև ոգու և հոգու, հոդերի և ողնուծուծի բաժանման սահմանը… Եվ նրա առաջ չկա անտեսանելի արարած, այլ ամեն ինչ պարզ ու

հստակ է նրա աչքերի առաջ», Եբր. 4, 12-13: Աստված իր շնորհով և Խոսքով խոստովանողին օգնում է Իր հետ միասին հստակորեն տեսնել իր մեղքերի քողի ներքո սեփական սրտի խորքերում շողշողացող սուրբ ինքնությունը՝ Աստծո պատկերն ու նմանությունը, և որոշում կայացնել այսուհետ ապրել՝ հավատարիմ հենց ա՛յդ ինքնությանը: Սբ. Օգոստինոսն իր ոճով է խոսում այս սքանչելի ճշմարտության մասին. «Նա, ով խոստովանում է իր մեղքերը, արդեն գործում է Աստծո հետ միասին: Աստված մերկացնում է մեղքերդ. եթե դու ևս մերկացնում ես մեղքերդ, ապա միանում ես Աստծուն: Մարդը և մեղավորը ներկայացնում են կարծես երկու իրականություններ. երբ խոսում ենք մարդու մասին, նրան ստեղծել է Աստված, իսկ երբ խոսում ենք մեղավորի մասին, ապա նրան ստեղծել է մարդն ինքը… Ոչնչացրու՛ քո ստեղծածը, որպեսզի Աստված կարողանա փրկել Իր ստեղծածը…» :

Ուրեմն, խոստովանության ժամանակ մարդն իր սիրտը բացում է աստվածային ամենաթափանց լույսի առջև՝ վստահելով Աստծուն, ինչպես մանուկն է վստահում իր ծնողին: Աստված Ինքն է քահանայի միջոցով առաջնորդում մեզ դեպի լիակատար ազնվություն և բացվածություն և հիշեցնում է մարդու իրական կոչումը՝ լինել իր Արարչի նման սուրբ և անարատ:

Շատերը, լավ չհասկանալով Հաշտության խորհրդի և խոստովանության իմաստը, կամ չունենալով բավականաչափ խոնարհություն Աստծո առջև, երբ գալիս են խոստովանության, կարծես սկսում են պաշտպանվել և թվարկում են իրենց բարի գործերը, ամեն օր արտասանած աղոթքները, ջանում են արդարացնել իրենք իրենց՝ ճիշտ այն փարիսեցու նման, որ աղոթքի կանգնած մաքսավորի կողքին՝ շնորհակալություն էր հայտնում Տիրոջը, որ ինքն այնպիսին չէր, ինչպիսին իր կողքի մաքսավորն էր: Բայց չարդարացավ դրա համար, որովհետև ի՛նքն էր իրեն արդարացնողը, և թույլ չէր տալիս, որ Աստվա՛ծ արդարացնի իրեն: Սա նշանակում է մեղքերի և եսասիրության քողով ծածկած պահել մեր ճշմարիտ ինքնությունը և թուլ չտալ, որ աստվածային լույսը թափանցի մեր ներսը, հստակ ցույց տա մեզ մեր մեղքերը և առաջնորդի դեպի ճշմարիտ սրբություն: Սրա պատճառն այն է, թերևս, որ նախքան խոստովանության գալը խոնարհաբար ցավ չեն զգացել սեփական թշվառության և մեղքերի համար, իսկ ինքնագոհությամբ սխալներ խոստովանել չես կարող. այդպես միայն ինքդ քեզ հերթական անգամ կխոստովանես, թե ինչքան ես սիրում ինքդ քեզ և ոչ թե Աստծուն:

Լավ կլինի, որ խոստովանելուց առաջ աղոթենք Սուրբ Գրիգոր Նարեկացուն և խնդրենք նրա բարեխոսությունը՝ ասելով.

«*Սբ. Գրիգոր, խոնարհության և ապաշխող հավատացյալի տիպար և ուսուցիչ, բարեխոսի՛ր ինձ համար, որ խոստովանելիս լինեմ քեզ նման խոնարհ, անկեղծ, համարձակ՝ ինքնաքննադատության, ինքնադատափետման մեջ և քեզ նման վստահեմ Աստծո ծով ողորմածությանը. ամեն*»:

ԻՆՉՈՒ՞ ԽՈՍՏՈՎԱՆԵԼ ՔԱՀԱՆԱՅԻ ՄՈՏ. հարց, որ «գայթակղության քար» է շատերի համար

Հոգևոր կրթություն Մեծ Պահոց, Գ շաբաթ,
թեմատիկ շարք՝ «Ապաշխարություն».
խորհրդածություն 3

Սա, թերևս, մի հարց է, որ շատերին է հուզում և, որ ցավալի է, պատճառ է դառնում նրան, որ շատերը պարզապես չեն գնում խոստովանության և նախընտրում են իրենք իրենց ուղղակի հանձնել աստվածային նախախնամությանը, կամ մտածում են՝ միևնույնն է՝ Աստված գիտի և տեսնում է ամեն ինչ և ներողամիտ է, էլ ի՞նչ կարիք կա մեղքերիս մասին բարձրաձայնել քահանայի առջև, որ ընդամենը մի մարդ է սովորական, այն էլ կան քահանաներ, որոնք ավելի ծանր մեղքերի մեջ են, քան ես: Այսպիսի կարծիքների մեջ, գուցե, կարելի է գտնել ճշմարտության տարրեր, բայց ճիշտ պատասխանն ունենալու համար պետք է մեզ համար նախ որպես դատողության ելակետ ունենանք ոչ թե մեր սեփական տպավորությունները՝ քահանայի կերպարի և դերի մասին, այլ՝ Տեր Հիսուս Քրիստոսի խոսքերը, որոնցով Տերը հաստատեց Ապաշխարության խորհուրդը: Իր հրաշափառ Հարությունից անմիջապես հետո, երբ առաջին անգամ Տերը երևաց աշակերտներին վերնատան մեջ, փչեց նրանց վրա և ասաց. «Առե՛ք Սուրբ Հոգին, եթե մեկի մեղքերը ներեք, ներված կլինի, եթե մեկի մեղքերը չներեք, ներված չի լինի», Հվի. 20, 22-23: Մեկ այլ դրվագում Հիսուս Սիմոնին ասաց. «Դու վեմ ես, և քեզ վրա պիտի շինեմ իմ Եկեղեցին… Քեզ եմ տալու Երկնքի արքայության բանալիները, ինչ որ կապես երկրի վրա, կապված կլինի երկնքում, և ինչ որ արձակես երկրի վրա, արձակված կլինի երկնքում», Մտթ. 16, 19: Իսկ Հակոբոս առաքյալը գրում է. «Խոստովանեցե՛ք միմյանց ձեր մեղքերը և միմյանց համար աղոթք արեք», Հկբ. 5, 16: Այս սուրբգրային վկայությունները փաստում են, որ Ապաշխարության խորհուրդը հաստատվել է Քրիստոսի կողմից և որ Տե՛րն է Իր աշակերտներին շնորհել միմյանց

մեղքերը լսելու և ներման համար Տիրոջն աղոթելու, բառացիորեն՝ ներելու իրավունքը կամ հոգևոր իշխանությունը, որը փոխանցվել է առաքյալների հաջորդներին՝ եպիսկոպոսներին, որոնք իրենց այդ և մյուս հոգևոր պարտականություններն իրականացնում են քահանաների օգնությամբ, ովքեր ևս, հետևաբար, կրողն են Քրիստոսի կողմից առաքյալներին տրված այդ պարտականության և իրավունքի: Սա նախևառաջ պարտականություն և առաքելություն է, քանի որ քահանայագործելու առաքելությունը ենթադրում է պատասխանատվության ստանձնում՝ Քրիստոսի եկեղեցու յուրաքանչյուր անդամի հոգու և մարմնի փրկության համար, մանավանդ, քահանային հանձնված համայնքների քույրերի և եղբայրների համար, որոնց համար ինքը նշանակված է որպես հովիվ, հայր, եղբայր, հոգևոր պահակ և դետ, ինչպես ասում է Տերը՝ Եզեկիել մարգարեին. «Մարդու որդի՛, քեզ դետ կարգեցի Իսրայելի տանը», Եզ. 3,17, 33, 7: Սա աղոթարար միջնորդի առաքելություն և ծանր պարտականություն է, որ քահանայի ուսերին դրված է Տիրոջ կողմից: Հիսու՛ս Ինքը կամեցավ, ուրեմն, որ մենք խոստովանենք մեր մեղքերը միմյանց առջև, բայց մեղքերը լսելու և ներում հայցելու պարտականությունը դրեց առաքյալների և նրանց հաջորդների՛ ուսերին: Քահանայի միջնորդական առաքելությունը շարունակում է Քրիստոսի՝ Միակ Միջնորդի քահանայական առաքելությունը, կամ կարելի է ասել՝ քահանան մասնակցում կամ կիսում է Քրիստոսի միջնորդական, բարեխոսական առաքելությունը երկրի վրա՝ Տիրոջ Սուրբ Եկեղեցու անդամներին աստվածային շնորհով սրբվելու հնարավորություն ընձեռելու նպատակով: Քահանայության նպատակը մարդկանց սրբագործումն է՝ Աստծո Խոսքի քարոզության և եկեղեցական Սուրբ Խորհուրդների մատակարարման միջոցով: Քահանան նաև շարունակում է Քրիստոսի՝ որպես Բարի Հովվի, Բարի Սամարացու, հոգիների և մարմինների Բժշկի, դիվահահալածի, ինքնազոհաբերվող, ի սպառ սիրող Ընկերոջ, Եղբոր, Ուսուցչի, Առաջնորդի և Հոր առաքելությունը, մարդ արարածին տեր կանգնելու պարտավորությունը: Դրա համար էլ քահանան ևս կոչվում է «Տեր» կամ «Հայր», որովհետև մասնակցում է Քրիստոսի՛ տերությանը և հայրությանը, կամ կոչված է այս աշխարհում ներկա և հասկանալի դարձնելու Քրիստոսի այդ առաքելությունը՝ որպես «մեկ այլ Քրիստոս»՝ alter Christus: Այս կետը շատ հերձվածողների և քննադատ աշխարհականների համար իրական գայթակղության քար է դարձել, որովհետև չեն կամենում իրականության մասին դատել Եկեղեցու ավանդական, Սուրբ Հոգով առաջնորդված տրամաբանության մեջ և սխալ են մեկնում Սուրբ Գիրքը: Այս մասին կարելի է առանձին խոսել:

Ապաշխարության խորհրդակատարության ժամանակ քահանան ներկայացնում է Քրիստոսին՝ որպես Աստծո ներումը մատակարարող սպասավոր , և միաժամանակ ներկայացնում է Քրիստոսի Եկեղեցին՝ հավատացյալների համայնքը, քանի որ մարդ մեղսագործում է երկու ուղղությամբ՝ ընդդեմ Աստծո և ընդդեմ մերձավորի՝ մարդ արարածի: Այսպիսով, քահանայի առջև խոստովանելիս՝ մեղսագործը խոստովանում է թե՛ Աստծո առաջ, թե՛ մարդկային հասարակության և Եկեղեցու առաջ ու ներում է հայցում երկու կողմից էլ: Եկեղեցու կամ մարդկային ընտանիքի մեկ անդամի դեմ մեղանչելով՝ մեղսագործը վնասում է ամբողջ ընտանիքին: Քահանան, լսելով խոստովանությունը, գործում է որպես դատավոր՝ որոշելով, թե արդյոք խոստովանողը մեղք գործել է, թե ոչ, կամ մեղքը ծանր է, թե թեթև, գիտակցվա՞ծ է, թե ոչ, կամ մասամբ գիտակցված, և ըստ այդմ առաջարկում է իր առաջնորդությունը կամ ուղեկցությունը՝ որպես հայր, ընկեր, առաջարկում է ամենապատշաճ դեղամիջոցը՝ որպես հոգևոր բժիշկ, աղոթքի կամ այլ գործողությունների տեսքով, գործում է նաև որպես ուսուցիչ՝ սովորեցնելով, թե ինչպես կարելի է խուսափել խոստովանած մեղքերից և ապրել սրբությամբ: Եվ ի վերջո, որպես Քրիստոսի քահանայության սպասավոր, աղոթում է՝ մեղքերի արձակման բանաձևը, որով Աստծուց ներում է խնդրում մեղավորի համար:

Իհարկե, օրինական է, որ այս ամենը կատարելու համար քահանայից ակնկալենք պատշաճ պատրաստություն, աղոթական կյանք և գիտելիքներ, գաղտնապահություն և սրբություն: Սակայն մարդկանց, կարծում եմ, ճնշող մեծամասնությունը իր պահանջները քահանայի նկատմամբ սկսում է ինքն իր մեջ ներկայացնել՝ սկսելով հենց վերջին երկուսից՝ սրբություն և գաղտնապահություն:

Բայց եկե՛ք մի պահ մտածենք Քրիստոսի՛ տեսանկյունից. եթե Տերն իր քահանայական և սրբագործման առաքելությունը կամենար վստահել միայն կատարելապես սուրբ և արժանի անձանց, թերևս ոչ միայն Գալիլիայի ծովեզերքում, այլև ամբողջ երկրիս երեսին չգտներ այդպիսի անձանց: Տերն Ի՛նքն է մարդուն սրբացնողն ու կատարելագործողը, ընդ որում՝ թե՛ նոր մկրտվողին և թե քահանային ու եպիսկոպոսին, ինչպես սկսեց սրբացնել իր պարզամիտ, անկիրթ, բայց հոգով դեռևս աղքատ աշակերտներին՝ Իր ներկայությամբ, ապա՝ Իր Մխիթարիչ Սուրբ Հոգու առաջնորդությամբ՝ մինչ օրս և մինչև աշխարհի վախճանը: Տերը կամեցավ երկրի վրա իր առաքելությունը շարունակել մարդկանց միջոցով, իսկ մարդիկ միշտ անկատար են, այդ իսկ պատճառով էլ Տերը միշտ Իր Եկեղեցու յուրաքանչյուր անդամին, նաև քահանային, որ ունի հատուկ առաքելություն, լիուլի լցնում և առաջնորդում է իր գերբնական շնորհներով, իսկ թե որքան է մարդու սիրտը բացված այդ շնորհների առաջ, սա կախված է անձի որոշումներից և որակներից՝ աշխարհական լինի, թե քահանա:

Ի՞նչ է սա նշանակում մեզ համար, մանավանդ, եթե մտածում ենք՝ քահանայի մոտ գնալ խոստովանության, թե ոչ: Մեկ բան՝ խստապահանջ ձևով չփնտրել կատարելություն և սրբություն քահանայի մեջ և չգտնելու դեպքում՝ չհրաժարվել խոստովանությունից. այլապես սա նշանակում է մնալ մեղքերի մեջ և հոգին տանել դեպի կորուստ: Սբ.

Հովհան Ոսկեբերանը քահանայության մասին իր քարոզում ասում է, մարդիկ քահանայից պահանջում են հրեշտակային մաքրություն, իսկ չգտնելու դեպքում դաժանաբար պախարակում են: Նա ասում է՝ քահանայի սքեմի վրա եղած փոքրիկ բիծն ավելի շուտ է երևում մարդկանց, քան թե աշխարհականի հագուստի մեծ կեղտը: Եկե՛ք քահանաների նկատմամբ լինենք ոչ թե քննադատող, այլ՝ աղոթենք նրանց համար և լինենք նրանց հետ միասին, մտերիմ, զրուցող, վստահող, որպես՝ Քրիստոսի մեկ ընտանիքի անդամներ, ովքեր աջակցում և սիրում են միմյանց: Վստահ եմ, եթե այս տրամաբանությամբ, խոնարհությամբ մոտենաք քահանաներին, նրանց մեջ կբացահայտեք շատ արժանիների՝ իրենց քահանայական կոչմանը, և ձեր աղոթքներով ու վստահությամբ կօգնեք շատերիս լինել ավելի լավը, քան ենք հիմա: Սա՛ է Քրիստոսի կամքը, ի վերջո, Տերը գիտի, որ իր աշակերտներն անթերի չեն, բայց Ի՛նքը կամեցավ իր աստվածային շնորհները, ներումը, սերը աշխարհում ներկա դարձնել նրա՛նց միջոցով: Գուցե, այսպես Տերը նաև մեզ սովորեցնում է սիրել և ընդունել միմյանց՝ թերություններով հանդերձ, չէ՞ որ Ինքն էլ այդպես է վարվում բոլորիս հանդեպ, ի սկզբանե: Եվ հիշենք Սբ. Պողոսի օրինակը, որ Աստծո շնորհով՝ Քրիստոսին հալածողից վերածվեց Քրիստոսի ամենատքնաջան քարոզչի և ասում էր, թե Քրիստոսի զորությունը երևում է իր մարդկային տկարության և անզորության մեջ և թե Աստված իրեն տվել է մի մշտական խղճի խայթոց, որպեսզի, հիշելով իր թերությունները, երբեք չմեծամտանա: Եկե՛ք հասկանանք աստվածային ծրագրի փրկարար տրամաբանությունը և ապրենք դրա համաձայն: Սկսե՛նք վստահել Քրիստոսին և միմյանց, քանի որ Նա՛ առաջինը սիրեց և վստահեց մեզ՝ քաջ իմանալով մեր հնարավոր անվստահելիության մասին. «Ձեզնից մեկն ինձ ուրանալու է»:

Մեղքերի բարձրաձայն խոստովանությունն ունի նաև հոգեբանական բուժիչ, վերականգնողական նշանակություն: Նույնիսկ հոգեբանները, մանավանդ, հոգեվերլուծության ֆրեյդյան դպրոցը վաղուց կիրառում է մի մեթոդ, որով ջանում են օգնել հիվանդին հաղթահարել հոգեկան ցավը՝ այդ ցավի մասին բարձրաձայն խոսելով, վերարթնացնելով անցյալի հիշողությունները, կամ գիտակցական մակարդակ հանելով անգիտակցական ոլորտում հայտնված վերքերը, որոնք կարող են հաճախ մարդկային վարքի շեղումների, նաև մեղքերի առիթ դառնալ: Եվ հետո, խոստովանության դեպքում ցավի մասին բարձրաձայնելով՝ մարդն այդ ցավի բեռը դնում է Քրիստոսի՛՝ ամենահոգատար հոգեբանի ուսերին՝ քահանայի միջոցով: Քրիստոս մեր ցավը կրում է իր վրա, «նա մեր ցավերը կրեց», Ես. 53, 4: Այս է պատճառը, որ մեղքերը խոստովանելուց հետո արտասովոր խաղաղություն է իջնում մեր հոգիներին՝ Քրիստոսի այն խաղաղությունը, որ այս աշխարհը չի կարող երբեք տալ, սա մեղքի հանդեպ հաղթանակի զգացումից ծնված խաղաղությունն է, ճակատամարտում Տիրոջ զորությամբ հաղթելու զգացումից ծնված խաղաղությունն է: Աղոթե՛նք, որ Քրիստոսի հետ միասին մի օր հաղթենք նաև հոգևոր պատերազմը. Ամեն:

Այլևս մեղք չգործել

ՈՐՈՇԵԼ ԱՅԼԵՒՍ ՄԵՂՔ ՉԳՈՐԾԵԼ և ՀԱՏՈՒՑԵԼ ՄԵՂՔԻ ԴԻՄԱՑ

Հոգևոր կրթություն Մեծ Պահոց, Գ շաբաթ, թեմատիկ շարք՝ «Ապաշխարություն». խորհրդածություն 4

Երբ ազնվորեն խոստովանել ես մեղքերդ, մնում է ևս երկու կարևոր բան՝ որոշել այլևս մեղք չգործել և հատուցում կատարել դրանց համար: Այս որոշումների մեջ հաստատ մնալու համար դարձյալ օգնության է գալիս աստվածային շնորհը, բայց որոշումը մնում է մեր մարդկային կամքի հստակ արտահայտությունը:

Սա չափազանց կարևոր է և նույնքան լուրջ, որքան անկեղծ զղջումը, որովհետև եթե խոստովանողը չունի հստակ որոշում, կամ ինչպես մենք ենք ասում՝ դիտավորություն, այլևս մեղք չգործելու, լիարժեք չէ զղջումը և ցավը, կամ կեղծ է, անիմաստ է նաև խոստովանությունը: Քրիստոս կարիք չունի պարզապես լսելու մեր մեղքերի մասին, որովհետև գիտի, թե ինչ կա մարդկային սրտում, կարդում է մեր մտքերը. Քրիստոս ուզում է տեսնել մեր զորեղ ցանկությունը և որոշումը՝ այլևս մեղք չգործելու: Այս կամքն է, որ հող է նախապատրաստում կամ պայման է՝ Քրիստոսի հատուկ շնորհի ընկալման, որ ներում է մեղքերը, վերականգնում շնորհի վիճակի մեջ, այսինքն՝ աստվածային գերբնական զորության ներկայությունը մարդու սրտում և մտքի մեջ, որը մարդուն օգնում է պայքարել չարի դեմ, զորացնում է մարդկային թույլ կամքը: Այլ խոսքով, Քրիստոս իր զորությունը շնորհում է մարդուն, երբ տեսնում է ցանկությունը մարդու սրտում, քանի

որ Տերը մեզ չի կարող պարտադրել Իր ներկայությունը և չի ուզում մեզ ստիպել լինել իրեն հաճելի, այլ ուզում է, որ դա լինի մարդու ազատ որոշման արդյունք, քանի որ հարգում է մարդու ազատությունը և կամենում է, որ մարդը հասնի իր ազատության լիակատար և պատասխանատու գործադրմանը՝ այսպիսով ապրելով որպես Աստծո արժանի որդի, ճիշտ ինչպես անառակ որդին իր ազատ կամքով վերադարձավ Հոր տուն: Ուրեմն, խոստովանության գնալուց առաջ քննե՛ք ինքներդ ձեզ՝ արդյոք ուզում եք և պատրաստ եք ապրել առանց մեղքի, ոչ թե կարող եք, այլ՝ ուզում եք և պատրաստ եք: Որովհետև կարողությունը կզորացնի Քրիստոս՝ մեր տկարության մեջ ցույց տալով իր զորությունը, ըստ Պողոսի խոսքերի, մարդու գործը իր սրտե կամենալն է և որոշելն է ապրել Աստծո կամքի համաձայն՝ որպես Քրիստոսի բարեկամ, եղբայր կամ քույր: «Դու միայն որոշի՛ր, մնացածը թո՛ղ ինձ վրա, վստահի՛ր ինձ», ասում է Քրիստոս յուրաքանչյուրիս և հրավիրում անկեղծ խոստովանության: Եկե՛ք մեր հայացքը հառենք Հիսուսի Սուրբ Սրտին և վստահե՛նք նրա ծով ողորմածությանը՝ ամբողջ սրտով, հոգով և մտքով: Եթե իրոք գիտակցում ենք, որ մեղք ենք գործել և վիրավորել Աստծուն, չհուսահատվենք՝ մտածելով, թե միևնույնն է՝ դարձյալ նույն մեղքի մեջ եմ ընկնելու, որովհետև մարդ եմ, ունեմ բնական ցանկություններ և այլն: Սատանան հենց սա էլ ուզում է՝ այն, որ մենք մնանք մեր մարդկային թուլության մեջ, ապավինենք միայն ինքներս մեզ և օրինականացնենք, նորմալ դարձնենք մեր մեղավոր ընթացքը և այդպիսով ինքնահոսի մատնված՝ քարշ տանք մեր «հեշտ և հաճելի» կյանքը … դեպի կորուստ: Իսկ Քրիստոս գալիս է այս աշխարհի խավարի մեջ՝ ծովի վրայով քայլելով և ասում է ինձ, քեզ, բոլորիս. «Քաջալերվի՛ր, ես եմ, ինչու՞ ես երկմտում, թերահավա՛տ, պետք է, որ այս աշխարհում նեղություններ կրես, բայց մի վախեցիր, ես հաղթեցի աշխարհին, դու՛ էլ կարող ես, եթե հավատաս ինձ և իմ խոսքերին»: Այսպես վստահ, Տիրոջ հետ միասին առաջ գնալով՝ քիչ-քիչ կսկսենք հաղթել թե ինքներս մեզ և թե այս աշխարհին:

Հատուցել մեղքերի դիմաց

Արդարությունը և ողջամտությունը պահանջում է, որ կատարված սխալի դիմաց կատարվի փոխհատուցում, մեղքի և մեղքի հետևանքների համար ևս աստվածային արդարադատությունը հատուցում է պահանջում: Այս պարզ սկզբունքը հասկացել են նույնիսկ ամենապրիմիտիվ կրոններում: Աստված Մովսեսին պատվիրեց, որ թե ժողովուրդը և թե քահանաները կենդանական զոհեր մատուցեն՝ որպես հատուցում՝ սեփական մեղքերի դիմաց, Աստծո բարկությունը մեղմելու, Նրա ներումը հայցելու համար: Սա Աստծո հետ հաշտվելու համար էր արվում: Ճիշտ այս իմաստով էլ քրիստոնեական Ապաշխարության խորհուրդն ընդունելիս՝ Աստծո հետ և մերձավոր հետ հաշտվելու համար խոստովանողը պետք է պատրաստ լինի հատուցում կատարելու իր մեղքերի դիմաց: Հատուցումը նշանակում է խոստովանահայրը՝ խոստովանած մեղքերի բնույթին, ծանրությանը համապատասխան: Հատուցումը ոչ միայն մեղքի հետևանքը բուժելու, պատճառած վնասը փոխհատուցելու, այլև մեղսագործի համար ուղղիչ նշանակություն ունի: Հատուցումը կարող է լինել աղոթքի տեսքով, Սուրբ Գրքից հատվածներ ընթերցելու միջոցով, բարի գործեր կատարելու միջոցով, մերձավորից ներում հայցելու միջոցով, նրա նկատմամբ սիրո, հոգատարության քայլերի, խոսքերի միջոցով: Առավել ծանր մեղքերի պարագայում կարող են նշանակվել և ավելի խիստ և բարդ հատուցման քայլեր՝ պահքի, ծոմապահության, մեկուսացման տեսքով: Քրիստոնեության առաջին դարերում, երբ ծանր մեղքերի՝ կռապաշտության, շնության, ուրացման, խոստովանությունները կատարվում էին եկեղեցում՝ բոլոր հավատացյալների ներկայությամբ, սահմանվում էին այդպիսի ծանր հատուցումներ, որոնք նույնիսկ կարող էին տևել տարիներ և այդքան ժամանակ մեղսագործը կարող էր վտարված լինել եկեղեցուց և Սուրբ Հաղորդության մոտենալուց, մինչև չլրանար ապաշխարության, հատուցման սահմանված ժամկետը: Ապաշխարության դարձի այդպիսի հնարավորությունն էլ սահմանափակ թվով էր նույն մարդու կյանքի ընթացքում: Իսկ 7-րդ դարից սկսած հրապարակավ խոստովանություններ, ապաշխարանքներ այլևս չկան, դրանց փոխարինել են քահանայի մոտ առանձնական գաղտնի խոստովանությունները, իսկ ապաշխարության հնարավորությունները սահմանափակ չեն, ըստ Տիրոջ խոսքի, որ ասաց Պետրոս առաքյալին, թե պետք է ներել մեղանչած եղբորը յոթանասուն անգամ յոթը անգամ, այսինքն՝ միշտ, առանց նախապայմանների. միակ պայմանը զղջման անկեղծ ցավը և հատուցման դիտավորությունն են: Ուրեմն, Տիրոջ այսպիսի անսահման ներողամտության դիմաց մեղսագործը պետք է պատրաստակամությամբ և եռանդով կատարի բոլոր հատուցումները, որ նշանակվում են խոստովանահոր կողմից: Այդ հատուցումները մարդուն կարող են ազատել նաև ժամանակավոր քավչարար պատիժներից, որոնք մարդուն տրվում են ոչ թե դատապարտության, այլ՝ դարձյալ ուղղման և մաքրագործման համար, կամ այս կյանքում, կամ հանդերձյալում՝ քավարանի վիճակում:

Բայց մեր բոլոր հատուցումները կլինեն թերի և անօգուտ, եթե դրանք չկրենք Քրիստոսի խաչակրության հետ միասին և Նրա Խաչի լույսի ներքո, իմաստավորելով դրանք, որպես մասնակցություն Քրիստոսի փրկարար, քավչարար չարչարանքներին: Քրիստոս Իր Կյանքով և Արյամբ մեկ անգամ և ընդմիշտ յուրաքանչյուր իրեն հավատացող մարդ արարածի համար կատարեց այնպիսի՛ ծանրակշիռ մի Հատուցում, որ առանց այդ հատուցման, մեր մեղքերի համար ներում ակնկալել Աստծուց՝ երբեք չպիտի կարողանայինք: Մեր ամեն տեսակ հատուցումներն էլ անօգուտ կլինեին՝ առանց Քրիստոսի կատարած Զոհ-Հատուցման: Ուրեմն, միայն նրա Զոհին՝ Սուրբ Պատարագին մասնակցելով և մեր

հատուցումները աղոթքով Նրա Հատուցմանը միացնելո՛վ կարող ենք հուսալ, որ կատարում ենք Աստծո համար ընդունելի հատուցումներ, և Տերն անպայման կների մեզ մեր մեղքերը. Ամեն:

ԻՆՉՊԵ՞Ս ՃԻՇՏ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՄԱՄՈՆԱՆ ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ

«Տնտեսի կիրակի». այսպէս է կոչւում Մեծ Պահոց Դ կիրակին: Ինչպէս Մեծ Պահոց նախորդ կիրակիներին, այս դէպքում եւս անուանումը բխում է ճաշու աւետարանական հատուածից, որ Ղուկասի Աւետարանի 16-րդ գլխի 1-13 համարներն են:

«Եւ Յիսուս իր աշակերտներին ասաց. «Մի մեծահարուստ մարդ կար, որ մի տնտես ունէր. եւ նրա մասին ամբաստանութիւն եղաւ, որպէս թէ վատնում է իր տիրոջ ունեցուածքը: Տէրը կանչեց նրան եւ ասաց. «Այս ի՞նչ եմ լսում քո մասին. տո՛ւր քո տնտեսութեան հաշիւը, որովհետեւ այլեւս տնտես լինել չես կարող»: Տնտեսն իր մտքում ասաց. «Ի՞նչ պէտք է անեմ, քանի որ իմ տէրը տնտեսութիւնս ինձնից վերցնում է. հողի վրայ աշխատել չեմ կարող, մուրալ ամաչում եմ: Գիտեմ, թէ ինչ պիտի անեմ, որպէսզի, երբ տնտեսութիւնիցս հեռացուեմ, ընդունեն ինձ իրենց տները»: Եւ իր տիրոջ պարտապաններից իւրաքանչիւրին մէկ առ մէկ իր մօտ կանչելով՝ առաջինին ասում է՝ «Իմ տիրոջը ինչքա՞ն պարտք ունես»: Եւ սա ասում է՝ «Հարիւր տակառիկ ձէթ». եւ տնտեսը նրան ասում է՝ «Ա՛ռ քո մուրհակը եւ նստի՛ր ու անմիջապէս գրի՛ր՝ յիսուն»: Ապա դարձեալ միւսին ասում է՝ «Դու ինչքա՞ն պարտք ունես». եւ սա ասաց. «Հինգ հարիւր պարկ ցորեն»: Տնտեսը նրան ասաց՝ «Ա՛ռ քո մուրհակը եւ նստի՛ր ու գրի՛ր՝ չորս հարիւր»: Եւ տէրը գովեց անիրաւ տնտեսին, որովհետեւ հնարամտութեամբ գործեց, քանի որ այս աշխարհի որդիները աւելի հնարամիտ են, քան լոյսի որդիները իրենց սերնդի մէջ»: «Եւ ես ձեզ ասում եմ. անիրաւ մամոնայից ձեզ համար բարեկամներ արէք, որպէսզի, երբ այն պակասի, յաւիտենական յարկերի տակ ընդունեն ձեզ: Քիչ բանի մէջ հաւատարիմը շատի մէջ էլ հաւատարիմ է. իսկ քչի մէջ անիրաւը, շատի մէջ էլ անիրաւ է: Արդ, եթէ անիրաւ մամոնայի մէջ հաւատարիմ չեղաք, ձեզ ո՞վ կը վստահի ճշմարիտը: Եւ եթէ օտարինը եղող բանի մէջ հաւատարիմ չեղաք, ձերը ո՞վ կը տայ ձեզ: Ոչ մի ծառայ երկու տիրոջ ծառայել չի կարող. որովհետեւ, եթէ մէկին ատի, միւսին կը սիրի. կամ եթէ մէկին մեծարի, միւսին էլ կարհամարհի: Չէք կարող ե՛ւ Աստծուն ծառայել, ե՛ւ մամոնային»:

Այս տնտեսի պատմութիւնը իւրաքանչիւր մէկի պատմութիւնն է, ով իր կեանքը, աստուածատուր շնորհները, պարգեւները, ունեցուածքը, դրամը վատնում է՝ առանց մտածելու ամենակարեւորի մասին:

Ինչպէս այդ մեծահարուստը հաշիւ պահանջեց իր տնտեսից, մի օր Աստուած էլ հաշիւ է պահանջելու բոլորից, թէ ինչպէս ապրեցինք մեր կեանքը, այլ խօսքով, ինչպէս վարեցինք մեր տնտեսութիւնը:

Մենք բոլորս Աստծոյ տնտեսներն ենք, մեր կեանքի հեղինակը մենք չենք, այլ՝ Աստուած, Ի՛նքն է կեանքի Տէրը եւ բաշխողը եւ մեզ տալիս է մեր կեանքը որպէս նուէր, որպէսզի ապրենք այն՝ դարձնելով Աստծուն փառաւորելու, գեղեցիկը, բարին, սէրը մեր կենսակերպի մէջ ցոլացնելու մի արժէքաւոր հնարաւորութիւն: Մայր Թերէզա Կալկաթացին ասում էր. «Կեանքը հնարաւորութիւն է, օգտագործի՛ր»: Բայց հիմնական հարցը այն է, թէ ինչպէ՞ս ենք օգտագործում մեր կեանքը, մեզ ձրիաբար շնորհուած իւրաքանչիւր վայրկյանը. Աստծուն փառաբանելո՞ւ եւ նրան նմանուելո՞ւ, թէ մեր սեփական «ես»-ի շուրջ պարիսպներ կառուցելու եւ ինքներս մե՛զ փառաբանելու համար: Մեր կեանքը մի ձրի նուէր է՝ Տիրոջից ընծայուած, որը, սակայն, պարտաւոր ենք պատասխանատուութեամբ օգտագործել՝ ոչ միայն մեր, այլեւ՝ մերձաւորի օգուտի եւ հոգեւոր աճման համար:

Յիսուս պատմում է, որ երբ մեծահարուստը ասաց իր տնտեսին, թէ այլեւս չի կարող տնտես լինել, սա մի խորամանկ քայլի դիմեց, որպէսզի աշխատանքից զրկուելուց յետոյ չզրկուի նաեւ ուրիշ մարդկանց մօտ աշխատանք գտնելուց. «որպէսզի ընդունեն ինձ իրենց տներում», ասում է տնտեսը եւ կանչելով իր Տիրոջ պարտապաններին, շնորհում է նրանց պարտքերի մի մասը: Ըստ էության, այս տնտեսը դարձեալ վնաս է պատճառում իր Տիրոջը՝ նրա՛ իսկ ունեցուածքով ջանալով իր համար ապահովել հարմարաւետութիւն, սիրուած լինել մարդկանց մօտ: Նա իր տիրոջ պարտապաններին շնորհեց ոչ թէ իր ունեցածը, այլ՝ ուրիշինը: Բայց մեծահարուստը այս իմանալով՝ ոչ թէ աւելի խստութեամբ է պատժում նրան, այլ՝ գովում.

«Եւ տէրը գովեց անիրաւ տնտեսին, որովհետեւ հնարամտութեամբ գործեց, քանի որ այս աշխարհի որդիները աւելի հնարամիտ են, քան լոյսի որդիները իրենց սերնդի մէջ », 16,8:

Բայց ինչու՞ տերը գովեց իր տնտեսին, չէ՞ որ նա խաբել էր իրեն: Հին աշխարհում հնարամտութիւնը, նոյնիսկ անկախ հետեւանքներից, գովաբանւում էր. դա իմաստութեան նշան էր, համարւում էր առաքինութիւն: Սա դարձեալ մարդկային հպարտութեան հետեւանք է, բայց՝ շատ ընդունելի աշխարհի տրամաբանութեան համար: Որոգինէսը բացատրում է,

որ այստեղ «իմաստութիւն» բառը նոյն իմաստով չի օգտագործուում, ինչ որ Աստծոյ իմաստութեան դէպքում: Նա մատնացոյց է անում Ծննդոց գրքում օձի մասին տողերը, թէ օձը բոլոր կենդանիներից աւելի իմաստուն էր: Բայց ինչպէ՞ս օձը օգտագործեց իր իմաստութիւնը. Պատասխանը մէկն է՝ մարդուն կործանելու համար: Իսկ Թովմա Աքվինացին այսպէս է մեկնաբանում այս հատուածը.

«Այս առակը ասուեց, որպէսզի մենք հասկանանք, որ եթէ այդ տնտեսին, որ խաբէութեամբ գործեց, նրա տերը գովեց, որքա՛ն առաւել Աստուած կգովի իր այն ծառաներին, ովքէր ամեն ինչ անում են ըստ իր պատուիրանների», Սբ. Թովմա Աքվինացի, Catena Aurea:

Մարդկանց մօտ սէր եւ հարգանք փնտրելու մէջ, հիրաւի, այս աշխարհի որդիները, որոնց սուրբ հայրերը նաեւ խաւարի, դժոխքի որդիներ են անուանում, շատ աւելի իմաստուն են, միշտ կարողանում են գտնել ուղիներ՝ մարդկանց մօտ փառաբանուելու համար, գիտեն՝ երբ, որտեղ ինչ խոսել, ինչպէս ասել, ինչպէս «բարեգործութիւն» անել եւ ինչ նպատակով, նրանց մոտ ամէն բան մանրակրկիտ հաշուարկուած է: Հին աշխարհի մեթոդներն հիմա աւելի կատարելագործուած են: Նոյնիսկ գրքեր են գրւում այդ մասին:

Բայց Տէր Յիսուս մեզ, որ կոչուած ենք լինել լուսոյ որդիներ, հորդորում է լինել օձերի նման խորագէտ, բայց միամիտ՝ աղաւնիների նման: Միամիտ, այսինքն՝ մէկ մտքով առաջնորդւող, մէկ նպատակի հետեւից վազելով, որ Աստծոյ հետ կատարեալ միութիւնն է՝ հասկանալով, թէ ինչպէս կարող ենք ճիշտ ձեւով օգտագործել Տիրոջից մեզ տրուած կեանքը, բանականութիւնը եւ միւս տաղանդները, որ Տիրոջ ունեցուածքն է՝ շնորհուած մեզ, նաեւ խուսափենք չարի թակարդներից: Սրա համար խորագիտութիւն է պէտք, բայց ոչ՝ բացասական իմաստով, այլ որպէսզի կարողանանք պաշտպանուել օձի խորագիտութիւնից, եւ մեր ունեցուածքը, մեր դրամը, կամ արամէերէն բառով «mammona»-ն, չդարձնենք անիրաւութեան մամոնայ, այլ ծառայեցնենք ի շահ մեր հոգու փրկութեան՝ օգնելով կարիքաւորներին, հասարակաց բարիքի համար:

Սա մարդկային հարաբերութիւնների ճիշտ կառուցման, սոցիալական արդարութեան կարեւորագոյն սկզբունք է:

Յաւիտենական հարկերի տակ ընդունողները ոչ թէ այս աշխարհի մարդիկ են, այլ՝ Յիսուս Ինքը, որ մեզնից ողորմութեան գործեր է խնդրում այս աշխարհի կարիքաւորների միջոցով (Մտթ., 25): Եթէ մենք հաւատարիմ ենք անիրաւ մամոնայի մէջ, մեզ կվստահուի նաեւ ճշմարիտը՝ Աստծոյ հետ յաւիտենական բնակութիւնը, որ ամենամեծ հարստութիւնն է, եւ սա՛ է մերը, մեր յաւիտենական սեփականութիւնը, որի մասին ասում է Յիսուս: «Եթէ օտարինը եղող բանի մէջ հաւատարիմ չեղաք, ձերը ո՞վ կտայ ձեզ», ասում է Յիսուս:

Ուրեմն, հարկ է, որ կեանքում ամենակարեւորը մեզ համար լինի Աստծուն ծառայելը եւ ոչ թէ մեր «ես»-ին, կամ փողին կամ իշխանութեանը, որ անիրաւ մամոնայն է:

Հարկ է, որ մենք, երբեմն օգտագործելով այս աշխարհի տրամաբանութիւնը եւ միջոցները, նորագոյն տեխնոլոգիաները՝ մեր ունեցած դրամով եւ նիւթական հարստութեամբ, նաեւ տաղանդներով օգտակար լինենք կարիքաւորներին, հիւանդներին, ծերերին, երեխաներին: Բայց այսօր օգտագործել աշխարհի միջոցները, տեխոլոգիաները եւ գերի չընկնել դրանց ներքին տրամաբանութեանը շատ դժուար է, ինչպէս գրում է Ֆրանցիսկոս Սրբազան Քահանայապետն իր Laudato si' շրջաբերականում: Այսօրուայ մարդկային հասարակութիւնը ակամայ տրւում է շուկայական հարաբերութիւնների, տեխնոլոգիաների, թուային միջոցների, համացանցի օրինաչափութիւններին եւ ընդհանուր խանդավառութեան մէջ կորցնում է բարոյական արժէքները, կորում է սէրը մերձաւորի հանդէպ, կորում է մերձաւորի հետ անմիջական շփման, ընկերութեան, եղբայրական հարաբերութիւններ զարգացնելու փորձառութիւնը, մարդկային «ես»-ը սկսում է չհաւատալ կայուն արժէքներին, ամեն ինչ սկսում է համարել հարաբերական, սկսում է սխալ ընկալել իր մարդկային ազատութիւնը, շահը, օգուտը, իշխանութիւնը: Տեխնոլոգիաների շնորհիւ մարդուն սկսում է աստիճանաբար թուալ, թէ ինքը կարող է արարել, որոշել մարդկային կեանքի տեսակը, կամ առհասարակ մարդկային կեանքի գոյութեան իրաւունքը, միջամտում է մարդու կենսաբանական զարգացման մէջ, բնական երեւոյթների շղթայի մէջ: Հիշելով անիրաւ տնտեսի մասին առակը՝ մենք պետք է կարողանանք այս ամենի մէջ յստակ զատորոշել չարիքն ու բարիքը, հասկանալ, թէ ինչը կարելի է օգտագործել, ինչը՝ ոչ, ինչն է որ մեզ շեղում է Աստծուց, ինքներս մեզանից, բարոյական արժէքներից եւ հեռու մնալ այդ ամենից: Մենք պէտք է կարողանանք տեխնոլոգիաները, ժամանակակից գիտութեան եւ շուկայական հարաբերութիւնների ընձեռած հնարաւորութիւնները օգտագործել ճիշտ ուղղութեամբ: Այստե՛ղ է, որ պահանջւում է օձի խորագիտութիւնը, բայց՝ պայմանով, որ մեր նպատակները աղաւնու միամտութեամբ ուղղուած լինեն մէկ տեղ՝ դէպի մարդու ամբողջական բարիքը եւ Աստծո արքայութիւնը:

Այս բարդ ընտրութիւնների, վերլուծութիւնների եւ ճակատագրական եզրահանգումների ճամփորդութեան մէջ հարկ է, որ նախ ինքներս մեր մէջ ամեն բան շտկենք՝ ըստ Աստծո կամքի, յստակեցնենք մեր միտքն ու սիրտը եւ ոչինչ չանենք՝ առանց աղօթքի եւ Աստուածամօր բարեխօսութեան, ով միակն է մարդկանցից, որ կարող է սովորեցնել, թէ ինչպէս ճզմել սատանա օձի գլուխը եւ օգտագործել անգամ նրա խայթոցները՝ յօգուտ մեր եւ ուրիշների սրբութեան:

Թերթի հովանավորներ՝

Ամեն. Տ. Տ. Ռաֆայել Պետրոս ԻԱ Կաթողիկոս Պատրիարք Տանն Կիլիկիո Կաթողիկէ Հայոց

«Հայկական Կարիտաս» բարեսիրական
հասարակական կազմակերպություն

Թերթի խմբագիր՝ Տ. Հովսեփ Քհն. Գալստյան՝
Հոգեւոր հովիվ՝ Աշոցքի հայ կաթողիկէների
Հեռ.՝ 0037455698957

Բաժանվում է անվճար

Գյումրի, Հայ Կաթողիկէ Առաջնորդարան,
2022թ.